«ՄԱՄՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՈՎՎԿ

ՀՀ ԱԻՆ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻՈՆԱԼ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ – 2017

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ ԱԻՆ-ի Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան (այսուհետ՝ Ակադեմիա կամ ՃԿՊԱ) ինստիտուցիոնալ հավատարմագրումն իրականացվում է ուսումնական հաստատության նախաձեռնությամբ և նրա կողմից ներկայացված դիմումի հիման վրա: Հավատարմագրման գործընթացը կազմակերպվել և համակարգվել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) կողմից:

Իր գործողություններում ՈԱԱԿ-ն առաջնորդվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով և 2011 թվականի հունիսի 30-ին հաստատված «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» N 959–Ն որոշմամբ:

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը, որը բաղկացած է եղել 4 տեղացի և 1 միջազգային փորձագետներից:

Ինստիտուցիոնալ հավատարմագրումը միտված է ոչ միայն որակի ապահովման արտաքին գնահատմանը, այլև հաստատության կառավարման և կրթական ծրագրերի որակի շարունակական բարելավմանը: Հետևաբար, փորձագիտական խմբի առջև դրված էր երկու խնդիր՝

1) հավատարմագրման նպատակով իրականացնել ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն՝ ՀՀ պետական հավատարմագրման չափանիշներին համապատասխան,

2) որակի բարելավման նպատակով՝ իրականացնել փորձագիտական գնահատում՝ միջազգային զարգացումներին համապատասխանելու և Բարձրագույն կրթության եվրոպական տարածք (ԲԿԵՏ) ինտեգրվելու տեսանկյունից:

Այս զեկույցը պարունակում է ԱԻՆ-ի Ճգնաժամային կառավարման ակդեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների փորձագիտական գնահատման արդյունքները՝ ըստ ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշների և միջազգային փորձագետի գործընկերային գնահատման դիտարկումները՝ ԲԿԵՏ ինտեգրվելու տեսանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 2

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ 4

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 4

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ 11

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 15

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ 15

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ 15

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ 19

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 19

I.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ 21

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 24

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 30

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ 35

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ 40

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ 44

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ 48

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 53

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ 56

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 60

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ . 65

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ 67

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ 69

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 72

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 73

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 74

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՄՓՈՓՈՒՄ

ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԸՍՏ ՀՀ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը[1]: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ առաջին հերթին «ՃԿՊԱ-ն ունի կարևոր դերակատարություն ու պատասխանատվություն ՀՀ ԱԻՆ-ի համակարգում գործող ստորաբաժանումների համար կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերով ուսուցման քաղաքականության մշակման գործում»: ՃԿՊԱ-ն իր առաքելությունն է համարում նաև «ՀՀ ԱԻՆ-ի համակարգում գործող ստորաբաժանումների ոլորտների պահանջներին համապատասխան բարձրագույն մասնագիտական (ՈԱԾ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներով՝ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ) կրթական ծրագրերով մասնագետների պատրաստումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում կրթական, գիտական, մեթոդական, փորձագիտական աշխատանքների, հետբուհական կրթական ծրագրերի, լրացուցիչ և շարունակական կրթության իրականացումը, գիտական և կիրառական հետազոտությունների կատարումը»:

Մինչ 2011 թվականը գործող պետական հավատարմագրման չափանիշների և կարգի համաձայն ՃԿՊԱ-ն հավատարմագրում չի անցել: Հավատարմագրման ներկա գործընթացին ակադեմիան մասնակցել է իր դիմումի համաձայն:

ՃԿՊԱ-ն բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցումն իրականացնում է 7 (Ճգնաժամային կառավարում (մենեջմենթ), Կառավարում, Հրդեհային պաշտպանություն, Պաշտպանությունն արտակարգ իրավիճակներում (մանկավարժություն), Քաղաքացիական պաշտպանություն, Փրկարարական գործ, Տրանսպորտային և հրշեջ փրկարար հատուկ տեխնիկայի շահագործում և սպասարկում), իսկ մագիստրոսական ծրագրով հեռակա ուսուցում՝ 2 (Ճգնաժամային կառավարում, Փրկարարական գործ) մասնագիտություններով: Բակալավրի առկա ուսուցմամբ «Հրդեհային պաշտպանություն» և «Փրկարարական գործ» մասնագիտություններով կրթությունն անվճար է:

Ծրագրերը կառուցված են կրեդիտային հենքով: Դրանց համար չկան հաստատված պետական կրթական չափորոշիչներ: Կրթական ծրագրերի և դասընթացների ծրագրերի նկարագրումը կրթական վերջնարդյունքներով իրականացվել է 2016թ.: Առարկայական ծրագրերում դասավանդման/ուսումնառության և գնահատման մեթոդաբանությունը նկարագրված չէ: Դրական է գնահատվում դասավանդման ավանդական մեթոդների հետ մեկտեղ ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված նոր մեթոդների կիրառումը և ուսանողների գոհ լինելը մեթոդներից: Գործնական մակարդակում կրթական ծրագրերը դեռ վերջնարդյունքներին միտված չեն իրականացվում:

Ուսանող-դասախոս (լրիվ հաստիքային համարժեքով) հարաբերակցությունը 2012-13թթ. եղել է 13.0, նվազել է և ներկայումս կազմում է 11.6: Մինչև 2016-17 ուսումնական տարին հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի (ՊԴԿ) միջին տարիքը եղել է մոտ 50: Վերջին

[1] ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

տարում հիմնական պրոֆեսորադասախոսական կազմը աճել է, իսկ միջին տարիքը կազմում է 49: ՃԿՊԱ-ն իր ՊԴԿ-ն կարողացել է համալրել տարբեր բնագավառների (ակադեմիական, պրակտիկ, ծառայող և քաղաքացիական) մասնագետներով, սակայն դասախոսական կազմի մասնագիտական որակների գնահատման մեխանիզմները դեռևս չունեն անհրաժեշտ հետազդեցությունը. առանձին դեպքերում ցածր գնահատման արդյունքում կատարվել է դասախոսի ժամերի կրճատում, եզակի դեպքում՝ նաև հեռացում: Ակադեմիայի ուսանողները և շրջանավարտները բարձր են գնահատում ՊԴԿ-ի մասնագիտական և անձնային որակները:

Հատկանշական է ԱԻՆ-ի որակյալ փրկարար ծառայողների ներգրավումը դասախոսական աշխատանքներում: Աշխատակազմի կայունացման և երիտասարդացման քայլեր են արվում՝ շրջանավարտներին ներգրավելով դասավանդման և ուսումնաօժանդակ կազմում և այլ բուհեր հայցորդության ուղարկելով: Փորձագիտական խումբը բարձր է գնահատում դասախոսական կազմի ակտիվ մասնակցությունը վերապատրաստումներին միջազգային ծրագրերի շրջանակներում:

Ակադեմիայի առկա ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ձևավորում են ուսումնառության արդյունավետ միջավայր և բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման համար: Չնայած որակի շարունակական բարելավման և կայունության համար դեռևս անհրաժեշտություն կա վերազինելու ակադեմիայի լաբորատոր բազան, Լուսակերտի վարժահրապարակը և ընդլայնելու SS կիրառումը ուսումնական գործընթացում: Ֆինանսական մուտքերը ձևավորվում են պետական ֆինանսավորումից, ուսանողների վարձավճարներից և այլ աղբյուրներից: Բյուջեի ծախսերի բաշխվածության հիմնական մասը կազմում է աշխատավարձը: Ուսանողների փոքր թիվը և ըստ այդմ՝ ուսանող-դասախոս ցածր հարաբերակցությունը ստիպում են ակադեմիային վարել ռեսուրսախնայողական քաղաքականություն:

Ուսանողների հավաքագրման և ընդունելության գործող մեխանիզմները ակադեմիային թույլ են տվել վերջին տարիներին ապահովել ուսանողների կայուն թիվ: Անհանգստացնող է ազատման և վերականգնման ցուցանիշների կտրուկ աճը, որոնց վերահսկման ուղղությամբ բուհը դեռ մեխանիզմներ չի ստեղծել: Ուսանողների կրթական կարիքների վերհանման համար կիրառվող հարցումները դեռ նոր են ներդրվել և բավարար արդյունավետությամբ չեն գործում: Փորձագիտական խումբը դրական է գնահատում ուսանողներին լրացուցիչ խորհրդատվությունների և օժանդակությունների տրամադրման գործող մեխանիզմները և անձնակազմի հասանելիությունը ուսանողներին: Ուսանողներն ընդհանուր առմամբ գոհ են համալսարանական միջավայրից և արժևորում են բուհի ուսանողակենտրոն ուսուցման ձգտումը, սակայն ուսանողական կառույցները ուշադրության և անհրաժեշտ ռեսուրսների կարիք ունեն: Մտահոգիչ է նաև այն, որ վերջին հինգ տարիներին 40-46% են կազմում գործազուրկ շրջանավարտները, իսկ ավարտելուց հետո ուսումը շարունակում են շրջանավարտների 5-10%-ը:

ՃԿՊԱ-ի հետազոտական հետաքրքրությունները ունեն հստակ ոլորտային ուղղվածություն: Սակայն սահմանված հետազոտական նպատակները բավականին հավակնոտ են. Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրմանը ձգտող հաստատության համար չկան դրանց իրականացման հիմք հանդիսացող հստակ պլաններ: Հետազոտությունները ընդհանուր առմամբ կարգավորված չեն: Հետազոտության ոլորտում միջազգայնացման արդյունքները շոշափելի չեն: Ֆինանսական միջոցները հատկացվում են միայն ակադեմիայի հրատարակության գիտական ժողովածուում հետազոտությունների

տպագրման համար, իսկ հետազոտությունները չեն ապահովում որևէ տեսակի ֆինանսական հոսքեր:

Ամբիոնների հետազոտական թեմաներում ուսանողների մասնակցությունը դեռ շատ թույլ է՝ պայմանավորված նաև բուհում իրականացվող գիտահետազոտական աշխատանքների փոքր ծավալով: Բակալավրի ուսանողները գիտահետազոտական ծրագրերում ընդգրկված չեն: Մագիստրոսների հետազոտական աշխատանքները պետք է արտահայտվեն մագիստրոսական թեզերի միջոցով, սակայն առկա են թեզերի թեմաների կրկնություններ վերջին 3 տարիների կտրվածքով, իսկ առանձին դեպքերում աշխատանքները ամբողջությամբ են կրկնվում: 2012-16թթ. ուսանողի համահեղինակությամբ տպագրվել է ընդամենը 1 գիտական հոդված, իսկ ակադեմիայի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված է եղել ընդհանուր 3 մագիստրոս: Փորձագիտական այցի հանդիպումների մասնակից ուսանողների ճնշող մեծամասնությունը տեղյակ չէր ՈԻԳԸ-ի գործունեության մասին:

ՃԿՊԱ-ն կարևորում է միջազգային կապերի ընդլայնումը և բազմազանեցումը կրթական և գիտական ոլորտներում: Միջազգային համագործակցության պայմանագրերը նպաստել են ՊԴԿ-ի և վարչակազմի վերապատրաստումների իրականացմանը և ուսումնական կաբինետների ստեղծմանը: Միջազգային համագործակցության ազդեցությունը ՄԿԾ-ների և կրթական գործընթացի վրա առայժմ զգալի չէ, ուսանողների ու դասախոսների փոխանակային ծրագրերը դեռևս հեռանկարում են, չնայած դրա հնարավորությունը ընձեռող համաձայնագրեր կան: Օտար լեզվի իմացության ցածր մակարդակը միջազգայնացման գործընթացներին խոչընդոտող հիմնական պատճառներից մեկն է:

Գործող կառավարման համակարգը բուհերին բնորոշ և ընդունելի համակարգ է, որն ընդհանուր առմամբ համապատասխանում է ՃԿՊԱ-ի ռազմավարական նպատակներին և խնդիրներին: Կազմակերպական կառուցվածքում ռազմավարական որոշ նպատակների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումների բացակայությունը ազդում է այդ գործընթացների արդյունավետության վրա: Կառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը ապահովվում են փաստաթղթերի հասանելիության, տեղեկատվական ներքին համակարգի և ինտերնետային կայքի միջոցով: Կառավարման համակարգը թույլ է տալիս թե՛ դասախոսներին և թե՛ ուսանողներին դրսևորելու իրենց շահերը կառավարչական գործընթացներում: Ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորման բացակայությունը խզում է կապը ակադեմիայի ֆինանսական քաղաքականության և ռազմավարական զարգացման հետ և ազդում զարգացման արդյունավետության վրա: Որակի ամբողջական կառավարման սկզբունքի ներդրման տեսանկյունից գործընթացների վարչարարության մեջ դեռևս առկա են միայն պլանավորման և մասամբ իրականացման փուլերը:

ՃԿՊԱ-ի որակի ապահովման (ՈԱ) համակարգը դեռևս ներդրման փուլում է և լիարժեք չի իրականացնում իր գործառույթները: ՈԱ կենտրոնը դեռևս չի հավաքագրում բավարար տվյալներ ծրագրերի և այլ մատուցվող ծառայությունների արդյունավետության գնահատման և դրանց որակի մասին հաշվետվողականության ապահովման համար: ՈԱ փաստացի իրականացվող գործընթացները դեռևս չեն ապահովում Ակադեմիայի կողմից սահմանված քաղաքականության իրականացումը: Որոշ շահակիցներ մասնակցում են տարբեր հարցումների, սակայն դրանց հետագա արդյունքների և ազդեցության մասին տեղեկացված

չեն: Գործունակ թիմ ստեղծելու համար ՌԱ կենտրոնի աշխատակիցները հետագա մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք ունեն: Կենտրոնը ապահովված է անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով, որը ձեռք է բերվել ՀԲ դրամաշնորհային ծրագրի շրջանակներում:

Որակի կենտրոնը դեռ քիչ ներդրում ունի Ակադեմիայի գործունեության նկատմամբ շահակիցների վստահության ձևավորման հարցում:

Հաստատության ուժեղ կողմերն են.

1) Մշակված ռազմավարական ծրագիր՝ կից պլան-ժամանակացույցով,
2) Բուհական միջավայրին բնորոշ կառավարման ընդունելի կառուցվածք՝ գործող հստակ հաշվետվողականության մեխանիզմով,
3) Ուսանողների ներգրավվածությունը կառավարման մարմիններում,
4) Բարձրակարգ մասնագիտական պրակտիկ կարողություններ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ,
5) Վարչական և պրոֆեսորադասախոսական կազմի ակտիվ մասնակցություն վերապատրաստումներին միջազգային համագործակցության շրջանակներում,
6) Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման մեխանիզմների առկայություն՝ դասալսումների, ուսանողների հարցման և վարկանիշային թերթիկի համադրմամբ,
7) Միջազգային գիտաժողովների կազմակերպում և հետազոտական արդյունքների հրապարակում ԲՈՀ-ի կողմից հաստատված բուհի գիտական և գիտամեթոդական ժողովածուում,
8) **Ուսումնական պրոցեսը կազմակերպելու համար լսարանային, տեխնիկական, մասնագիտական կաբինետային, գրադարանային, ծրագրային և այլ անհրաժեշտ պայմանների առկայություն,**
9) **Գործունեության թափանցիկության և հրապարակայնության ապահովման ձգտում և այդ նպատակով տարբեր մեխանիզմների կիրառում,**
10) **Գիտելիքի տարածման և հասարակությանը մատուցվող ծառայությունների ուղղությամբ ցուցաբերած մեծ ավանդ և գործնական քայլեր,**
11) Որակի ապահովման հաստատված քաղաքականության և հայեցակարգի առկայություն:

Հաստատության թույլ կողմերն են.

1) Ակադեմիայի ռազմավարական նպատակների և խնդիրների ձևավորման և իրականացման մեջ արտաքին շահակիցների (այդ թվում ԱԻՆ-ի) անբավարար մասնակցություն,
2) Ռազմավարական պլանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման, ռազմավարական ծրագրում սահմանված գնահատման առանցքային ցուցանիշների կիրառման բացակայություն,
3) Կառուցվածքային սխեմայում ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ որոշ ստորաբաժանումների բացակայություն, այդ գործընթացների մասամբ համատեղում այլ աշխատակիցների կողմից հասարակական հիմունքներով,
4) ՀՀ և այլ երկրների հաստատությունների հետ նմանատիպ ծրագրերի շրջանակներում ուսանողների և ՊԴԿ-ի փոխանակման, շարժունության բացակայություն,
5) Առարկայական ծրագրերում վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման/ուսումնառության և գնահատման մեթոդաբանության պակաս,
6) Դասախոսների և ուսանողների թույլ ներգրավվածություն հետազոտական աշխատանքներում, հետազոտական ոլորտում շոշափելի ձեռքբերումների պակաս,

7) Այլ բուհերի հետ համագործակցության շրջանակներում բուն հետազոտական բաղադրիչի բացակայություն,
8) Ֆինանսական պլանավորման բացակայություն ըստ ռազմավարական նպատակների,
9) Կրթական գործընթացում միջազգայնացմանը նպաստող միջավայրի բացակայություն, ՄԿԾ-ների վրա միջազգային համագործակցության ազդեցության պակաս,
10) Որակի ապահովման համակարգի, մեխանիզմների թերի կիրառում, արդյունքների հետագա ազդեցության բացակայություն, ՈԱԿ անձնակազմի մասնագիտական գործիմացության ոչ բավարար մակարդակ, ներքին և արտաքին շահակիցների ներգրավվածության պակաս ՈԱ գործընթացներում:

Փորձագիտական խմբի առաջարկությունները.

Առաքելություն և նպատակներ

1) ՌԾ-ի նպատակները ձևակերպել բուհի վրա ազդող արտաքին գործոնների, նրա հնարավորությունների վերլուծությունների հիման վրա, ներգրավելով արտաքին շահակիցներին,
2) Վերամշակել ՌԾ-ի պլան-ժամանակացույցը, համապատասխանեցնելով ռազմավարական պլանին, և կատարել ռեսուրսների հստակ բաշխում,
3) Հիմնավոր սահմանել ՌԾ-ի առաջնթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները: Իրականացնել ռազմավարական նպատակների իրականացման արդյունավետության վերլուծություն՝ կիրառելով այդ ցուցանիշները,
4) Մշակել առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման և բարելավմանն ուղղված մեխանիզմներ և ընթացակարգեր:

Կառավարում և վարչարարություն

5) Հստակեցնել ակադեմիայի կառուցվածքային սխեման և կառուցվածքը համալրել ռազմավարական նպատակների իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումներով,
6) Իրականացնել ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորում՝ բյուջեն կապակցելով ռազմավարական նպատակների և խնդիրների հետ՝ ռազմավարական պլանի իրագործման ձախողումից խուսափելու համար,
7) Կազմել ռազմավարական պլանից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ հստակ պլաններ ստորաբաժանումների համար և համապատասխան հաշվետվություններ,
8) Վերանայել ակադեմիայի վարչարարությունը՝ ներդնելով որակի կառավարման ՊԻԳԲ սկզբունքը բոլոր գործընթացներում,
9) Ստեղծել ակադեմիայի կրթական ծրագրերի և այլ գործընթացների կառավարման և արդյունավետության գնահատման ու վերլուծության համար հավաքագրվող անհրաժեշտ տեղեկատվական բազա, այն հասանելի դարձնել շահակիցներին,
10) Մշակել շահակիցների տեղեկացվածության գնահատման կառուցակարգեր՝ տրամադրելով տեղեկատվություն ոչ միայն կրթական ծրագրերի բովանդակության, այլև դրանց որակի մասին:

Մասնագիտության կրթական ծրագրեր

11) Հստակեցնել ՄԿԾ-ի և առարկայական ծրագրերի վերջնարդյունքների քարտեզագրումը, ՄԿԾ-ների և առարկայական ծրագրերի նկարագրերը՝ Ակադեմիայում հաստատված կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշին համապատասխան,

12) Նկարագրել գնահատման, դասավանդման և ուսումնառության մեթոդաբանությունը առարկայական ծրագրերում և հիմնավորել դրանց համապատասխանությունը վերջնարդյունքներին,
13) Վերանայել գործնական և պրակտիկ պարապմունքների անցկացման մեթոդաբանությունը՝ ուսանողներին հմտությունների ձևավորման վերջնարդյունքներին հասնելու նպատակով,
14) Ներդնել գրագողության դեմ պայքարի մեխանիզմներ, հստակեցնել մագիստրոսական թեզերի գրախոսման քաղաքականությունը՝ գնահատման օբյեկտիվությունը բարձրացնելու նպատակով,
15) Մշակել բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգեր, իրականացնել բենչմարքինգ համագործակից բուհերի հետ ՄԿԾ-ների բովանդակային համահունչության ապահովման և շարժունությանը նպաստելու համար,
16) Իրականացնել ՄԿԾ-ների իրականացման մշտադիտարկում հաստատված կարգի համաձայն և հստակեցնել համապատասխան մեխանիզմները:

Ուսանողներ

17) Կատարել բուհի ընդունելության և հավաքագրման մեխանիզմների որակական ուսումնասիրություններ՝ գնահատելու կիրառվող քաղաքականության արդյունավետությունը, մշակել ուսանողների ազատման և վերականգնման անկյուն ցուցանիշների վերահսկման մեխանիզմներ, մագիստրատուրայի ընդունելության հստակ չափանիշներ,
18) Ստեղծել ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների կիրառման արդյունքում հետագա բարելավման քաղաքականություն և ընթացակարգեր, որոշումների կայացման վրա դրանց ազդեցության մեխանիզմներ: Իրականացնել ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ,
19) Ուսանողների կարիերային նպաստելու և նաև մատուցվող կրթական ծառայությունների որակը բարձրացնելու նպատակով՝ ձևավորել շրջանավարտների կարիերային նպաստող կառույց՝ տրամադրելով լրացուցիչ ռեսուրսներ: Աշխատաշուկայում շրջանավարտների մրցունակությունն ու աշխատանքով ապահովելու գործընթացները համապատասխանեցնել ՌԾ-ի պլանավորմանը,
20) Մշակել ուսանողների՝ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավելու հստակ կառուցակարգ: Մշակել խրախուսման մեխանիզմներ գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված ուսանողների համար,
21) Ակտիվացնել և հստակեցնել ուսանողական խորհրդի և գիտական ընկերության աշխատանքները՝ կցելով գործունեության համակարգողներ,
22) Իրականացնել ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման վերլուծություններ՝ դրանց հուսալիության և ծառայությունների վրա արդյունքների ազդեցության դուրսբերման նպատակով:

Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ

23) Հստակեցնել ուսումնաօժանդակ կազմի ձևավորման պահանջները՝ սահմանելով կրթական ծրագրին համապատասխան դասախոսական կազմին ներկայացվող մասնագիտական հստակ որակներ,
24) Փոխկապակցել ՊԴԿ-ի գնահատման գործող մեխանիզմները, իրականացնել ընդհանուր որակական վերլուծություններ և դրանց հիման վրա մշակել բարելավման քաղաքականություն,
25) Ակադեմիայում պլանավորված ՊԴԿ-ի վերապատրաստման ծրագրերի հիմքում դնել ներքին և արտաքին գնահատման արդյունքներ՝ կրթական ծրագրերի առաջնահերթ

կարիքներին համապատասխան նպատակայնությունը հիմնավորելու համար, իրականացնել վերապատրաստումների արդյունավետության գնահատում,

26) Մշակել վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման մասնագիտական չափանիշներ և կատարելագործման մեխանիզմներ:

Հետազոտություն և զարգացում

27) Մշակել Ակադեմիայում գիտահետազոտական գործունեության կազմակերպման առանձին ռազմավարություն՝ դնելով առավել հասանելի նպատակներ,
28) Իրականացնել համատեղ հետազոտություններ ամբիոնների կողմից և փոխկապակցել հետազոտական ծրագրերը,
29) Միջազգային համագործակից կառույցների հետ մշակել համատեղ հետազոտական ծրագրեր, ակտիվացնել կիրառական բնույթի հետազոտությունների իրականացումը՝ որպես եկամուտ բերող գործունեություն,
30) Մշակել հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության հստակ մեխանիզմներ՝ ներգրավելով հետազոտական աշխատանքներում նաև ուսանողներին:

Ենթակառուցվածք և ռեսուրսներ

31) Նկարագրել յուրաքանչյուր կրթական ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսները,
32) Մշակել ֆինանսական միջոցների բաշխման առաջնահերթությունների որոշման կառուցակարգեր,
33) Համալրել լաբորատոր բազան և գրադարանային ֆոնդը՝ կրթական ծրագրի պահանջներին համապատասխան,
34) Իրականացնել ակադեմիայում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների գնահատում՝ ՄԿԾ-ների և ռազմավարական ծրագրի իրականացման պահանջներին համապատասխան:

Հասարակական պատասխանատվություն

35) Վերանայել ռեկտորի հաշվետվությունների ձևաչափը՝ այն կապելով ՌԾ-ի խնդիրների հետ և դիտարկելով որպես ՌԾ-ի նպատակների կատարողականի գնահատման մեխանիզմ,
36) Ակադեմիայի կայքը համալրել անհրաժեշտ տեղեկատվությամբ,
37) Մշակել հասարակության հետ հետադարձ կապի, հրապարակայնության կարիքների ուսումնասիրման քաղաքականություն և ընթացակարգեր,
38) Մշակել եղանակներ՝ գնահատելու հասարակության հետ կապերի ձևավորման ուղղությամբ բուհի կիրառած մեխանիզմների արդյունավետությունը և ձեռքբերումները:

Արտաքին կապեր և միջազգայնացում

39) ՃԿՊԱ-ի միջազգայնացմանը նպաստելու նպատակով մշակել առանձին քաղաքականություն, որից կբխեն միջազգայացման հետ առնչվող կառուցվածքային ստորաբաժանումների կոնկրետ աշխատանքային պլանները,
40) Ստեղծել բուհում առանձին ենթակառուցվածք կամ հաստիքային պատասխանատու աշխատակից՝ միջազգայնացման գործընթացների արդյունավետությունը բարձրացնելու համար,
41) Մշակել արտաքին կապերի նպատակայնությունն ու կրթական գործընթացի հետ դրանց կապը ապահովող և գնահատող կառուցակարգեր,

42) Միջազգային համագործակցության շրջանակներում մշակել ուսանողների ու դասախոսների փոխանակային ծրագրեր, դրանց նպաստելու համար ապահովել դասախոսների և ուսանողների օտար լեզվի իմացության բավարար մակարդակ, ակադեմիայի ծրագրերի և գործունեության վերաբերյալ օտար լեզվով տեղեկատվություն կայքէջում:

Որակի ներքին ապահովման համակարգ

43) Իրականացնել որակի ապահովման հաստատված քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատում,
44) Որակի ապահովման գործընթացներում ներգրավել ներքին և արտաքին շահակիցներին,
45) Իրականացնել շահակիցների կարիքների վերհանման մեխանիզմներով ստացված արդյունքների որակական վերլուծություններ,
46) Իրականացնել բուհի որակի ապահովման համակարգի արդյունավետության վերլուծություններ. համակարգը վերանայել և համապատասխանեցնել ակադեմիայի կարիքներին,
47) Ներդնել որակի ապահովման գործընթացների վերաբերյալ թափանցիկություն ապահովող մեխանիզմներ ներքին և արտաքին շահակիցների համար:

ԳՈՐԾԸՆԿԵՐԱՅԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ՝ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻՆ ՄՈՒՀ-Ի ԻՆՏԵԳՐՎԵԼՈՒ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

Միջազգային փորձագետը համոզմունք է հայտնում, որ փորձագիտական ընդհանուր զեկույցի այս մասը օգտակար կլինի Ճգնաժամային կառավարման ակադեմիայի և նրա շահակիցների համար՝ հաստատության գործունեության միջազգայնացման և շարունակական զարգացման տեսակետից:

Դիտարկումներ

I. Առաքելությունը և նպատակները.

Անկասկած առավելություն եմ համարում ՀՀ ԱԻՆ-ի Ճգնաժամային կառավարման ակադեմիայի նպատակների, առաքելության և կանոնադրության համընկնումը: Ակադեմիան իրականացնում է մասնագիտացված ծրագրեր և պատրաստում հասարակության մեջ պահանջված մասնագետներ:

Սակայն հարկ է նշել բուհում փաստաթղթերի արտաքին և ներքին շրջանառության մշակույթի բացակայությունը, պլանավորման և հաշվետվությունների թերզարգացած համակարգը: Ենթակայության կառուցվածքը ստեղծված է, բայց պլանավորման և հաշվետվության գործընթացում համակարգային մոտեցումը ներկայումս բացակայում է:

II. Կառավարումը և վարչարարությունը.

Ակադեմիայի ուժեղ կողմ է ղեկավարության, պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների միջև ստեղծված և արդյունավետ գործող փոխազդեցության համակարգը, բուհում արդյունավետ գործում է այդ մեխանիզմը: Ուսանողական ընկերությունն արտահայտում է իր կարծիքը, դասախոսական կազմը շեշտադրումներ է անում ուսումնական գործընթացում, որպես արդյունք նրանք հնարավորություն ունեն ազդելու Ակադեմիայի վարչակազմի որոշումների և քաղաքականության վրա:

III. Կրթական ծրագրեր.

Կրթական ծրագրերը համապատասխանում են Ակադեմիայի առաքելությանը: Անհատական մոտեցումն ապահովված է: Սակայն վարչակազմի և դասախոսների հետ

զրույցները ցույց տվեցին, որ բուհում շուկայի պահանջների և կրթական ծրագրերի տեսանկյունից թույլ է զարգացած մոնիթորինգը, արդյունավետության և բարելավման գնահատումը: Չկան արտաքին գրախոսումներ, չկան ՀՀ ԱԻՆ-ի հետ համատեղ մշակված կրթական ծրագրեր, ինչը կարող էր հղումային կետեր հանդիսանալ մասնագետների պատրաստման գործընթացում:

IV. **Ուսանողները.**

Ակադեմիայում սահմանված են և հստակ գործում են ուսանողների ընդունելության, ընտրության և ուսուցման մեխանիզմները: Բուհն ապահովել է ուսանողների՝ լրացուցիչ դասընթացներ և խորհրդատվություն ստանալու հնարավորությունը, նրանց իրավունքների պաշտպանությունը: Այսօրվա դրությամբ բացակայում են կրթական և խորհրդատվական ծառայությունների որակի գնահատման մեխանիզմները, ինչպես նաև թույլ է ներկայացված գիտական ոլորտում ուսանողների աջակցման մեխանիզմը:

V. **Դասախոսական և ուսումնաօժանդակ անձնակազմը.**

Անկասկած առավելություն եմ համարում, որ ՀՀ ԱԻՆ-ի ճգնաժամային կառավարման ակադեմիան օժտված է պրոֆեսիոնալ դասախոսական կադրերով, որոնցից դասախոսների ընդհանուր թվի մեծ մասը բուհում իրականացվող ծրագրերի ուղղություններով գործնական աշխատանքային փորձ ունեցող անձիք են: Բացի փրկարարական ծառայության մասնագիտությունը, որի ՊԴԿ-ի ընտրման քաղաքականությունն ու ընթացակարգերը հաստատված են նախարարի հրամանով, մյուս մասնագիտությունների համար սահմանված չեն պրոֆեսորադասախոսական կազմի և ուսումնաօժանդակ անձնակազմի ընտրման քաղաքականությունն ու ընթացակարգը: Չկան ՊԴԿ-ին ուղղված որակավորման հստակ պահանջներ, հիմնված բուհի կրթական ծրագրերի իրականացման պահանջների վրա: Չկա ՊԴԿ-ի աջակցության և գնահատման մշակված ընթացակարգ:

VI. **Հետազոտությունը և զարգացումը.**

Ակադեմիայի ռազմավարական ծրագրում շեշտադրված է գիտահետազոտական աշխատանքների իրականացումը: Ռազմավարական խնդիրը դրված է: Ներկա պահին բուհում բացակայում է տվյալ խնդրի իրագործումը: Առաջին հերթին այն պատճառով, որ բացակայում են գիտահետազոտական աշխատանքների ապահովման համար անհրաժեշտ ռեսուրսները. նյութական (տեխնիկական), ֆինանսական և խթանող:

Հաստատված չէ գիտահետազոտական աշխատանքի և դասախոսի, դասախոսի և ուսանողի փոխազդեցության մեխանիզմները: Այդ իսկ պատճառով բացակայում է Ակադեմիայի կրթական գործընթացում գիտահետազոտական աշխատանքների ներդրումը:

VII. **Ենթակառուցվածքը և ռեսուրսները.**

Ակադեմիայում ձևավորված է կրթական միջավայրը: Ենթակառուցվածքը և ռեսուրսները մասամբ ծածկում են մասնագիտացումների և պատրաստման ուղղությունների իրականացման համար նվազագույն անհրաժեշտ կարիքները: Սակայն սահմանափակ ֆինանսական միջոցներն ու ֆինանսների բաշխման քաղաքականությունը թույլ չեն տալիս ամբողջովին ապահովել գործնական և լաբորատոր աշխատանքների որակյալ անցկացումը, առաջին հերթին մասնագիտացման առարկաներով: Ուսանողների և դասախոսների հետ զրույցները ցույց տվեցին, որ Ակադեմիան ունի հիմնականում բավարար նյութատեխնիկական ապահովվածություն, իսկ որոշ դեպքերում անհրաժեշտ սարքավորումների շատ սահմանափակ քանակություն: Օրինակ, բուհում չկա քիմիական լաբորատորիա, ջրային օբյեկտների վրա փրկարարության առարկայի գործնական պարապմունքների ժամանակ 25 հոգուց բաղկացած խմբին տրվում է մեկ ակվալանգ, մեկ հիդրոկոստյում:

Ներկայումս միջոցները բավարար չեն ռազմավարական զարգացման համար:

VIII. **Հասարակական պատասխանատվությունը.**

Կարծում եմ, որ Ակադեմիան ունի հաշվետվության պարզ քաղաքականություն: Սակայն հաշվետվությունները թափանցիկ և հասանելի չեն հասարակությանը արտաքին գնահատման համար. այսպես, ձևավորված է ներքին գնահատման միայն մեկ մեխանիզմ՝ հարցումներն աշխատողների և ուսանողների հետ: Կազմակերպության կայքը գտնվում է մշակման փուլում: Ակադեմիան չունի զրուցարան, ֆորումները, համաժամանակյա և տարաժամանակյա հաղորդակցությունը բացակայում են:

IX. Արտաքին կապերը և միջազգայնացումը.

Ակադեմիայում միջազգայնացումն ու արտաքին կապերը հիանալի աշխատում են միայն որակավորման բարձրացման և վերապատրաստման ծրագրերով: Բակալավրի և մագիստրատուրայի ծրագրերով ուսանողների փոխանակում դեռևս չկա: Բուհում ձևավորված չէ միջազգային համագործակցության համակարգը: Մշակված չեն պլանավորման փաստաթղթերը, հետևաբար, ներկայացված չէ գնահատման համակարգը:

Միջազգայնացման և արտաքին կապերի ստեղծման համար անհրաժեշտ է օտար լեզուների իմացություն: Պաշտոնապես արդեն երկու տարի բուհի դասախոսների համար անց են կացվում օտար լեզվի դասընթացներ: Սակայն բացակայում է մուտքային ստուգումը, ներկայացված չէ լեզվի ուսուցման դինամիկայի վերլուծությունը, չկա եզրափակիչ հսկողություն և մոտիվացիա, ինչպես օտար լեզուն ուսուցանողների, այնպես էլ այն սովորողների համար:

X. **Որակի ներքին ապահովման համակարգը.**

Կարծում եմ, որ ներկա պահին Ակադեմիայի որակի ապահովման ներքին համակարգը ներդրման փուլում է: Ակադեմիաում կա ստորաբաժանում, որը պատասխանատու է կրթական գործընթացի վարման որակի համակարգի համար՝ Որակի ապահովման կենտրոնը: Մշակվել են մի շարք փաստաթղթեր՝ ձեռնարկ, հայեցակարգ, կարգեր և այլն, որոնք դեռ չեն գործում. բացակայում է կրթական փաստաթղթերի կազմման միասնական մոտեցումը: Կենտրոնն ամբիոններին մեթոդական օգնություն չի ցուցաբերում: Բացակայում է կրթական գործունեության վարման վերլուծությունը, մոնիթորինգներ չեն անցկացվում, չկա որակի ներքին համակարգի գնահատման չափանիշների և գնահատման վերաբերյալ համակարգված մոտեցում:

«Ճգնաժամային կառավարում», «Փրկարարական գործ» (կրթության աստիճանը՝ բակալավր, մագիստրատուրա), «Հրդեհային պաշտպանություն», «Քաղաքացիական պաշտպանություն» (կրթության աստիճանը՝ բակալավր) ուղղություններով ուսումնական պլանների վերլուծությունը ցույց տվեց.

1) **դասախոսական, սեմինարական և գործնական դասերի ժամերի հարաբերությունը** բավարար է որակյալ մասնագետի պատրաստման համար,

2) անհանգստություն է առաջացնում կրթական գործընթացի նյութատեխնիկական ապահովվածությունը Ակադեմիայում. ավելի կոնկրետ՝ թույլ լաբորատոր բազան, ինչի կապակցությամբ այլ բուհերի հետ լրացուցիչ պայմանագրեր են կնքվել գործնական դասընթացներն անցկացնելու համար լաբորատորիաների տրամադրման վերաբերյալ: Բացի այդ, ունեցած սարքավորումների քանակը (ջրասուզական պատրաստման հետ կապված առարկաներով) չի համապատասխանում ուսանողների թվին: Համապատասխանաբար, ուսանողները չեն ստանա այն ուսումն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ են ՀՀ-ի ԱԻՆ համակարգի մասնագետներին,

2) բակալավրատում ուսանողների առաջին պրակտիկան անցնում է երրորդ կուրսում, մագիստրատուրայում՝ ուսման վերջին տարում:

Կարծում եմ, որ ՀՀ ԱԻՆ-ի Ճգնաժամային կառավարման ակադեմիայի կողմից որակյալ մասնագետների պատրաստման համար պետք է ավելացնել պրակտիկ դասընթացների

ընդհանուր թիվը և պրակտիկան կրթական գործընթացի մեջ ընդգրկել ուսման առաջին կուրսից:

Օրինակ.

1 կուրս – 2 շաբաթ ուսումնական պրակտիկա,

2 կուրս – 4 շաբաթ արտադրական պրակտիկա,

3 կուրս – 4 շաբաթ արտադրական պրակտիկա,

4 կուրս – 4 շաբաթ նախադիպլոմային պրակտիկա.

Բավականաչափ լավ չեն մշակված պրակտիկայի կազմակերպման փաստաթղթերը և մեթոդական ուղեցույցները: Օրինակ, «Հրդեհային պաշտպանություն» առարկայի գծով չկա արտադրական պրակտիկայի ծրագիր: Ձեր ուշադրությունը հրավիրում եմ այն փաստին, որ դասացուցակը չի համընկնում պրակտիկայի պլանի հետ:

Օրինակ, «Հրդեհային պաշտպանություն» առարկայի գծով պլանում բացակայում են պրակտիկայի անցկացման հետևյալ վայրերը. օդանավակայան, փրկարար ծառայություն, գիտական լաբորատորիա, հիդրոէլեկտրակայան, մետրո: Իսկ պրակտիկայի ժամանակացույցում այդ վայրերը նշված են:

«Փրկարար գործ» առարկայի գծով պրակտիկայի օրագրում նշված է ազգային պատկերասրահը, իսկ ժամանակացույցում՝ ոչ: Օրինակ, 11.03.2017թ. ուսանողների պրակտիկայի հաշվետվությունում նշված է պրակտիկայի վայրը՝ ազգային պատկերասրահ, իսկ ժամանակացույցում այն բացակայում է: Հակառակ իրավիճակն է 31.03.2017-ին. հաշվետվությունում և ժամանակացույցում պրակտիկայի անցկացման վայրն է հիդրոէլեկտրակայանը, իսկ պլանում՝ ոչ:

Ձեր ուշադրությանն եմ հրավիրում այն փաստը, որ պետք է հետևել պրակտիկայի անցկացման համար օրացույցում նշված ժամկետներին: Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրություններն ու ուսանողների և դասախոսների հետ զրույցները ցույց տվեցին, որ նշված ժամանակահատվածում տեղի են ունենում մեկանգամյա այցելություններ տարբեր վայրեր, իսկ մնացած ժամանակ ուսանողները նկարագրում են այն, ինչ տեսել են: Սովորողների մոտ պատշաճ չափով պրակտիկ հմտություններ ու կարողություններ չեն ձևավորվում, ինչը բացասական կարող է անդրադառնալ ՀՀ ԱԻՆ համակարգի մասնագետների որակյալ պատրաստման վրա:

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրությունը

25.07.2017թ.

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԿԱԶՄԸ

ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների արտաքին գնահատումն իրականացվել է հետևյալ փորձագիտական խմբի կողմից՝

1) **Գագիկ Քթրյան** – ՀՀ ՊՆ մարշալ Ա.Խանփերյանցի անվ. ռազմական ավիացիոն համալսարանի որակի ապահովման և վերլուծության բաժնի պետ, ֆիզ.մաթ. գիտ. թեկն., փորձագիտական խմբի ղեկավար,
2) **Սոնա Սարգսյան** – Երևանի պետական բժշկական համալսարանի ԼՕՌ հիվանդությունների ամբիոնի դասախոս, բժշկական գիտ. թեկնածու, դոցենտ,
3) **Սուրեն Դանիելյան** - ՖԿՀՊԻ կիրառական մարզաձևերի ամբիոնի դոցենտ, մանկ.գիտ.թեկն., փրկարարական պատրաստության գլխավոր մասնագետ,
4) **Յուլիա Դուբրովսկայա** – ՌԴ Ս.Պետերբուրգի հակահրդեհային ծառայության պետական համալսարանի ուսումնա-մեթոդական բաժնի պետի տեղակալ, ՌԴ ԿԳՆ կրթության եւ գիտության վերահսկողության դաշնային ծառայության հավատարմագրված փորձագետ մանկ.գիտ.թեկն., դոցենտ,
5) **Միշա Թադևոսյան** – ՀՊՄՀ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող:

Փորձագիտական խմբի աշխատանքները համակարգել է ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրման բաժնի ղեկավար Անուշավան Մակարյանը:

Թարգմանությունը կատարել են Հայաստանի պետական լեզվահասարակագիտական համալսարանի որակի կենտրոնի համակարգող Անի Մազմանյանը և Հայ-ռուսական համալսարանի շրջանավարտ Արփինե Հախվերդյանը:

Փորձագիտական խմբի բոլոր անդամները, այդ թվում թարգմանիչներն ու համակարգողը ստորագրել են անկախության և գաղտնիության համաձայնագրեր:

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Դիմում պետական հավատարմագրման համար

ԱԻՆ ՃԿՊԱ-ն դիմել է ինստիտուցիոնալ հավատարմագրման համար 2016թ. դեկտեմբերի 12-ին՝ ՈԱԱԿ-ին ներկայացնելով դիմումը, լիցենզիայի և դրա հավելվածների կրկնօրինակները:

ՈԱԱԿ-ի քարտուղարությունը ստուգել է դիմումի փաթեթի համապատասխանությունը ՈԱԱԿ-ի պահանջներին՝ դիմումում լրացված տվյալները և կից փաստաթղթերը:

2017թ. հունվարի 18-ին, բուհի դիմումն ընդունելու մասին որոշման հիման վրա, ստորագրվել է պայմանագիր ՈԱԱԿ-ի և ԱԻՆ ՃԿՊԱ-ի միջև: Կազմվել և հաստատվել է պայմանագրի հավելված հանդիսացող հավատարմագրման գործողությունների ժամանակացույցը:

Նախապատրաստական փուլ

ՈԱԱԿ-ի ինստիտուցիոնալ և ծրագրային փորձաքննության բաժնի կողմից առանձնացված փորձագիտական խմբի նախնական ընդլայնված կազմը համաձայնեցվել է Հավատարմագրման հանձնաժողովի հետ, որից հետո անդամները ստորագրել են խմբի կազմում աշխատելու և շահերի բախումների բացառման մասին համաձայնագիր: Այնուհետև փորձագիտական խմբի կազմը համաձայնեցվել է բուհի հետ՝ պահպանելով Հավատարմագրման կարգի և փորձագիտական խմբի ձևավորման ՈԱԱԿ պահանջները. նրանց հետ կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագրեր՝ գաղտնիության մասին հավելվածով:

Փորձագիտական խումբը անցել է թվով 5 վերապատրաստումների փուլ՝ հետևյալ թեմաներով.

1. ՀՀ հավատարմագրման կարգը, չափանիշները և չափորոշիչները,
2. Փորձագիտական խմբի անդամների հիմնական գործառույթները,
3. Նախնական գնահատումը որպես փորձագիտական զեկույցի նախապատրաստման փուլ, զեկույցին ներկայացվող հիմնական պահանջները
4. Փաստաթղթերի և ռեսուրսների ուսումնասիրության մեթոդաբանությունը,
5. Հանդիպումների անցկացման և հարցապնդումների էթիկան և տեխնիկան:

2017թ. մարտի 17-ին ինքնավերլուծության զեկույցը նախնական գնահատման համար տրամադրվել է փորձագիտական խմբին, որի կազմը հաստատվել է ՈԱԱԿ տնօրենի հրամանով 2017թ. մարտի 17-ին: Գնահատումն իրականացվել է 2016թ. մարտի 18-ից մինչև մայիսի 12-ն ընկած ժամանակահատվածում: Խումբը պարբերական հանդիպումներ է ունեցել՝ քննարկելու բուհի ինքնավերլուծությունը և կից հավելվածների փաթեթը: Արտասահմանցի փորձագետի կողմից վերհանված խնդիրները խմբի ղեկավարի կողմից ներառվել են միասնական նախնական գնահատման հաշվետվության տեքստում: Արդյունքում դուրս են բերվել այցի ժամանակ պարզաբանման ենթակա խնդիրները և որոշվել են հանդիպումների թիրախային խմբերը:

Գործընթացի համակարգողը, խմբավորված ուսումնասիրման ենթակա խնդիրների և հարցերի հիման վրա, փորձագիտական խմբի ղեկավարի հետ կազմել է փորձագիտական այցի ժամանակացույցը: Ժամանակացույցում ներառվել են հանդիպումներ փորձագետների կողմից նախատեսվող բոլոր խմբերի հետ, բաց և փակ հանդիպումներ, փաստաթղթերի ուսումնասիրություն և ռեսուրսների դիտարկումներ, այցելություններ բուհի կառուցվածքային ստորաբաժանումներ և այլն:

Հիմնական խնդիրների և ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի առանձնացումից հետո, փորձագիտական խումբը հստակեցրել է հանդիպումների ժամանակ քննարկվող խնդիրները: Պարբերաբար կրկնվող հանդիպումների ընթացքում քննարկվել են յուրաքանչյուր չափորոշչի վերաբերյալ հարցադրումները և կազմվել փորձագիտական խմբի նախնական այցի փաթեթը: Փաթեթը պարունակում էր հանդիպումների պլան-ժամանակացույցը ուսումնասիրման և պարզաբանման ենթակա հարցերը՝ ըստ թիրախային խմբերի և այն լրացուցիչ փաստաթղթերի ցանկը, որոնք անհրաժեշտ էր ուսումնասիրել փորձագիտական այցի ընթացքում: Հաստատության ներկայացրած հաստիքացուցակից ընտրվել են դասախոսական կազմի այն անդամները, ում հետ պետք է տեղի ունենար հանդիպում: Բակալավրատի ուսանողները փորձագիտական խմբի կողմից ընտրվել են լսարաններից՝ պատահականության սկզբունքով, իսկ հեռակա բաժնի բակալավրատի և մագիստրատուրայի ուսանողները ընտրվել են հաստատության տրամադրած ցանկերից:

Բուհի ինքնավերլուծությունը

ԱԻՆ ՃԿՊԱ-ն ինքնավերլուծությունը սկսել է իրականացրել 2013թ. «Որակի ներքին ապահովման ներբուհական համակարգի ներդրման կամ դրա հետագա բարելավման» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Սա ինքնավերլուծության բուհի երկրորդ փորձն է:

Ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը և հավելվածների անգլերեն և հայերեն փաթեթները ներկայացվել են ՈԱԱԿ 2017թ. փետրվարի 27-ին: ՈԱԱԿ-ի համակարգողն ուսումնասիրել է ինքնավերլուծությունը՝ Հավատարմագրման կարգով սահմանված տեխնիկական պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով: Համակարգողի դրական կարծիքի հիման վրա 2017թ. մարտի 3-ին կայացվել է ինքնավերլուծությունը ՈԱԱԿ-ի կողմից ընդունելու որոշում:

Ընդհանուր առմամբ, քննադատական մոտեցմամբ գրված ինքնավերլուծության զեկույցը փորձագիտական խումբը համարեց օգտակար փաստաթուղթ՝ ԱԻՆ ՃԿՊԱ-ի մասին տեղեկատվություն ձեռք բերելու և կենտրոնի հետ քննարկումներ կազմակերպելու համար: Այնուամենայնիվ, զեկույցի որոշ հատվածներ բացակայում էին կամ բավականաչափ հստակ չէին, և հանդիպումների ընթացքում լրացուցիչ պարզաբանման անհրաժեշտություն ունեին:

Նախնական այց

2017թ. մայիսի 9-ին համակարգողը փորձագիտական խմբի ղեկավարի հետ այցելել են կենտրոն՝ վերջնականացնելու այցի ժամանակացույցը[2]: Դիտարկվել են խմբին տրամադրվող սենյակը, հանդիպումների դահլիճը և տեխնիկական միջոցները: Ակադեմիային ներկայացվել են ուսումնասիրման ենթակա փաստաթղթերի ցանկը, ստորաբաժանումներն, ուր ցանկանում են այցելել փորձագետները: Ակադեմիայի ռեկտորի և կոնտակտային անձի հետ քննարկվել են այցի կազմակերպչական և տեխնիկական ապահովվածության, ինչպես նաև հանդիպումների մասնակիցների վարքագծի և էթիկայի նորմերի վերաբերյալ հարցեր:

Փորձագիտական այց

Ժամանակացույցով նախատեսված այցին նախորդող օրը՝ մայիսի 14-ին փորձագիտական խմբի բոլոր անդամները հավաքվել են ՈԱԱԿ-ում խմբի փակ հանդիպմանը՝ ըստ նախօրոք մշակված օրակարգի: Հանդիպման ընթացքում փորձագիտական խումբն իր նախնական տպավորություններն է փոխանակել զեկույցի վերաբերյալ, քննարկել հաստատության ուժեղ և թույլ կողմերը, վերջնականացրել դուրս բերված հիմնական հարցերի/խնդիրների ցանկը, որոշել յուրաքանչյուր չափանիշին վերաբերող հարցերի պարզաբանման պատասխանատուին, ինչպես նաև քննարկել հանդիպումները՝ ըստ առանձին թիրախային խմբերի:

Այնուհետև փորձագիտական խմբի անդամները քննարկել են գնահատման սանդղակը, որը ներառում է երկու մակարդակ՝ 1)**բավարարում/համապատասխանում է** չափանիշի պահանջներին, 2) **չի բավարարում/չի համապատասխանում** չափանիշի պահանջներին:

Փորձագիտական այցը տեղի է ունեցել 2017թ. մայիսի 15-18-ն ընկած ժամանակահատվածում: Այցի ծրագրով նախատեսված բոլոր հանդիպումները կայացել են ըստ պլանի /ժամանակացույցը կցվում է/:

Այցը մեկնարկել և ավարտվել է Ակադեմիայի ռեկտորի հետ հանդիպումներով: Հանդիպումներ են տեղի ունեցել ԱԻՆ-ի ներկայացուցիչների, ստորաբաժանումների ղեկավարների, ամբիոնի վարիչների, ինքնավերլուծություն իրականացրած աշխատանքային խմբի, պրոֆեսորադասախոսական և ուսանողական կազմերի, շրջանավարտների, գործատուների ներկայացուցիչների հետ: Փորձագիտական խումբը հանդիպման **մասնակիցներին ընտրել է պատահականության սկզբունքով: Ժամանակացույցով նախատեսված բաց հանդիպմանը Ակադեմիայի ներկայացուցիչներից ոչ ոք չի գրանցվել:**

Բացի տարբեր թիրախային խմբերի հետ հանդիպումներից, այցի ընթացում փորձագիտական խումբը կատարել է փաստաթղթերի ուսումնասիրություն[3] և ռեսուրսների դիտարկում[4]:

Փորձագիտական խումբը բարձր է գնահատում հանդիպման մասնակիցների բաց քննարկումները:

Տարբեր հանդիպումների ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փաստաթղթերի ուսումնասիրության և դիտարկումների հիմնական արդյունքներն ամփոփվել են ամեն օրվա վերջում և այցի ավարտին կազմակերպված ամփոփիչ հանդիպման ժամանակ: Փորձագիտական խումբը քննարկել է հիմնական արդյունքները և եկել ընդհանուր համաձայնության նախ հավատարմագրման չափորոշիչների, հետո նաև չափանիշների պահանջների բավարարման վերաբերյալ: Ամփոփիչ փակ հանդիպման ժամանակ չափանիշների բավարարման կամ չբավարարման վերաբերյալ եզրահանգումները և վերջնական եզրակացությունները բաց քննարկման միջոցով համաձայնեցվել են խմբի բոլոր անդամների հետ՝ կիրառելով կոնսենսուսի եղանակը:

---

[2] ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

[3] ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

[4] ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Փորձագիտական զեկույց

Այցից հետո փորձագիտական խմբի ղեկավարը և համակարգողը պատրաստել են հավատարմագրման զեկույցի նախնական տարբերակը: Փորձագիտական խմբի բոլոր անդամներն իրենց ներդրումն են ունեցել զեկույցի յուրաքանչյուր չափորոշչի փաստերի, դատողությունների և գնահատականի վերաբերյալ, ինչպես նաև արձագանքել են ամբողջական տարբերակին: Փորձագետների մեկնաբանությունները հաշվի են առնվել զեկույցի նախնական տարբերակի ամփոփման ժամանակ:

Միջազգային փորձագետը պատրաստել է իր եզրակացությունը և գործընկերային գնահատման առանձին կարծիք: Երկու փաստաթղթերն էլ թարգմանվել և տրամադրվել են փորձագիտական խմբի ղեկավարին: Միջազգային փորձագետի կարծիքի և մոտեցումների զեկույցում ներառելու պատասխանատվությունը դրվել է խմբի ղեկավարի և համակարգողի վրա: Գործընկերային գնահատման կարծիքը ամբողջությամբ է ներառվել զեկույցի տեքստում: Փորձագիտական խմբի տեղացի բոլոր անդամների կողմից հավանության արժանացած ամբողջականացված նախնական զեկույցը թարգմանվել և ուղարկվել է միջազգային փորձագետին: Նրա դիտողությունների հիման վրա նախնական զեկույցը վերախմբագրվել է, և ներկայացնում է գնահատման հիմնական արդյունքները, դատողությունները և խորհրդատվությունը:

Նախնական զեկույցը ներկայացվել է ԱԻՆ ՃԿՊԱ-ին 2017թ. հունիսի 23-ին:

Զեկույցի վերաբերյալ իր դիտողություններն ու մեկնաբանություններն Ակադեմիան ուղարկել է ՈԱԱԿ 07.07.2017թ.: Բուհն իր դիտողություններն ու մեկնաբանությունները ներկայացրել է հայերեն լեզով, որոնք տրամադրվել են տեղացի միջազգային փորձագետներին: Միջազգային փորձագետի հետ կազմակերպվել է պատասխանի քննարկում առցանց եղանակով, և նրա կարծիքը խմբի ղեկավարը ներառել է պատասխանի մեջ: 2017թ. հուլիսի 14-ին ՈԱԱԿ-ը կազմակերպել է բուհի և փորձագիտական խմբի ներկայացուցիչների հանդիպում, որի ժամանակ էլ ներկայացվել է խմբի պատասխանը: Հաշվի առնելով բուհի մեկնաբանությունները՝ փորձագիտական խումբը կազմել է զեկույցի վերջնական տարբերակը, որը խմբի կողմից հաստատվել է 25.07.2017թ.:

Համակարգողի ստորագրությունը

25.07.2017թ.

ԳՆԱՀԱՏՈՒՄ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՀԱՄԱՌՈՏ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՄՈՒՀ-Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պատմություն: ՀՀ ԱԻՆ ճգնաժամային կառավարման պետական ակադեմիան հիմնադրվել է Հայաստանի երրորդ Հանրապետության ստեղծման տարիներին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համաձայն, որպես կադրերի վերապատրաստման ինստիտուտ, այնուհետև վերանվանվել արտակարգ իրավիճակների վարչության ճգնաժամային կառավարման ինստիտուտ: ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 29-ի No 1055-Ն որոշման համաձայն այն վերանվանվեց «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

1993թ.-ից սկսած իրականացվել են հանրապետության կառավարման մարմինների ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստման առաջին դասընթացներ, ներդրվել ճառագայթային պաշտպանության դասընթացի ծավալուն ծրագիր և ռադիոհաղորդումների շարք, իրականացվել բնակչության զանգվածային ուսուցում ճառագայթային պաշտպանության հարցերով: 2010թ.-ին ՀՀ կառավարության կողմից ակադեմիան, որպես տարածաշրջանային հեռավար ուսուցման կենտրոն ճանաչելու վերաբերյալ որոշման նախագիծն ընդունվել է ի գիտություն:

Ակադեմիան իր հիմնական առաքելությունն է համարում. «գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումը կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում, անվտանգության մշակույթի ձևավորումը»:

Ակադեմիան իր գործունեությունը իրականացնելիս առաջնորդվում է 2014-19թթ. Ռազմավարական ծրագրով և դրա իրականացման պլան-ժամանակացույցով: Ինքնավերլուծության, ռազմավարական ծրագրի և այլ փաստաթղթերի մեջ սահմանված են բազմաթիվ դրույթներ, որոնք արտացոլում են ակադեմիայի ձգտումներն ու հավակնությունները գործունեության տարբեր ոլորտներում:

Կրթություն: Ակադեմիան իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր՝ բակալավրի և մագիստրոսի որակավորման աստիճանների շնորհմամբ: Բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցումն իրականացնում է 7, իսկ մագիստրոսական ծրագրով հեռակա ուսուցում՝ 2 մասնագիտություններով: Բարձրագույն մասնագիտական կրթությունն իրականացնում է արտակարգ իրավիճակների և ճգնաժամային կառավարման ֆակուլտետը, որի կազմում առկա են 4 ամբիոններ և 4 մասնագիտական ցիկլեր:

Ակադեմիան իր կրթական ծրագրերով փորձում է **«թողարկել համապատասխան որակավորում ունեցող, գիտելիքներով ու անհրաժեշտ կարողություններով օժտված, մասնագիտական խնդիրներ լուծող և համալիր կոմպետենցիաների տիրապետող մրցունակ մասնագետներ ՀՀ ԱԻՆ համակարգում գործող ստորաբաժանումների ոլորտների պահանջներին համապատասխան և նպաստել քաղաքացիական պաշտպանության ոլորտի զարգացմանն ու կայացմանը, ծառայում արտակարգ իրավիճակներից անվտանգության միջավայրի ձևավորմանը, դրանց խնդիրների լուծմանն ու բարելավմանը, իրականացնում ՀՀ ԱԻՆ ստորաբաժանումների համար կարևոր նշանակություն ունեցող մի շարք գործընթացների կադրային ապահովում»:** Ակադեմիան իր առջև նպատակ է դրել «մասնագիտությունների կրթական ծրագրերն արդյունավետ իրականացնելու նպատակով ներգրավել փորձառու, կրթության ոլորտի առաջատար մասնագետներ, բարձր որակավորում ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ՝ նրանց տրամադրելով շարունակական կատարելագործման հնարավորություններ և ժամանակակից ու բարենպաստ աշխատանքային միջավայր»: Ակադեմիայի խնդիրներից է համարում «ֆինանսական, նյութատեխնիկական՝ շենքային և գույքային բաղադրիչների ապահովվածության, ուսումնական գործընթացում նորարարական տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման, ուսումնական միջավայրի պահպանման և արդյունավետ

կառավարման ու բարելավման մեխանիզմների կատարելագործումը՝ սահմանված առաքելության և նպատակների արդյունավետ իրականացման համար»:

Հետազոտություն: Ակադեմիան ռազմավարական խնդիր է սահմանում. «ստեղծել հիմքեր ՈԱՇ պահանջներին համահունչ ակադեմիայում որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ ասպիրանտուրա հիմնելու ուղղությամբ, ներգրավել գիտական հետազոտություններում դասախոսական կազմին, ձգտել ակադեմիայի միջազգային գիտական համագործակցությանը և ինտեգրմանը Եվրոպական հետազոտական տարածքին»: Գիտահետազոտական գործունեության գերակա ուղղություններ են սահմանվել. «ճգնաժամային կառավարման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, տարածաշրջանային, տեխնոլոգիական զարգացումը, տնտեսական և անվտանգությանը, մշակույթի ձևավորման հիմնախնդիրները»:

Միջազգայնացում: Ակադեմիան կարևորում է միջբուհական և միջազգային կապերի զարգացումը և քայլեր է ձեռնարկել ակադեմիայի միջազգայնացման զարգացման ուղղությամբ: Դրա համար ձգտում է. «ընդլայնել և բազմազանեցնել ակադեմիայի միջազգային կապերը կրթական և գիտական ոլորտներում, խթանել ակադեմիայի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել ակադեմիայի արտաքին կապերի համակողմանի զարգացումը»:

Ակադեմիան ձգտում է «գլոբալացման պայմաններում ինտեգրվել միջազգային ուսումնագիտական համակարգին, դառնալ նրա լիարժեք անդամ՝ ներդնելով զարգացած երկրների և առաջատար հաստատությունների փորձը՝ արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության ոլորտում, որպես հաջողության գրավական դիտարկելով միջազգային սերտ կապերի ստեղծումն ու զարգացումը»:

Որակի ապահովում: Ակադեմիան ձգտում է «մշակել և ներդնել ուսուցման որակի գնահատման և ապահովման ներքին համակարգ՝ բարձրագույն կրթության որակի ներքին արժևորման եվրոպական ESG պահանջներին համապատասխան»: Ակադեմիան որակի ապահովման ոլորտում նպատակ ունի. «ներդնել գործունեության արդյունքների և կիրառվող գործընթացների ներքին և արտաքին գնահատման վրա հիմնված որակի ապահովման պաշտոնական, թափանցիկ և վստահելի համակարգ՝ առաջնորդվելով որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներով և ուղենիշներով և ISO 9000-2000 չափորոշիչներով»: Ակադեմիայի համար ռազմավարական խնդիրներ են «մի կողմից ուսուցման որակի բարելավումն առկա ռեսուրսների պայմաններում, իսկ, մյուս կողմից՝ որակի որոշակի շեմի ապահովումը ռեսուրսների օպտիմալ պլանավորման, զարգացման և արդյունավետ օգտագործման միջոցով»:

Փորձագիտական խումբը, գնահատում կատարելիս, առաջնորդվել է **«համապատասխանություն նպատակներին»** սկզբունքով և վերոնշյալ տեղեկատվությունն է դիտարկել որպես բուհի հիմնական հավակնություններ և նպատակներ:

Ի.ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը, որը համահունչ է ՀՀ կրթության որակավորումների ազգային շրջանակին:

Փաստեր

1.1 ՄՈՒՀ-ն ունի նպատակներն ու խնդիրներն արտացոլող հստակ ձևակերպված առաքելություն, որը համահունչ է ՈԱՇ-ին:

Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիայի տեսլականը և առաքելությունը ամրագրված են 2014-2019թթ. զարգացման ռազմավարական ծրագրում (ՌԾ): ՃԿՊԱ-ն իր առաքելությունն է համարում. «ՀՀ ԱԻՆ համակարգում գործող ստորաբաժանումների ոլորտների պահանջներին համապատասխան բարձրագույն մասնագիտական (ՈԱՇ-ի 6-րդ և 7-րդ մակարդակներով՝ բակալավրի և մագիստրոսի որակավորմամբ) կրթական ծրագրերով մասնագետների պատրաստումը, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում կրթական, գիտական, մեթոդական, փորձագիտական աշխատանքների, հետբուհական կրթական ծրագրերի, լրացուցիչ և շարունակական կրթության իրականացումը, գիտական և կիրառական հետազոտությունների կատարումը»:

Ակադեմիան փաստացի ունի կարևոր դերակատարություն ու պատասխանատվություն ՀՀ ԱԻՆ համակարգում գործող ստորաբաժանումների համար կադրերի պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացման, ինչպես նաև ՀՀ կրթական համակարգում քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերով ուսուցման քաղաքականության մշակման գործում:

ՌԾ-ում ակադեմիան սահմանում է 9 ռազմավարական նպատակներ՝ «1.արագ փոփոխվող միջավայրում ակադեմիայի սովորողների կազմի ընդլայնում, 2.բոլոնիայի գործընթացի զարգացումներին համահունչ որակյալ կրթության ապահովում, 3.լրացուցիչ կրթության շարունակական զարգացման ապահովում, 4.որակյալ կադրային ներուժի, արդյունավետ կառավարման ապահովում և աշխատանքային միջավայրի բարելավում, 5. կրթական և հետազոտական ծրագրերի պահանջներին համահունչ՝ ակադեմիայի նյութատեխնիկական բազայի կատարելագործում, սոցիալական ծրագրերի և ենթակառուցվածքների բարելավում, 6.ակադեմիայի ֆինանսական կայունության և ռեսուրսների արդյունավետ կառավարման ապահովում, 7.ակադեմիայի տեղեկատվական ռեսուրսների զարգացում, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառության շրջանակների ընդլայնում, 8.ակադեմիայի գիտական ներուժի կայուն զարգացման և հետազոտությունների արդյունավետության բարձրացման ապահովում, 9.ակադեմիայի արտաքին կապերի ընդլայնում և միջազգայնացման գործընթացների զարգացում»: Յուրաքանչյուր նպատակի համար ձևակերպված են դրանց իրականացման համար որոշակի խնդիրներ և գործողություններ: Ակադեմիայի ղեկավարությունը ակադեմիայի զարգացման գերակա ուղղությունները տեսնում է կառավարման, տեղեկատվական, մոնիթորինգի և որակի ապահովման ոլորտներում:

ՌԾ-ին կից մշակված է ծրագրի իրականացման պլան-ժամանակացույց, որտեղ ներկայացված են ռազմավարական խնդիրների իրագործման համար պլանավորված գործողությունները, իրականացման վերջնաժամկետները, պատասխանատու մարմինները և

պահանջվող լրացուցիչ ռեսուրսները: Սակայն ՌԾ-ի պլան-ժամանակացույցում առկա են ժամանակային և կատարողների բազմակի կրկնություններ, որոշ անհամապատասխանություններ ՌԾ-ի հետ: Պլան-ժամանակացույցը, ըստ էության, Ակադեմիայի ստորաբաժանումների հետագա գործունեության պլանավորման և իրականացման համար հիմք չի դիտարկվել:

Բյուջեի բաշխումն ըստ ՌԾ-ում ձևակերպված ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացված չէ, չնայած իր ՌԾ-ի առանձին խնդրով սահմանվում է ֆինանսական պլանավորում ակադեմիայի ռազմավարական նպատակների և խնդիրներին համապատասխան: *Բյուջեի բաշխումը, որպես ԱԻՆ ստորաբաժանում, իրականացվում է ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ղեկավարի և ֆինանսատնտեսագիտական վարչության կողմից: Ակադեմիայի բյուջեն և բյուջեի վերաբերյալ հաշվետվություններ ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացնում է ՀՀ ԱԻՆ-ը՝ համաձայն ՀՀ Կառավարության 2005թ. հունիսի 29-ի N 1055-Ն որոշման 11 կետի:*[5]

1.2 ՄՈՒՀ-ի առաքելությունը, նպատակները և խնդիրներն արտացոլում են ներքին և արտաքին շահակիցների կարիքները:

Ակադեմիան սահմանում է իր արտաքին (ԱԻՆ, տարածքային կառավարման և ՏԻՄ պատասխանատուներ, գործատուներ, շրջանավարտներ, ծնողներ) և ներքին (ուսանողներ, ՊԴ և վարչական կազմեր) շահակիցների շրջանակը: Հիմնական արտաքին շահակից հանդիսացող ԱԻՆ-ի կարիքների արտացոլումը առաքելության, նպատակների և խնդիրների մեջ անմիջապես իրականացվում է նախարարությունից իջնող հրամայականներով, որպես ենթակա բուն: Ակադեմիան հետևում է ՀՀ ԱԻՆ-ի կարիքներին և իրականացնում մասնագիտությունների ճշգրտում կամ նոր մասնագիտությունների ներառում: Չնայած դրան, ՌԾ մշակելիս ռեկտորի հրամանով ձևավորված աշխատանքային խմբի կողմից սահմանված ռազմավարական նպատակների ձևակերպման կամ հաստատման հարցում ԱԻՆ-ը փաստացի մասնակցություն չի ունեցել: ՌԾ-ն մշակվել է առանց արտաքին շահակիցների ներգրավման:

Ակադեմիայում որոշումներ կայացնող կոլեգիալ կառավարման մարմիններում (Ակադեմիայի խորհուրդ, Գիտական խորհուրդ (ԳԽ)) ապահովված է ներքին շահակիցների և ԱԻՆ-ի մասնակցությունը: ԱԻՆ-ի կարիքները հաշվի են առնվում նաև ակադեմիայում համատեղությամբ դասավանդող նախարարության աշխատակիցների միջոցով: Անցկացվող ԱԻՆ ուսումնավարժանքները, սեմինարները և աշխատանքային խմբերի հանդիպումները ևս մեկ մեխանիզմ են՝ վերհանելու շրջանավարտների կարիքները: Ակադեմիայի ռեկտորի ընդգրկվածությունը ՀՀ ԱԻՆ-ի ստորաբաժանումների ծառայողների ատեստացիոն հանձնաժողովում թույլ է տալիս գնահատել շրջանավարտների տեսական և գործնական գիտելիքները, լսել կարծիքներ և առաջարկություններ ակադեմիայի կրթական գործընթացների վերաբերյալ:

1.3 ՄՈՒՀ-ում գործում են առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների՝ գնահատման և բարելավման հաստատված մեխանիզմներ և ընթացակարգեր:

---

[5] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

ՌԾ-ում յուրաքանչյուր ռազմավարական նպատակի համար ներկայացված են առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ (ԱԳԿՑ): Ակադեմիան իր գործունեության արդյունքների գնահատման համար մշակել է գործիքակազմ՝ գնահատման առանցքային ցուցանիշներ (ԳԱՑ)՝ 6 ոլորտներով. ընդունելություն և համակազմ, ուսումնական գործընթաց, ռեսուրսներ և կառավարում, ենթակառուցվածքներ, գիտություն և նորամուծություն, արտաքին կապեր և միջազգային համագործակցություն: ԳԱՑ-երի կիրառումը համապատասխանում է ակադեմիայի վարած քաղաքականությանն ու ծավալած գործունեությանը: ԳԱՑ-երի 61 ցուցանիշները հավաքագրվում են ոլորտների պատասխանատու ստորաբաժանումների կողմից: Ներկայացված 2012-2016թթ. ԳԱՑ-երը իրենցից միայն թվային/տոկոսային տեղեկատվություն են ներկայացնում, չեն բնութագրում առաջընթացի որակական կողմերը և չեն համապատասխանում ՌԾ ԱԳԿՑ-երին:

ՌԾ-ի գնահատման գործող միակ մեխանիզմը ռեկտորի տարեկան հաշվետվությունն է՝ հիմնված ստորաբաժանումների հաշվետվությունների վրա: *Ռեկտորի հաշվետվությունները կազմված են ՀՀ ԱԻՆ-ի կողմից մշակված տարեկան հաշվետվության կառուցվածքին համապատասխան*[6] և խմբավորված են կրթություն, տեղեկատվություն, գիտամեթոդական, մշակութային դաստիարակություն, միջազգայնացում և լրացուցիչ աշխատանքներ (այդ թվում՝ նյութատեխնիկական բազայի բարելավում) բաժիններով: Հաշվետվությունները չեն անդրադառնում ՌԾ-ում ձևակերպված նպատակների և խնդիրների իրականացման առաջընթացին: Տեղ գտած թերությունները բաժնում հիմնականում ներկայացվում են ուսումնանյութական բազայի և ՊԴԿ-ի համալրման կարիքներ:

Առաքելության և նպատակների իրականացման արդյունքների գնահատման գործող մեխանիզմների (հաշվետվություններ, ԳԱՑ) արդյունավետության վերլուծություններ չեն իրականացվել:

Դատողություններ: Ակադեմիայի ՌԾ-ով սահմանված առաքելությունը ընդհանուր առմամբ համապատասխանում է ՈԱՇ-ին: ՀՀ ԱԻՆ-ի համար որակյալ կադրերի պատրաստման լրացուցիչ պարտավորվածությունը նպաստում է ակադեմիայի նպատակների և խնդիրների հստակ ձևակերպմանը: ՌԾ-ում ամրագրված 9 ռազմավարական նպատակները, դրանցից բխող խնդիրները և դրանց իրականացման գործողությունների ցանկը ընդհանուր առմամբ հնարավորություն տալիս են նախանշված առաքելության և նպատակների իրականացման համար և արտացոլում են դրանք:

ՌԾ-ին կից պլան-ժամանակացույցը, չնայած որոշ թերությունների, առաջիկա տարիների համար կարող է հիմք հանդիսանալ առաքելության և նպատակների հիման վրա հետագա գործունեության պլանավորման համար: Այդուհանդերձ, պլան-ժամանակացույցը դեռևս հստակեցման կարիք ունի ՌԾ-ին համահունչություն ապահովելու և գործունեության մեջ դնելու համար: Բուհում դեռ չկա ձևավորված միատեսակ մոտեցում ՌԾ-ի հիման վրա միջնաժամկետ և կարճաժամկետ պլանավորման համար:

Բյուջեի բաշխումն ըստ ռազմավարական նպատակների և խնդիրների իրականացված չէ, ինչը չի ապահովում բյուջե-ՌԾ փոխկապակցվածությունը և վտանգում է ծրագրի պատշաճ իրականացումը:

---

[6] Տեքստը վերաշարադրավել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

ՌԾ-ի մշակման խմբում տարբեր օղակներից ներքին շահակիցների ընդգրկումը, ՌԾ քննարկումը բուհում գործող կոլեգիալ կառավարման մարմիններում ցույց է տալիս, որ ներքին շահակիցները ներգրավված են ռազմավարական նպատակների ձևակերպման և հաստատման գործում: Արտաքին շահակիցների ներգրավվածությունը թույլ է, ինչը, մասնավորապես ԱԻՆ-ի պարագայում, որպես հիմնական գործատու, կարող էր նպաստել բուհի գործունեության առավել հստակ և նպատակային պլանավորմանը:

Առաքելության ու նպատակների իրականացման արդյունքների գնահատման համար սահմանված ԱԳԿՑ-երը որոշ դեպքերում համահունչ չեն նպատակներին ամբողջությամբ: Այդ ցուցանիշները փաստացի չեն կիրառվում: Հավաքագրվող ցուցանիշները՝ ԳԱՑ-երը, լինելով օգտակար գործիք, ուղղված չեն ռազմավարական նպատակներին և ըստ էության չեն կարող գնահատել դրանց իրականացման արդյունավետությունը և հիմք չեն հանդիսանա ակադեմիայի հետագա զարգացման և բարելավման համար: Գնահատման փաստացի գործող մեխանիզմը ռեկտորի տարեկան հաշվետվություններն են, որոնք էլ չեն համապատասխանեցված ՌԾ նպատակներին և պլան-ժամանակացույցին: Այսպիսով, ՌԾ-ի իրականացման որակական գնահատում դեռ չի իրականացվում Ակադեմիայում, և ծրագրի մշակումն ու բարելավումը չի հիմնվում հավաստի տեղեկատվության վերլուծության վրա:

Գործող մեխանիզմների (հաշվետվություններ, ԳԱՑ) արդյունավետության վերլուծությունների բացակայությունը թույլ չի տալիս գնահատել մեխանիզմների գործունակությունը և դրանց ազդեցությունը ռազմավարական պլանավորման և իրականացման վրա:

Եզրահանգում: Հաշվի առնելով բուհի առաքելության և նպատակների ՈԱՇ-ին համապատասխան հստակ ձևակերպումը, դրանից բխող ռազմավարական ծրագրի կառուցվածքն ու ընդգրկունությունը, գործունեության հիմքում ՀՀ ԱԻՆ-ի կարիքների և հասարակության մեջ անվտանգության միջավայրի ձևավորման սկզբունքի դիտարկումը, ինչպես նաև կատարողականի գնահատման հաշվետվողականության հստակ մեխանիզմի և ԳԱՑ-երի կիրառումը, կարելի է փաստել, որ բուհի վարած քաղաքականությունն ու ծավալած գործունեությունը համապատասխանում են հաստատության որդեգրած առաքելությանը և ԱԻՆ-ի կարիքներին:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

II. ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ՈՒ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը, վարչական կառույցները և դրանց գործունեությունն արդյունավետ են և միտված են հաստատության առաքելության ու նպատակների իրականացմանը՝ պահպանելով կառավարման էթիկայի կանոնները:

Փաստեր

2.1 Հաստատության կառավարման համակարգն ապահովում է որոշումներ կայացնելու կանոնակարգված գործընթաց՝ սահմանված էթիկայի կանոններին համապատասխան և ունի կրթական ու այլ նպատակների իրականացման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

Ակադեմիան իր նպատակների իրագործմանն ուղղված որոշումների կայացումը և իրականացումը ապահովում է կառավարման համակարգի միջոցով, որի հիմքում ընկած է բուհի կառավարման ՀՀ ընդունված մոդելը՝ հաստատված իր կանոնադրությամբ, ինքնավարության, միանձնյա և կոլեգիալ կառավարման սկզբունքների զուգակցման հիման վրա: Կառավարումն իրականացնում է ՀՀ ԱԻՆ-ը, Ակադեմիայի խորհուրդը և գիտական խորհուրդը: Ընթացիկ ղեկավարումն իրականացնում է ռեկտորը, որին կից գործում է ռեկտորատը՝ որպես խորհրդատվական մարմին: Ակադեմիայի կառավարման մարմինները և կառուցվածքային ստորաբաժանումները գործում են հաստատված կանոնակարգերի և կանոնադրությունների հիման վրա: ԳԽ-ին կից ձևավորվել են Որակի կառավարման մշտական հանձնաժողով, Մեթոդական (զբաղվում է գիտական կոչումների ներկայացման երաշխավորմամբ) ու Էթիկայի ժամանակավոր հանձնաժողովներ, որոնց գործունեության վերաբերյալ տեղեկացվածությունը անձնակազմի մոտ դեռ բացակայում է:

Կառուցվածքային սխեմայում առկա են որոշ անճշտություններ՝ կապված ֆակուլտետների և ուսումնական բաժնի ենթակայության հետ: Նշված չեն ուսանողական խորհուրդը (ՈւԽ) և գիտական ընկերությունը (ՈւԳԸ) որպես գործող կառույցներ: Կառուցվածքում դեռևս բացակայում են ՌԾ-ի 1-ին, 3-րդ և 9-րդ նպատակների արդյունավետ իրագործման համար անհրաժեշտ կառուցվածքային ստորաբաժանումներ (շրջանավարտների և կարիերայի, գիտադաստիարակչական, միջազգային կապերի և **համագործակցության, մեթոդական բաժինները, մասնագիտական խորհուրդը նախատեսվում է հիմնել)**: **Արդյունքում առկա է ղեկավար անձնակազմի շրջանում մի քանի պաշտոնների համատեղում. ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը համակարգում է նաև գիտության ոլորտի աշխատանքները, ուսումնական բաժնի վարիչը նաև գիտ. քարտուղարն է, հեռակա ուսուցման դեկանատի մեթոդիստի վրա դրված է նաև ուսանողների կարիերայի օժանդակման գործառույթներ՝ հասարակական սկզբունքով:** ***Ակադեմիայի հաստիքացուցակը կազմում և հաստատում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարը:***[7]

Վերջին տարիներին, համաձայն ԳԱՑ-ի տվյալների, ակադեմիայում գրանցվել է ֆինանսական եկամուտների և ուսումնական ծախսերի ցուցանիշների աճ՝ 2015թ. ընդհանուր եկամուտներն աճել են 42%-ով: Արդյունքում բարելավվել են նյութատեխնիկական և ուսումնաօժանդակ պայմանները: Ֆինանսատնտեսական գործունեության աուդիտն իրականացնում է ԱԻՆ-ը: Ակադեմիայում բացակայում է ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորումը: *Ընդհանուր ֆինանսական պլանավորումն իրականացնում է ՀՀ ԱԻՆ-ը:*[8]

Չկան հաստատված էթիկայի կանոններ: Ներքին կարգապահական կանոններով սահմանվում են աշխատակիցների աշխատանքի ընդունման, տեղափոխման, հեռացման, խրախուսման ու տույժի կիրառման քաղաքականությունն ու ընթացակարգերը:

Կառավարման գործընթացների մշտադիտարկման և կառավարման համակարգի արդյունավետության գնահատմանն ուղղված մեխանիզմները բացակայում են:

---

[7] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[8] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

2.2 ՄՈՒՀ-ի կառավարման համակարգը հնարավորություն է տալիս դասախոսներին և ուսանողներին մասնակցելու իրենց առնչվող որոշումների կայացմանը:

ՊԴ կազմը և ուսանողները, համաձայն կառավարման և գիտական խորհրդի կանոնակարգերի, համապատասխան տոկոսային (ուսանողները՝ 25%) մասնաբաժնով ներգրավված են իրենց առնչվող որոշումներ կայացնող կառավարման այդ հիմնական կոլեգիալ մարմիններում: Փորձագիտական խմբի դիտարկումները ցույց տվեցին, որ կառավարման մարմիններում ուսանողների և ՊԴ կազմի ակտիվությունը որոշումների կայացման գործընթացում դեռևս բավարար չէ: Ակադեմիայում 2014թ-ից գործում է ՈՒԽ և 2016թ-ից՝ ՈՒԳԸ, որոնց գործունեությունը դեռևս ակտիվ բնույթ չի կրում և սահմանափակվում է հիմնականում միջոցառումների կազմակերպմամբ:

Ուսանողները և ՊԴ կազմը իրենց առնչվող որոշումների հետ կապված կարծիքները կարող են հնչեցնել նաև դեկանատներում, պրոռեկտորների և ծայրահեղ անհրաժեշտության դեպքում նաև ռեկտորի հետ՝ սահմանված ժամանակացույցով և դրանից դուրս հանդիպումների միջոցով:

2.3 ՄՈՒՀ-ը մշակում և իրականացնում է կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում՝ իր առաքելությանն ու նպատակներին համապատասխան և ունի դրանց իրականացման և մշտադիտարկման հստակ մեխանիզմներ:

Չնայած Ակադեմիան նշում է, որ իր գործունեության պլանավորումը իրականացնում է երեք մակարդակով՝ երկարաժամկետ (ռազմավարական), միջնաժամկետ և կարճաժամկետ, սակայն դիտարկումների արդյունքում պարզվեց, որ փաստացի առկա է երկարաժամկետ (ռազմավարական) պլան-ժամանակացույց՝ ՌԾ-ին կից և ստորաբաժանումների կարճաժամկետ (տարեկան կամ կիսամյակային) պլանավորում: *Միջնաժամկետ պլանավորում իրականացվում է միայն ֆինանսական ուղղությամբ՝ համաձայն ՀՀ ԱԻՆ սահմանած պահանջի: Մյուս ուղղություններով միջնաժամկետ պլանավորում չի իրականացվում:*[9] Ակադեմիայի յուրաքանչյուր ստորաբաժանում, ուսումնական տարվա համար կազմում է իր կարճաժամկետ աշխատանքային պլանը, որի հիմքում չի դրվում ՌԾ-ի պլանավորումը:

Որպես պլանների գնահատման և մշտադիտարկման մեխանիզմ ակադեմիան դիտարկում է ստորաբաժանումների ընթացիկ և տարեկան հաշվետվությունները, որոնք ամփոփվում են ռեկտորի հաշվետվություններում: Ռեկտորը, տարեկան գործունեության ամբողջական կատարողականի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում ակադեմիայի անձնակազմին, գիտ. խորհրդին և ԱԻՆ: Այնուհետև ռեկտորի տարեկան հաշվետվությունը հրապարակվում է նախարարության կայք էջում: Անհրաժեշտության դեպքում ԱԻՆ-ից իջեցվում են համապատասխան ուղենիշ հրամայականներ:

2.4 ՄՈՒՀ-ը կատարում է իր գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և որոշումներ կայացնելիս հիմնվում է հավաստի տվյալների վրա:

Ակադեմիան նշում է, որ կառավարման գործընթացում կարևորում է իր վրա ազդող հիմնական գործոնների վերհանումը, դրանց վերլուծությունը և հետազայում հնարավոր

[9] Տեքստը վերաշարադրավել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

ներգործության կանխատեսումը: Ակադեմիայի գործունեության արդյունավետության ու կատարողականի գնահատումն իրականացվում է ԳԱՑ-ի սահմանված լրակազմի օգնությամբ: ԳԱՑ-ում ներկայացված տվյալների բովանդակային վերլուծություններ՝ գործունեության վրա ազդող գործոնների դուրսբերման և դրանց հաղթահարման ուղղությամբ, բացակայում են:

Ուսուցման որակի վրա ազդող գործոնների բացահայտման նպատակով ակադեմիայի շրջանավարտների հետ և պրակտիկա անցկացնող ԱԻՆ-ի ստորաբաժանումներում անցկացվում են հարցումներ՝ պարզելու նրանց բավարարվածության մակարդակն ուսանողների գիտելիքներից ու կարողություններից: Ներքին գործոնների ուսումնասիրման համար անցկացվում են հարցումներ և հանդիպումներ ուսանողների ու դասախոսների հետ:

ՌԾ մշակման հիմքում դրված չեն միջավայրային գործոնների խորքային ուսումնասիրություններ: Տվյալների հավաքագրման արդյունքում ակադեմիայի վրա ազդող ներքին և արտաքին գործոնների վերլուծություններ չկան: Հիմնականում հիմք են ընդունվում ԱԻՆ-ի մասնագետների կարիքը բացահայտելու համար բանավոր քննարկումները:

Գործունեության համար անհրաժեշտ ռեսուրսների հետ կապված կարիքները ակադեմիան ինքն է գնահատում և անհրաժեշտության դեպքում հայտ ներկայացնում ԱԻՆ: Դիմորդների տեղերի հատկացման հետ կապված որոշումները կայացնում է ԱԻՆ-ը՝ հաշվի առնելով ակադեմիայի տարածքային և ռեսուրսային հնարավորությունները:

2.5 Քաղաքականությունների և ընթացակարգերի վարչարարությունն իրականացվում է որակի կառավարման սկզբունքով (պլանավորում, իրականացում, գնահատում, բարելավում):

ՃԿՊԱ-ն իր որակի ապահովման քաղաքականությամբ կարևորում է որակի կառավարման ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը: Այդ ուղղությամբ կատարված գերակշիռ քայլը 2014թ. մշակած ռազմավարական ծրագիրն է: Բացի այդ մշակվել են կառավարման մարմինների գործառույթներն ու աշխատակարգերը կարգավորող կանոնակարգեր, ընթացակարգեր և այլ իրավական ակտեր: Վարչարարության մեջ ՊԻԳԲ շրջափուլի կիրառումը, սակայն, վերջին 2՝ գնահատման և բարելավման փուլերին չի հասել: Ստորաբաժանումները չեն կիրառում իրենց աշխատանքի գնահատման համար մշակված ցուցիչներ՝ ՌԾ-ի առաջընթացի գնահատման ցուցիչներից բխող: Գնահատումը հիմնականում իրականացվում է հաշվետվության մեխանիզմի միջոցով, ինչպես նաև ԱԻՆ-ի վերահսկողական գործառույթներով: Ակադեմիայում որակի ապահովման համակարգը դեռևս ներդրման փուլում է, և շատ գնահատման մեխանիզմներ դեռ միայն պլանավորման փուլում են: Որակի կառավարման շրջափուլային մոտեցումը համեմատաբար վերջերս է ներդրվել հաստատությունում, և գնահատումների հիման վրա իրականացված բարելավումներ դեռևս չկան:

2.6 ՄՈՒՀ-ում գործում են մասնագիտությունների կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծությունը և կիրառումը գնահատող մեխանիզմներ:

Գործող կրթական ծրագրերի արդյունավետությունը գնահատելու համար հաստատված է կրթական ծրագրերի մշտադիտարկման կարգ, որը դեռևս չի կիրառվել: Կրթական ծրագրերի որոշ բաղադրիչների գնահատումն իրականացվում է ուսանողների և ՊԴԿ-ի հարցումների միջոցով: Հաստատված են հարցումների անցկացման կարգեր՝ մասնավորապես. դասավանդման որակի և արդյունավետության, ներքին շահակիցների բավարարվածության վերաբերյալ և ՊԴԿ-ի գործունեության վարկանիշային գնահատման կարգ: Հարցումների արդյունքում իրականացված վերլուծությունները քանակական են,

որակական վերլուծություններ չեն արվել և դեռևս բովանդակային բարելավման հիմք չեն հանդիսացել:

ՄԿԾ-ների և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքման հիմնական մեխանիզմը հաշվետվություններն են: Հարցումների և հաշվետվությունների հիման վրա կատարված բարեփոխումներ չեն իրականացվել: Գնահատման մեխանիզմների արդյունավետության ուսումնասիրություններ նույպես չկան:

2.7 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների որակի մասին քանակական և որակական տեղեկատվության հրապարակումները գնահատող օբյեկտիվ մեխանիզմներ:

Ակադեմիան կրթական ծրագրերի և շնորհվող որակավորումների մասին տեղեկատվությունը հրապարակում է մի քանի գործիքների միջոցով: Ակադեմիան հրատարակում է. «Կրեդիտային համակարգով ուսումնառության ուղեցույց և դասընթացների տեղեկագիրք» բակալավրի կրթական ծրագրով ուսանողների համար: Ակադեմիայի մասին տեղեկատվություն և նկարագրություններ են տպագրվում ակադեմիայի էլեկտրոնային կայքում և ֆեյսբուքյան էջում, «911, Արտակարգ թերթ»-ում, «Գործընթաց» և «Ճգնաժամ հաղթահարողները» թերթերում, բուկլետների տպագրման և ռադիոյով ու հեռուստատեսությամբ տրվող հայտարարությունների ու հաղորդաշարերի միջոցով և այլն: Ակադեմիայի պաշտոնական կայքում տեղադրված տեղեկատվությունը բավականին սուղ է և լրամշակման կարիք ունի: Ներկայումս մշակվում է նոր առանձին կայք:

ՀՀ ԱԻՆ-ում առկա «Լրատվության» և «Լրատվամիջոցների մոնիթորինգի և վերլուծության» բաժինները լուսաբանում են ԱԻՆ գործունեությունը, այդ թվում նաև ակադեմիայի վերաբերյալ. տեղադրում են ուսումնական նյութեր, տեղեկատվություն աչքի ընկնող փրկարարների վերաբերյալ: Անդրադառնում են շրջանավարտների գործունեությանը: 2-3 ամիսը մեկ վերլուծում և ներկայացնում են ակադեմիային առավել մեծ հետաքրքրություն առաջացրած նյութերի վերաբերյալ:

Հրապարակման ձևերի և միջոցների արդյունավետության գնահատում բուհը չի իրականացնում:

Դատողություններ: Ընդհանուր առմամբ ակադեմիայի կառավարման համակարգը բուհական միջավայրին բնորոշ կառավարման ընդունելի համակարգ է՝ հիմնված ստորաբաժանումների տարանջատման և դրանց գործունեության համակարգման սկզբունքների վրա: Ստեղծված համակարգը նպաստում է առաքելության իրականացմանը: Միևնույն ժամանակ կառուցվածքային սխեմայի ոչ հստակ և թերի լինելը՝ կապված ստորաբաժանումների և վարչական անձանց ենթակայության անհստակության հետ, և ղեկավար անձնակազմի շրջանում մի քանի պաշտոնների համատեղումը կարող է վնասել կառավարման համակարգի արդյունավետ գործարկմանը: Մյուս կողմից կազմակերպական կառուցվածքում ռազմավարական որոշ նպատակների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ ստորաբաժանումների բացակայությունը ազդում է այդ գործընթացների իրականացման արդյունավետության վրա:

Ակադեմիայում հաստատված կարգերը հնարավորություն են տալիս ներքին և արտաքին շահակիցներին ներգրավված լինել բուհում իրենց առնչվող որոշումների կայացմանը: Դիտարկումները ցույց տվեցին, որ շահակիցները, այդ թվում ՈՒԽ-ն, ըստ էության պասիվ են օգտագործում իրենց ընձեռած հնարավորությունները որոշումների

կայացման, առաջարկությունների ներկայացման հարցում, և մասնակցությունը շատ դեպքերում կրում է ֆորմալ բնույթ:

Ռազմավարական ուղղություններով ֆինանսական պլանավորման բացակայությունը խզում է կապը ակադեմիայի ֆինանսական քաղաքականության և ռազմավարական զարգացման հետ և ազդում զարգացման արդյունավետության վրա: Ակադեմիայի ուսումնանյութական բազան բավարարում է կրթական և այլ գործընթացների բավարար իրականացման համար: Կառավարման գործընթացների մշտադիտարկման և կառավարման համակարգի արդյունավետության գնահատման հստակ մեխանիզմների բացակայությունը բուհին թույլ չի տալիս վերհանել ակադեմիայի կառավարման համակարգի խնդիրները:

Ակադեմիայում երկարաժամկետ պլանավորումից բխող միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների բացակայությունը վտանգում է ՌԾ-ի նպատակների իրականացումը: Մյուս կողմից ստորաբաժանումների աշխատանքային պլանների թույլ կապը ՌԾ պլանավորման հետ նույնպես կարող է նվազեցնել իրականացման արդյունավետությունը:

Գործունեության գնահատման համար ակադեմիան կիրառում է հաշվետվությունների մեխանիզմը կառավարման բոլոր մակարդակներում, սակայն չեն վերլուծվում նույնիսկ ՌԾ-ում ամրագրված առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշները՝ չգնահատելով ռազմավարական նպատակների իրականացման բովանդակային կողմը: Բուհը որպես գործունեության արդյունավետության փաստացի գնահատման ցուցանիշներ դիտարկում է ԳԱՑ-ի լրակազմը: Սակայն ԳԱՑ-երը իրենցից տվյալների բովանդակային վերլուծություններ չեն ներկայացնում՝ գործունեության վրա ազդող գործոնների դուրսբերման և դրանց հաղթահարման ուղղությամբ: Դրանով իսկ չեն կարող ձևավորել բուհի վրա ազդող գործոնների ընդհանուր պատկերը:

Ակադեմիայում առկա է որակի կառավարման շրջափուլի դեռևս միայն պլանավորման և մասամբ նաև իրագործման մասերը՝ պայմանավորված նրանով, որ ստորաբաժանումները դեռևս չեն կիրառում իրենց աշխատանքի գնահատման համար մշակված ցուցիչներ: Իսկ կիրառվող հաշվետվողականության մեխանիզմը չի ապահովում հիմք հետագա բարելավման համար: Ուսումնագիտական աշխատանքների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները նոր են մշակվում, դրանց վերաբերյալ կարելի է հիմքեր գտնել որակի ապահովման կենտրոնի նոր մշակած փաստաթղթերում: Կենտրոնի մշակած հետադարձ կապի մեխանիզմները դեռ ըստ էության չեն գործում, ինչը թույլ չի տալիս ՊԻԳԲ շրջափուլը համարել փակված՝ առավելապես վերջին 2 փուլերի անկատարության հաշվին:

Բուհը մինչ այժմ չի իրականացրել կանոնակարգված գործընթաց կրթական ծրագրերի և այլ գործընթացների արդյունավետության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, վերլուծման և կիրառման գնահատման ուղղությամբ: Ակադեմիայում ներքին և արտաքին շահակիցների հետ հարցումների անցկացման համար հաստատված կանոնակարգերը գործարկելու դեպքում կարող են նպաստել մատուցվող կրթական ծառայությունների արդյունավետության գնահատմանը, սակայն դրանց արդյունքների բովանդակային վերլուծման և հետագա կիրառման մեխանիզմներ չեն գործում: Արտաքին շահակիցներից ԱԻՆ-ի հետ մշտապես անցկացվող բանավոր քննարկումները նույնպես նպաստում են ՄԿԾ-

ների բարելավումներին: Այդուհանդերձ, արտաքին շահակիցների ներգրավվածությունը կառավարման համակարգում թույլ է:

Բուհի տեղեկատվության տարածման մեխանիզմներից կիրառվում է տպագիր և էլեկտրոնային մամուլը, ԱԻՆ-ի կայքում առանձին բաժնով ակադեմիայի կայքը: Չնայած կայքը դեռ տեղեկատվությամբ համալրման կարիք ունի, սակայն մյուս մեխանիզմների հետ համատեղ հնարավոր է դառնում ապահովել ակադեմիայի մասին տեղեկատվության բավարար հրապարակայնություն: Այդ աշխատանքներին նպաստում են նաև ԱԻՆ-ի «Լրատվության» և «Լրատվամիջոցների մոնիթորինգի և վերլուծության» բաժինները, որոնք նաև կատարում են լրատվության տարածման վերլուծություն:

Եզրահանգում: Հաշվի առնելով բուհի առաքելությանը համահունչ կառավարման համակարգի առկայությունը, նպատակներից և խնդիրներից բխող ստորաբաժանումների գործունեությունը կամ, բուհի փոքր լինելով պայմանավորված, դրանց աշխատանքների համատեղումը այլ օղակների կողմից, կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կանոնակարգվածությունը, հաշվետվողականությունը ներքնից վերև, շահակիցների՝ իրենց առնչվող որոշումների կայացմանը մասնակցելու հնարավորությունները, կարելի է փաստել, որ բուհի կառավարումն ու վարչարարությունը բավարար մակարդակով նպաստում են առաքելության և նպատակների իրագործմանը:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

III. ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄԿԾ-ները համապատասխանում են հաստատության առաքելությանը, կազմում են հաստատության պլանավորման բաղկացուցիչ մաս և նպաստում են շարժունությանը և միջազգայնացմանը:

Փաստեր

3.1 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը համահունչ են առաքելությանը, համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Ակադեմիան բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման ձևերով իրականացնում է 7, իսկ մագիստրոսական ծրագրով միայն հեռակա ուսուցում՝ 2 մասնագիտություններով: Այդ մասնագիտությունների համար չկան հաստատված պետական կրթական չափորոշիչներ: Որպես ՄԿԾ-ի մշակման հիմք ակադեմիան դիտարկում է իր առաքելությունը, ՀՀ ԱԻՆ-ի պահանջներն ու ՈԱՇ-ին համապատասխանությունը:

Ակադեմիան իր կրթական ծրագրերով հավակնում է թողարկել «անհրաժեշտ գիտելիքներով ու կարողություններով օժտված, մասնագիտական խնդիրներ լուծող և համալիր կոմպետենցիաների տիրապետող մրցունակ մասնագետներ»: Ակադեմիայի գործող կրթական ծրագրերը կազմվել են վերջնարդյունքահեն մոտեցմամբ՝ առաջնորդվելով 2014թ. հաստատած ՄԿԾ-ների մշակման մեթոդական ուղենիշներով և մասնագրի հաստատված

կառուցվածքով: ՄԿԾ-ները հաստատվել են 2016թ.-ին և կառուցվածքով համապատասխանում են ներկայիս բուհական համակարգում ընդունված մշակման ընդհանուր պահանջներին: Մասնագրում առանձին բաժիններով ներկայացված են ծրագրի նպատակները, վերջնարդյունքները, ընդունելության չափանիշները և ապագա կարիերայի հնարավորությունները, դասավանդման, ուսումնառության, գնահատման մեթոդները և այլն: Չնայած մեթոդական ուղենիշի պահանջների՝ բացակայում են ծրագրում ՊԴԿ-ին ներկայացվող և ռեսուրսային ապահովման պահանջները: ՄԿԾ և առարկայական ծրագրերի վերջնարդյունքների քարտեզագրումը թերություններով է կատարված: Վերջնարդյունքների կապը առարկաների հետ հստակ չէ: Կան առարկաներ, որոնք քարտեզագրման մեջ ոչ մի վերջնարդյունք չեն փակում: Դիտարկումները ցույց տվեցին, որ գործնական մակարդակում կրթական ծրագրերը դեռ վերջնարդյունքներին միտված չեն իրականացվում: Այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները, շրջանավարտները և գործատուները գործնական և պրակտիկ պարապմունքների ժամաքանակի ավելացման խիստ կարիք են տեսնում:

Ակադեմիան նշում է, որ ՄԿԾ-ների բենչմարքինգ իրականացրել է Վարշավայի հրդեհային ծառայության բուհի հետ, ինչպես նաև ուսումնասիրվել են ՌԴ ԱԻՆ-ի Սանկտ Պետերբուրգի պետական հրդեհային ծառայության համալսարանի ծրագրերը, սակայն վերլուծությունների փաստաթղթային հիմքեր չկան: Արդյունքում, ՄԿԾ-ների իրականացված բարելավումներ չկան: ՄԿԾ-ների ձևաչափի ընտրման ժամանակ բուհն իրականացրել է տեղական առաջատար բուհերի փորձի ուսումնասիրություն:

3.2 ՄՈՒՀ-ն ունի մասնագիտությունների կրթական ծրագրերի ուսումնառության ակնկալվող արդյունքներին համապատասխան դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության քաղաքականություն, որը նպաստում է ուսանողակենտրոն ուսուցմանը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների արդիականացման գործընթացը հանդիսանում է ակադեմիայի ռազմավարական խնդիրներից մեկը: ՄԿԾ-ների մասնագրերում ակնկալվող արդյունքների 3 առանձնացված (մասնագիտական գիտելիք և իմացություն, գործնական մասնագիտական կարողություններ, ընդհանրական (փոխանցելի) կարողություններ) բաժինների համար թվարկված են դասավանդման/ուսումնառության մեթոդները: Առարկայական ծրագրերում մեթոդաբանությունը ներկայացված չէ:

Մեթոդների ընտրության հաստատված քաղաքականություն չկա: Դասավանդման և ուսումնառության մեթոդներն ընտրում են դասախոսները՝ ելնելով առարկայի վերջնարդյունքներից և յուրահատկություններից: Երիտասարդ դասախոսները մեթոդների ընտրության ուղղորդումներ կարող են ստանալ ավագ, փորձառու դասախոսներից: Ուսուցումն իրականացվում է ավանդական և ուսանողակենտրոն՝ խմբային աշխատանք, իրավիճակային խաղեր, բանավեճ, ուսումնավարժանքներ և այլն, մեթոդների զուգակցմամբ: Դասախոսները նշում են, որ մեթոդական վերապատրաստման կարիք ունեն:

Ակադեմիայում գործում են դասավանդման և ուսումնառության մեթոդների արդյունավետության գնահատման մեխանիզմներ՝ ուսանողների և շրջանավարտների հետ հարցումներ, ամբիոնի վարիչի կողմից և փոխադարձ դասալսումներ: Հարցումների և դասալսումների արդյունքները քննարկվում են ամբիոններում և անհրաժեշտ խորհրդատվություններ տրվում: Ակադեմիան աշխատանքներ է տանում դասավանդման մեթոդներում SS կիրառումն ընդլայնելու ուղղությամբ՝ այն ամրագրելով նաև որպես ՌԾ-ի նպատակ: Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ ուսանողները զոհ են կիրառվող մեթոդներից:

3.3 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների գնահատման քաղաքականություն՝ ըստ ուսումնառության արդյունքների, և ապահովում է ակադեմիական ազնվությունը:

Ակադեմիայում 2015թ.-ից գործում է ուսանողների գիտելիքների գնահատման նոր քաղաքականություն, որն արտահայտված է ակադեմիայի կրեդիտային համակարգով ուսանողների գնահատման, բակալավրի կրթական ծրագրով կուրսային աշխատանքի կատարման և գնահատման, մագիստրոսի կրթական ծրագրով ավարտական աշխատանքների գրախոսման, շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման անցկացման կարգերում:

Ուսանողների գնահատման մեթոդները ներառված են կրթական ծրագրի կառուցվածքում և ընտրվում են ծրագրի կազմման ժամանակ: ՄԿԾ մասնագրերում ակնկալվող արդյունքների 3 առանձնացված բաժինների համար ներկայացված են գնահատման մեթոդները/ձևերը: Առարկայական ծրագրերում ներկայացված է միայն գնահատման ձևը՝ ստուգարք կամ քննության:

Ուսանողների գնահատման համար Ակադեմիայում կիրառվում է 20 միավորանոց սանդղակը (անցողիկը՝ 8 միավորն է): Ակադեմիան ներդրել է միջանկյալ 2 գրավոր քննություններ: Ուսանողների միջանկյալ քննությունների գնահատման համար 2014-15 ուս. տարվանից ընտրված թեստային մեխանիզմը ընթացքում բարելավվել է՝ հիմնվելով ուսանողների և ՊԴԿ-ի արձագանքների վրա: Գնահատման և բողոքարկման կարգերին ներքին շահակիցները ծանոթ են: Բողոքարկման դեպքերը եզակի են: Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ որակավորման շնորհման ավարտական քննությունների ժամանակ առկա տեխնիկական միջոցների կիրառմամբ գործնական կարողությունները չեն ստուգվում:

Ակադեմիայում հաստատված է «Ակադեմիական ազնվության կանոնակարգը»: Քննական արդյունքների հասանելիությունն ու թափանցիկությունը ապահովվում են գործող կանոնակարգերի համաձայն: Գրագողության դեմ պայքարի հաստատված մեխանիզմներ չկան: Մագիստրոսական թեզերի ուսումնասիրման ժամանակ պարզվեց, որ առկա է թեմաների կրկնություն, նույնիսկ առանձին դեպքերում կրկնվում են թեզերի բովանդակություններն ամբողջությամբ:

3.4 ՄՈՒՀ-ի մասնագիտությունների կրթական ծրագրերը բովանդակային առումով համահունչ են նմանատիպ այլ ճանաչված մասնագիտությունների կրթական ծրագրերին և նպաստում են ուսանողների ու դասավանդողների շարժունությանը, միջազգայնացմանը:

ՃԿՊԱ-ն փորձում է իրականացնել իր և այլ բուհերի ՄԿԾ-ների համահունչություն ստեղծելու քաղաքականություն: Դրա համար ուսումնասիրել է ԵՊՀ, ՀՊՏՀ «Կառավարում» և ՖԿՀՊԻ «Փրկարարական գործ» ՄԿԾ-ները՝ կառուցվածքի, կրթամասերի, դասընթացների և դրանց հատկացված կրեդիտների համադրելիության մասով:

Բուհը չունի բենչմարքինգի իրականացման հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր, բենչմարքինգի մեխանիզմներն ու նպատակները հստակ սահմանված չեն: 2014թ.-ին ակադեմիայի ՄԿԾ-ների մշակման խմբերն ուսումնասիրել են Վարշավայի հրդեհային ծառայության բուհի կրթական ծրագրերը: Կատարվել են նաև ուսումնական պլանների համեմատական ուսումնասիրություններ որոշ բուհերի հետ, սակայն վերլուծության հիմքեր չկան: Ուսումնասիրությունները չեն նպաստել ՄԿԾ-ների միջազգայնացմանը:

ՊԴԿ-ի վերապատրաստումները միջազգային համագործակից կառույցներում նպաստում են պրակտիկ փորձի ներդրմանը դասավանդման գործընթացում:

Ակադեմիան չի իրականացնում համագործակցող բուհերի հետ ուսանողների շարժունություն, չնայած որոշ համաձայնագրեր դրա հնարավորությունը տալիս են: **Ակադեմիայում 2014-15թթ. ներդրվել է կրեդիտային համակարգը, ՄԿԾ-ները կառուցված են ECTS հիման վրա: Կրեդիտային համակարգի մասին պատկերացումը անձնակազմի մոտ լիարժեք չէ: Առարկաներին կրեդիտների բաշխման սկզբունքը նույնական չի իրականացված տարբեր ծրագրերում: Շրջանավարտներին տրվում է արդի պահանջներին համապատասխան դիպլոմի հավելված:**

3.5 ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտության կրթական ծրագրերի մշտադիտարկման, արդյունավետության գնահատման, բարելավման քաղաքականություն:

2014-15 ուս. տարվանից ակադեմիան կատարել է ՄԿԾ-ների կառուցվածքային և բովանդակային վերանայում ըստ վերջնարդյունքների: ՄԿԾ-ների համար մշակվել է մշտադիտարկման և վերանայման կարգ, որը դեռ չի կիրառվել: Մշտադիտարկումն ըստ կարգի պետք է ընդգրկի ակադեմիայի բոլոր կրթական ծրագրերը և դրանց դասընթացները: ՄԿԾ-ների առանձին բաղադրիչների գնահատման համար կիրառվել են ուսանողական հարցումները: Մշտադիտարկման գործող մեխանիզմ է ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովներում ԱԻՆ-ի մասնագետների ընդգրկումը և հանձնաժողովի նախագահի հաշվետվությունը: Ատեստացիոն հանձնաժողովների նախագահը ակադեմիայի ռեկտորն է, նրա հաշվետվություններում հիմնականում կրկնվող առաջարկություններ են ներկայացվում (հարցատոմսերի վերանայում, թեզերի թեմաների վերանայում): ՄԿԾ-ների ամբողջական գնահատում դեռ չի իրականացվել, առկա են միայն ամբիոնների և ֆակուլտետների ընթացիկ մշտադիտարկման արդյունքներ, որոնք նշված են անցկացված նիստերի արձանագրություններում:

Ակադեմիան վերանայում է նաև իր կողմից թողարկվող մասնագիտությունների ցանկը ՀՀ ԱԻՆ-ի պահանջարկի հիման վրա: Այդպես վեր են հանվել կիրառական սեյսմոլոգիայի, աղետների հոգեբանության մասնագետների կարիքներ: Այդ մասնագիտությունների ներդրման ուղղությամբ բուհը աշխատանքներ է տանում:

Դատողություններ: Չունենալով հաստատված մասնագիտության պետական կրթական չափորոշիչներ՝ Ակադեմիան իր կրթական ծրագրերի հիմքում դրել է իր առաքելությանը և ՀՀ ԱԻՆ-ի կարիքներին համապատասխանությունը, ինչպես նաև համանման բուհերի կողմից իրականացվող ծրագրերը: ՄԿԾ-ների վերջնարդյունքահեն մշակումն իրականացվել է կանոնակարգված՝ առաջնորդվելով 2014թ. իր հաստատած կրթական ծրագրերի մշակման մեթոդական ուղենիշներով և մասնագրի հաստատված կառուցվածքով: Դա ապահովել է ակադեմիայի ՄԿԾ-ների նույնատիպ կառուցվածքը: ՄԿԾ-ների և առարկայական վերջնարդյունքների քարտեզագրման առկա թերությունները հստակ չեն հիմնավորում վերջնարդյունքների ձեռքբերումը:

Դասավանդման և ուսումնառության մեթոդների ընտրության համար ակադեմիան կարևորում է վերջնարդյունքներին համապատասխանությունը: Առարկայական ծրագրերում մեթոդաբանության բացակայությունը հստակ չի ցուցադրում մեթոդների և վերջնարդյունքների կապը: Դրական է գնահատվում դասավանդման ավանդական մեթոդների հետ մեկտեղ ուսանողակենտրոն ուսուցմանն ուղղված նոր մեթոդների

կիրառումը և ուսանողների գոհ լինելը մեթոդներից: Չնայած դրան, ոլորտի պրակտիկ մասնագետների պատրաստման հարցում գործնական պարապմունքների և պրակտիկայի ժամաքանակի ավելացման խիստ կարիք է զգացվում: Պրակտիկայի օրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուսանողները պրակտիկայի ժամանակ մեծամասամբ իրականացնում են դիտարկումներ, ինչը նպաստում է գիտելիքի ձեռքբերմանը, բայց թույլ չի տալիս ձևավորել վերջնարդյունքներին համապատասխան պրակտիկ հմտություններ: Մեթոդների գնահատման համար հարցումների և դասալսումների կիրառումը նպաստում է դրանց հետագա բարելավմանը:

Գնահատման գործընթացների կանոնակարգման համար 2015թ.-ից ակադեմիան հաստատել է մի շարք կանոնակարգեր՝ հիմնված կրեդիտային համակարգով ուսուցման պահանջների վրա: Առարկայական ծրագրերում գնահատման մեթոդաբանությունը նկարագրված չէ, փոխարենը «գնահատման մեթոդներն ու չափանիշները» բաժնում ներկայացված է միայն ստուգարքի/քննության անցկացման ձևը: Գրագողության դեմ պայքարի հաստատված մեխանիզմների բացակայությունը կարող է անդրադառնալ գնահատման օբյեկտիվության վրա: Ամբիոններն ունեն թեզերի հաստատված թեմաներ, որոնք վերաբերում են ոլորտի հիմնախնդիրներին: Ակադեմիայում մագիստրոսական թեզերի գնահատման պահանջները սահմանված են համապատասխան մեթոդական ցուցումներով, սակայն գործնականում ոչ միշտ են պահպանվում: Միևնույն ժամանակ մագիստրոսական թեզերի կրկնությունները վտանգում են որակավորման շնորհման արժանահավատությանը: Ավելին, որակավորման շնորհման հանձնաժողովների նախագահումը ռեկտորի կողմից հակասում է բուհական համակարգում ընդունված կարգին:

Ակադեմիան իր և այլ բուհերի նմանատիպ ՄԿԾ-ների համահունչություն ապահովելու նպատակով ուսումնասիրել է արտերկրի և տեղական որոշ բուհերի փորձը: Այնուամենայնիվ, բենչմարքինգի իրականացման քաղաքականության և ընթացակարգերի բացակայության պատճառով, այդ ուսումնասիրությունները ծանոթացման կամ մասնակի կրկօրինակման բնույթ են կրել՝ չհանգեցնելով ՄԿԾ-ների համահունչության: Վերջինս խոչընդոտում է ուսանողների և ՊԴԿ-ի շարժունությանը:

ՄԿԾ-ների մշտադիտարկման կարգի չգործելու պատճառով բուհը դեռ ծրագրերի ամբողջական գնահատում չի իրականացրել: Ներկայումս կիրառվող ուսանողական հարցումները և ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահի հաշվետվությունները թույլ չեն տալիս լիարժեք գնահատել ՄԿԾ-ների իրականացման արդյունավետությունը: Ատեստավորման հանձնաժողովների նախագահի հաշվետվությունները չեն վերհանում խորքային թերություններ և հետագա բարելավման հիմք չեն հանդիսանում:

Եզրահանգում: Հաշվի առնելով Ակադեմիայի կողմից հաստատված ձևաչափին համապատասխան մշակված վերջնարդյունքահեն ՄԿԾ-ների առկայությունը, ծրագրերի մշտադիտարկման և գնահատման մեխանիզմների առկայությունը, դասավանդման և ուսումնառության կիրառվող մեթոդների ուսանողակենտրոն ուղղվածությունը, գնահատման համակարգի բարեփոխումները, ՀՀ այլ բուհերի ՄԿԾ-ներին համահունչ կառուցվածքը՝ կարելի է եզրակացնել, որ ակադեմիայի մասնագիտությունների կրթական ծրագրերը ընդհանուր առմամբ բավարարում են չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար**:

IV. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ուսանողներին տրամադրում է համապատասխան աջակցություն՝ կրթական միջավայրի արդյունավետությունն ապահովելու նպատակով:

Փաստեր

4.1 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման հստակ մեխանիզմներ:

Դիմորդների հավաքագրման համար ակադեմիան կիրառում է տեղեկատվության տարածման տպագիր և էլեկտրոնային մի քանի մեխանիզմներ՝ բուկլետներ, «911 Արտակարգ թերթ», ակադեմիայի կայք, ֆեյսբուքյան էջ, ռադիո-հեռուստատեսություն, ինչպես նաև դպրոցներում մասնագիտական կողմնորոշման աշխատանքներ: Հավաքագրման գործընթացը հեշտացնելու համար բակալավրատում ընդունելության մրցութային քննություններից մեկական առարկաներ փոխարինվել են ոչ մրցութայինով (երկու աստղանիշով): Դիմորդների հավաքագրման նպատակով 2014թ. պայմանագիր է կնքվել Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի հետ:

Դիմորդների ընդունելությունն իրականացնում է ԱԻՆ-ի հաստատած հանձնաժողովը՝ ըստ սահմանված կանոնակարգերի: Առկա համակարգի Փրկարարական գործ և Հրդեհային պաշտպանություն մասնագիտություններով ընդունելության տեղերն անվճար են՝ վարձավճարների ԱԻՆ-ի կողմից փոխհատուցմամբ: Մագիստրոսի կրթական ծրագրում ուսուցումը ներկայումս իրականացվում է միայն հեռակա ձևով: Ընդունելությունը կատարվում է հարցազրույցի հիման վրա: Հստակեցված չեն հարցազրույցի անցկացման չափանիշները (հարցաշար, նվազագույն պահանջներ, անցողիկ միավոր):

Ակադեմիայի ուսումնական բաժինը ուսումնասիրում է ուսանողների ազատման և վերականգնման դինամիկան: Վերջին տարիներին գրանցվել է ուսանողների արտահոսք՝ պայմանավորված արտագաղթով, ընտանեկան ու սոցիալական խնդիրներով: Վերականգնված ուսանողների տոկոսն անկայուն է, հիմնականում վերականգնվում են հեռակա ուսուցման համակարգում: Ընթացիկ ուստարում հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողները ընդհանուր համակազմում կազմում են շուրջ 74%:

4.2 ՄՈՒՀ-ն ունի ուսանողների կրթական կարիքների վերհանման քաղաքականություն և ընթացակարգեր:

Ակադեմիան կարևորում է ուսանողակենտրոն միջավայրի ապահովումը, որի հիմքում տեսնում է ուսանողների կարիքների վերհանումն ու բավարարումը: Ուսանողները կարիքների բարձրաձայնելու հնարավորություն ունեն ԳԽ-ի կազմում (25%) ընդգրկվածության շնորհիվ: Ընդգրկված ուսանողական կազմը ամեն տարի փոփոխվում է՝ առանց ընտրության հստակ չափանիշների: Խորհրդում ընդգրկված ուսանողների կապը մյուսների հետ տեղի է ունենում ուսանողական խորհրդի նիստերի, անմիջական շփման, համացանցի միջոցով: Ուսանողական կառույցների ներկայացուցիչները և կուրսերի ավագները պարբերաբար մասնակցում են դեկանատի նիստերին, հանդիպում

պրոռեկտորների հետ՝ քննարկելու իրենց խնդիրներն ու առաջարկները: Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ ուսանողները բարձրաձայնել են որոշ խնդիրների մասին, որոնք ստացել են լուծումներ, օրինակ. ուսանողների վարձավճարների համար նախատեսված ժամկետների երկարացում, քննությունների վերահանձնում: Ուսանողները միշտ հնարավորություն ունեն դասախոսի հետ անհատական շփման միջոցով բարձրաձայնել իրենց հետաքրքրող խնդիրները և ստանալ պատասխաններ:

Ուսանողների կրթական կարիքների վերհանումն, ըստ կանոնադրության, ՈՒԽ-ի գործունեության հիմնական նպատակներից է: Ուսանողները ՈՒԽ-ին հիմնականում դիմում են բանավոր: Բացի այդ ակադեմիայից բավարարվածությունը պարզելու համար անցկացվում են հարցումներ: Հարցումների արդյունքների բովանդակային վերլուծություններ չկան, դրանց հետադարձ կապը, արդյունքները ուսանողներին չեն հասնում:

Ակադեմիայում տեղադրված է «Արագ արձագանքման արկղ», որի մասին տեղեկացված են ուսանողները, բայց հիմնականում չեն օգտվում:

4.3 ՄՈՒՀ-ը ստեղծում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվություն տրամադրելու հնարավորություններ՝ ուսանողների արդյունավետ ուսումնառությանը նպաստելու համար:

Ակադեմիան լրացուցիչ պարապմունքներ և խորհրդատվություն տրամադրում է ուսումնական խորհրդատուների և ամբիոնների միջոցով: Ուսումնական խորհրդատուների ծառայությունը հասարակական հիմունքներով իրականացնում են կուրսղեկները՝ կազմակերպելով «ռեֆլեքսիայի օրեր»: Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված հարցերի վերաբերյալ տրամադրում խմբային և անհատական խորհրդատվություններ: Փորձագիտական խմբի հանդիպումների ժամանակ ուսանողները բարձր գնահատեցին խորհրդատուների աշխատանքը և հայտնեցին իրենց բավարարվածությունն այդ ծառայություններից:

Բացի այդ, ամբիոններն ըստ հաստատված ժամանակացույցերի կազմակերպում են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություն՝ ամբիոնի առարկաների գծով և հատկապես ամփոփիչ ատեստավորման քննությունների համար: Դիտարկումների ընթացքում արձանագրվեց, որ ակադեմիայում անցկացվող պարապունքների, դրանց ժամանակացույցի վերաբերյալ տեղեկատվությունը փակցված է տարբեր հարկերում: Ամբիոններում առկա էին լրացուցիչ պարապմունքների համար նախատեսված նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների գնահատման թեստեր:

ՊԴԿ-ի կողմից կազմակերպվում են նաև լրացուցիչ պրակտիկ պարապմունքներ միջբուհական մրցույթների մասնակցելու համար, օրինակ. հրշեջ-կիրառական մարզաձևերում պատրաստություն:

4.4 ՄՈՒՀ-ում սահմանված է ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական աշխատակազմին դիմելու հստակ կանոնակարգ և ժամանակացույց:

Ակադեմիայում մշակման փուլում է ուսանողների՝ վարչական կազմին դիմելու կանոնակարգը: Ուսանողներին օժանդակություն և ուղղորդում տրամադրելու նպատակով վարչական կազմը կատարում է ուսանողների ընդունելություն՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Վարչական անձնակազմին դիմելու համար նախատեսված է շաբաթական 3 օր, 13^{30}-16^{00}, պրոռեկտորի և ռեկտորի ընդունելություն՝ շաբաթական 1 օր, 16^{00}-ից: Ուսանողները ընդունելության ժամերից դուրս, ըստ անհրաժեշտության, այլ ժամերի ևս կարող են դիմել

վարչակազմին՝ ուսումնական խորհրդատուի, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության միջոցով: Ուսանողները բավարարված են վարչական աշխատակազմի օժանդակությունից և ուղղորդումից:

4.5 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կարիերային նպաստող ծառայություններ:

Ակադեմիան ՌԾ-ում ամրագրել է. «ընդլայնել սովորողների մասնագիտական կողմնորոշման և կարիերայի պլանավորման խորհրդատվության տրամադրման ծառայությունները»: Միևնույն ժամանակ ակադեմիան իր հիմնական նպատակներից է համարում «աշխատաշուկայում իր շրջանավարտների մրցունակությունն ու աշխատանքով ապահովելը»:

Ակադեմիայում որպես ուսանողների կարիերային նպաստող ծառայություն նախատեսվում է շրջանավարտների և առաջխաղացման (կարիերայի) կենտրոնի հիմնում: Ներկայումս ակադեմիայում շրջանավարտների հետ կապը հասարակական հիմունքներով ապահովում է ֆակուլտետի հեռակա բաժնի մեթոդիստը: ԱԻՆ-ի համակարգում թափուր հաստիքների առկայության դեպքում կապ է հաստատվում շրջանավարտների հետ՝ աշխատանքի տեղավորման համար: ԱԻՆ-ի 2012թ. հրամանի համաձայն, համակարգի ստորաբաժանումներում առաջնահերթ աշխատանքի տեղավորվում են ակադեմիայի շրջանավարտները: Ակադեմիան բարձր առաջադիմությամբ շրջանավարտների ցուցակը պարբերաբար ուղարկում է ԱԻՆ-ի կադրերի վարչություն: Կարիերային անուղղակիորեն նպաստում են նաև ԱԻՆ-ի գործող ստորաբաժանումներում կազմակերպվող պրակտիկաները:

Ինքնավերլուծությունում բերված շրջանավարտների զբաղվածության ցուցանիշով վերջին հինգ տարիներին 40-46% են կազմում գործազուրկ շրջանավարտները, իսկ ավարտելուց հետո ուսումը շարունակում են մոտ 5-10%-ը:

4.6 ՄՈՒՀ-ը աջակցում է ուսանողներին՝ ներգրավվելու հաստատության գիտահետազոտական աշխատանքներում:

Ակադեմիայի ՌԾ-ի խնդիրներից է գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների մասնակցության ապահովումը, որին նպաստելու հիմնական մեխանիզմը բուհի կողմից հրապարակվող գիտամեթոդական ժողովածուն է, որում ուսանողները կարող են տպագրել իրենց հոդվածները:

Բակալավրի ուսանողները գիտահետազոտական ծրագրերում ընդգրկված չեն: Մագիստրանտների գիտահետազոտական աշխատանքները արտահայտվում են մագիստրոսական թեզերի կատարման, պաշտպանության միջոցով: Ըստ ներկայացված տվյալների 2012-16թթ. ուսանողի հեղինակությամբ և/կամ համահեղինակությամբ տպագրվել է ընդամենը 1 գիտական հոդված, իսկ ակադեմիայի գերակա գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված է եղել ընդհանուր 3 մագիստրանտ:

2016թ. բուհում ստեղծվել է ուսանողական գիտական ընկերություն (ՈՒԳԸ)՝ հաստատված կանոնադրությամբ: ՈՒԳԸ-ն ուսանողների համար կազմակերպում է սեմինարներ, գիտական հոդվածների քննարկումներ: 2014-15թթ. կազմակերպվել է միջբուհական երկու ուսանողական գիտաժողով: Ակադեմիան դեռևս անբավարար է գնահատում ՈՒԳԸ գործունեությունը: Փորձագիտական հանդիպումների արդյունքում պարզ դարձավ, որ բացակայում են գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների խթանման մեխանիզմներ:

4.7 ՄՈՒՀ-ում գործում է ուսանողների իրավունքների պաշտպանության համար պատասխանատու մարմին:

Ակադեմիայի ՌԾ-ում ամրագրված է «Նպաստել սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի և ակադեմիայում ուսանողական կառույցի դերի բարձրացմանը»: Ակադեմիան նշում է, որ 2016թ. ԳԽ որոշմամբ ստեղծվել է օրինականության և ուսանողների իրավունքների պահպանման հանձնաժողով, սակայն դիտարկումների արդյունքում պարզվեց, որ նման հանձնաժողով դեռ չի գործում:

Ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով փաստացի զբաղվում է ուսանողական խորհուրդը (ՈՒԽ): ՈՒԽ նախագահը ընդգրկված է ԳԽ-ում: ՈՒԽ-ն ուսանողների հետ կապը ապահովում է կուրսերի ավագների միջոցով: Փորձագիտական հանդիպումների ընթացքում պարզ դարձավ, որ ուսանողները տեղյակ են ՈՒԽ-ի գործունեությունից, վստահում են կառույցին և բարձրացնում են խնդիրներ նրա միջոցով: ՈՒԽ-ն ինքնավար է, հաշվետու չէ, կցված չէ բուհի կառավարման որևէ մարմնի: Փորձագիտական խումբը ռեսուրսների դիտարկման ժամանակ արձանագրեց, որ ՈՒԽ-ին հատկացված է մեկ փոքր դասասենյակ, չկան անհրաժեշտ ռեսուրսներ արդյունավետ գործունեություն ծավալելու համար, մասնավորապես, բացակայում է համակարգիչ, ուսանողական առօրյայի կազմակերպման դիդակտիկ նյութեր և այլն:

4.8 ՄՈՒՀ-ում գործում են ուսանողների կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ:

Ակադեմիայում դեռևս չեն գործում ուսանողներին մատուցվող կրթական, խորհրդատվական և այլ մատուցվող ծառայությունների մշտադիտարկման, գնահատման և որակի ապահովման հստակ մշակված մեխանիզմներ: Ներկայումս որոշ բաղադրիչների գնահատումն իրականացվում է դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական հարցման, շրջանավարտների վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքի ուսումնասիրության հարցումների միջոցով: Այցի ընթացքում պարզվեց, որ ուսանողները մասնակցում են հարցումներին, սակայն դրանց հետագա արդյունքների և ազդեցության մասին տեղեկացված չեն:

Դատողություններ: Ակադեմիայում գործող ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության մեխանիզմները հնարավորություն են տալիս ձևավորել ուսանողական համակազմ, սակայն մագիստրատուրայի ընդունելության չափանիշները դեռ ամբողջությամբ հստակեցված չեն: 2014թ. Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի հետ կնքված պայմանագիրը հնարավորություն է տվել դիմորդներ հավաքագրել միայն առարկայական տարբերությունների հանձնմամբ: Դիմորդների հավաքագրման համար կիրառվող տարբեր մեխանիզմները, մյուս կողմից մատչելի վարձավճարի և ուսման վճարի փոխհատուցման քաղաքականությունը նպաստում են ուսանողական կայուն համակազմի ձևավորմանը: Բակալավրի 2 մասնագիտություններով ուսուցման ամբողջությամբ անվճար լինելը կարևոր խթան է դիմորդների հավաքագրման համար: Չնայած նրան, որ ակադեմիայի ուսանողների ազատման և վերականգնման ցուցանիշներն անկայուն են (կտրուկ աճել են վերջին 2 տարիներին), դրանց վերահսկման ուղղությամբ բուհը դեռ մեխանիզմներ չի ստեղծել:

Բուհում ուսանողների կրթական կարիքների վերհանումը արդյունավետ իրականացվում է կուրսղեկների և դասախոսների հետ անմիջական կապի, ղեկավար մարմինների հետ պարբերաբար հանդիպումների շնորհիվ: Այդ նպատակով գործող մյուս մեխանիզմները՝ հարցումները, խորհուրդներում ներգրավվածությունը, ՈՒԽ-ն, արագ արձագանքման արկղը, դեռևս բավարար արդյունավետ չեն գործում:

Ուսանողների բավական բարձր գնահատականը ուսումնական խորհրդատուների աշխատանքին վկայում է լրացուցիչ պարապմունքների կազմակերպման և խորհրդատվությունների տրամադրման արդյունավետության մասին: Բացի այդ ամբիոններում հաստատված ժամանակացույցերով կազմակերպվող լրացուցիչ մասնագիտական խորհրդատվությունները նպաստում են հատկապես ամփոփիչ ատեստավորման քննություններին պատրաստությանը:

Փորձագիտական խումբը դրական է համարում վարչակազմին դիմելու հաստատված ժամանակացույցի առկայությունը: Չնայած այն հանգամանքին, որ վարչակազմին դիմելու ժամերը սահմանված են առկա բաժնի ուսանողների դասերի ավարտից հետո, սակայն ուսանողներն ըստ անհրաժեշտության ընդունելության ժամերից դուրս ևս կարող են դիմել ամբիոնի վարիչին, դեկանին, ուսումնական բաժնի վարիչին, պրոռեկտորին:

Չնայած նրան, որ ակադեմիան իր հիմնական նպատակներից է համարում աշխատաշուկայում իր շրջանավարտների մրցունակությունն ու աշխատանքով ապահովելը, սակայն այս ուղղությամբ աշխատանքները դեռևս համաձայն ՌԾ-ի պլանավորման չեն իրականացվում: Շրջանավարտների և առաջխաղացման (կարիերայի) կենտրոնի բացակայությունը վատ է անդրադառնում այդ գործընթացների վրա, ինչի հետևանքով առկա է շրջանավարտ-ակադեմիա թույլ կապ: Ֆակուլտետի մեթոդիստի կողմից շրջանավարտների հետ կապի ապահովումը դեռ էական ազդեցություն չունի վերջիններիս կարիերայի վրա: Դա է վկայում նաև շրջանավարտների հարցումների արդյունքում ստացված գործազրկության բավական մեծ տոկոսները:

Գիտահետազոտական աշխատանքներում ուսումնառողների ներգրավման ոլորտում ցուցանիշները բավական ցածր են: Այս առաքելությունը կրող ՈՒԳԸ-ն դեռևս կազմավորման փուլում է: Այդ աշխատանքներում ուսանողների ներգրավումը խթանելու մեխանիզմների բացակայությունը հանգեցնում է նրանց մոտ մոտիվացիայի անկման:

Ակադեմիան փորձում է նպաստել սովորողների և աշխատողների շրջանում իրենց իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը: Ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող հիմնական կառույցը ՈՒԽ-ն է, որը դեռևս բավարար արդյունավետությամբ չի գործում: Ելնելով այն հանգամանքից, որ ՈՒԽ-ն և ՈՒԳԸ-ն դեռևս չունեն գործունեություն ծավալելու համար բավարար փորձ և ռեսուրսներ, փորձագիտական խումբը գտնում է, որ այս կառույցներին ղեկավար մարմիններից կցված համակարգողը կնպաստեր արդյունավետության բարձրացմանը:

Ուսանողներին մատուցվող ծառայությունների գնահատման համար ներկայումս կիրառվող հարցումները դեռևս բավարար արդյունավետությամբ չեն գործում: Դրանց հուսալիության գնահատման և ծառայությունների վրա արդյունքների ազդեցության բացակայությունը ռիսկային է դարձնում մեխանիզմի գործունակությունը:

Եզրահանգում: Հաշվի առնելով դիմորդների հավաքագրման, ընտրության և ընդունելության համար գործող տարբեր մեխանիզմները, ուսանողության համակազմի ապահովման համար կիրառվող զեղչերի և ուսման մատչելի վարձի քաղաքականությունը, ուսանողների կրթական կարիքների վերհանման մեխանիզմների առկայությունը, տրամադրվող խորհրդատվության և լրացուցիչ պարապմունքների արդյունավետ կազմակերպումը, վարչակազմին դիմելու հստակ ժամանակացույցի առկայությունը և նրանց հասանելիությունը ուսանողներին, կարիերային նպաստող ԱԻՆ-ի ծառայությունների հնարավորությունը, փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն ընդհանուր առմամբ ապահովում է ուսանողների համար արդյունավետ կրթական միջավայր:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

V. ՊՐՈՖԵՍՈՐԱԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԿԱԶՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ի առաքելությանը հասնելու և ՄԿԾ-ների նպատակներն իրականացնելու համար հաստատությունն ապահովված է անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմով:

Փաստեր

5.1 ՄՈՒՀ-ում գործում են կրթական ծրագրերն իրականացնելու համար անհրաժեշտ որակավորումներ ունեցող պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի ընտրության քաղաքականություն և ընթացակարգեր:

Ակադեմիայի ՊԴԿ բաղկացած է փրկարար ծառայողներից և քաղաքացիական կազմից: Փրկարար ծառայողների համար սահմանված են պահանջներ «Փրկարար ծառայության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության «Հայաստանի փրկարար ծառայության ուսումնական հաստատության ՊԴԿ-ին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» և «Հայաստանի փրկարար ծառայության ուսումնական հաստատությունում ուսման կանոնագիրքը հաստատելու մասին» որոշումներով: Համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով հրավիրվում են ՀՀ ԱԻՆ-ի համակարգի, կրթության և տնտեսության տարբեր ոլորտների առաջատար մասնագետներ, գիտությունների դոկտորներ և թեկնածուներ, որոնք, որպես կանոն պետք է ունենան դասընթացների դասավանդման ուղղվածությանը համապատասխանող բազային կրթություն, հետևողականորեն զբաղվեն հետազոտական և գիտամեթոդական գործունեությամբ, համապատասխան գործունեության ոլորտում ունենան աշխատանքային փորձ: ՊԴ պաշտոնների տեղակալումն իրականացվում է մրցութային կարգով, որի պահանջները սահմանվում են համապատասխան պաշտոնի անձնագրերով: Ակադեմիան չունի ուսումնաօժանդակ (ՈՒՕ) կազմի ընտրության հաստատված քաղաքականություն: Փաստացի ՈՒՕ կազմը հիմնականում ընտրվում է ակադեմիայի լավագույն շրջանավարտներից:

5.2. ՄՈՒՀ-ի յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանված են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ:

Ակադեմիայում փրկարար ծառայության ՊԴԿ-ի մասնագիտական որակներին ներկայացվող հիմնական պահանջները ձևակերպված են նախորդ կետում նշված օրենսդրական փաստաթղթերում: Ըստ տարակարգերի դասախոսական կազմի ընտրության, պաշտոնների տեղակալման և առաջընթացի ապահովման փորձի հետ մեկտեղ դեռևս չկան դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող սահմանված պահանջներ՝ մյուս կրթական ծրագրերի համար: Ակադեմիան նախատեսում է մշակել ամբիոնների կողմից կոնկրետ կրթական ծրագրերը սպասարկող դասախոսների մասնագիտական գիտելիքներին և կարողություններին ներկայացվող պահանջները՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների: ՄԿԾ-ներում չկան ձևակերպված ՊԴԿ-ին ներկայացվող պահանջներ:

5.3 ՄՈՒՀ-ը սահմանել է հստակ քաղաքականություն և ընթացակարգեր դասախոսական կազմի պարբերաբար գնահատման համար:

Ակադեմիայի ՊԴԿ-ի պարբերական գնահատումը սահմանված է ՌԾ-ի խնդրով. «Իրականացնել ՊԴ առկա ներուժի գնահատում՝ կրթական ծրագրերի որակի ապահովման պահանջների համապատասխանության տեսակետից»: Ակադեմիայում գործում են ՊԴԿ-ի գնահատման մեխանիզմներ՝ հարցումներ, անհատական աշխատանքների պլանավորում և հաշվետվություն, գիտամանկավարժական գործունեության գնահատման վարկանիշային թերթիկ, ամբիոնների վարիչների և դեկանի կողմից իրականացվող դասալսումներ՝ ըստ հաստատված ժամանակացույցի, փոխադարձ դասալսումներ: Հարցումները դեռ նոր են ներդրվել, և դրանց արդյունքների ամբողջական վերլուծություններ դեռևս չկան: Ակադեմիան չունի գնահատման մեխանիզմների հետազդեցության ընթացակարգեր: Առանձին դեպքերում գնահատման արդյունքում կատարվել է դասախոսի ժամերի կրճատում, եզակի դեպքում՝ նաև հեռացում: Ակադեմիայի ուսանողները և շրջանավարտները բարձր են գնահատում ՊԴԿ-ի մասնագիտական և անձնային որակները:

5.4 Պարբերաբար իրականացվող ներքին և արտաքին գնահատումների արդյունքում բացահայտված կարիքներին համապատասխան՝ ՄՈՒՀ-ն իրականացնում է դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

Ակադեմիան որպես ռազմավարական խնդիր ամրագրել է «բարելավել և համալրել պրոֆեսորադասախոսական կազմը՝ կրթական ծրագրերի բարեփոխումներին և որակի ապահովման արդի պահանջներին համահունչ», որի իրականացման համար կարևորում է արտերկրում դասախոսների վերապատրաստման հնարավորությունների ընդլայնումը:

Փրկարար ծառայության ՊԴԿ-ն կատարելագործմանն ուղղված վերապատրաստումներ է անցել աշխարհի տարբեր երկրների համապատասխան կառույցներում: Ակադեմիայում մշակվել է ՊԴԿ-ի կրեդիտային համակարգով որակավորման բարձրացման կրթագիտական ծրագիր, որը կգործի նոր ուսումնական տարվանից: Ծրագրում որակավորման բարձրացման ուղղություններն ու թեմաները ընտրվել են ՀՀ այլ բուհերի օրինակով: Դրանց հիմքում ընկած չեն ակադեմիայի ՊԴԿ-ի ներքին և արտաքին գնահատումները:

5.5 ՄՈՒՀ-ը երաշխավորում է մասնագիտությունների կրթական ծրագրերի համապատասխան պրոֆեսորադասախոսական կազմով ապահովվածության կայունությունը:

Ակադեմիան դեռևս չունի հիմնական ՊԴԿ-ի կայունությունն ապահովող հստակ մշակված քաղաքականություն, սակայն նշում է, որ այս ուղղությամբ իրականացնում է քայլեր: Այսպես, ըստ ՊԴԿ-ի պաշտոնների տեղակալման կանոնակարգի, իրականացվում են պաշտոնի բարձրացումներ և դրան համապատասխան աշխատավարձի բարձրացում: ՊԴԿ-ի կայունությունն ապահովող մյուս մեխանիզմը մենթորության քաղաքականություն է, ըստ որի փորձառու դասախոսներն աջակցում են սկսնակներին: Ակադեմիան կարևորում է երիտասարդ մասնագետների ներգրավվումը՝ առաջնայնություն տալով իր շրջանավարտներին: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ ՊԴԿ-ի միջին տարիքային ցուցանիշը 35-40-ի մոտ է: Արտակարգ իրավիճակների մասնագիտական որոշակի ոլորտներում առկա է մասնագետ-դասախոսների սակավություն:

5.6 ՄՈՒՀ-ում գործում են պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական առաջընթացի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացը ակադեմիան տեսնում է համապատասխան պաշտոններում՝ պրոֆեսոր, դոցենտ, ասիստենտ, դասախոս, նրանց առաջադրմամբ: ՊԴԿ-ին աջակցելու, նրանց մասնագիտական կարողությունները զարգացնելու համար ակադեմիայի ներքին կարգապահական կանոններով սահմանված է նաև խրախուսման քաղաքականություն: Խրախուսման նպատակով կարող է միջնորդություն ներկայացվել վերադաս մարմիններին՝ աշխատակցին մեդալով, պատվոգրով պարգևատրելու և պատվավոր կոչումներ շնորհելու համար: Ակադեմիան ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացին նպաստող մեխանիզմ է դիտարկում նաև կոնֆերանսներում մասնակցությունը, իր ‹‹Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ›› գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուում անվճար տպագրությունը:

5.7 ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ վարչական և ուսումնաօժանդակ աշխատակազմ ռազմավարական նպատակների իրականացման համար:

Ներկայումս ակադեմիան ունի 43 վարչական և 35 ուսումնաօժանդակ աշխատող: Ակադեմիան որպես թույլ կողմ նշում է, որ բացակայում են վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման մասնագիտական չափանիշները և կատարելագործման մեխանիզմները: Այցի ընթացքում պարզ դարձավ, որ վարչական և ուսումնաօժանդակ կազմի շրջանում մեծամասամբ առկա է պաշտոնների համատեղում՝ հիմնականում հասարակական հիմունքներով: Մասնավորապես, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը համակարգում է նաև գիտության ոլորտը, փրկարարական ամբիոնի վարիչը՝ միջազգային կապերի, հեռակա բաժնի մեթոդիստը՝ կարիերայի կենտրոնի աշխատանքները, ուսումնական բաժնի վարիչը նաև գիտական քարտուղարն է և այլն: Ակադեմիան դեռևս չի գնահատում վարչական և ուսումնաօժանդակ կազմի համապատասխանությունը ՌԾ-ի նպատակների իրականացմանը: Հարկ է նշել, որ ուսանողները և դասախոսները գոհ են վարչական և ուսումնաօժանդակ կազմի աշխատանքից:

Դատողություններ: Դասախոսական կազմի ձևավորման հաստատված օրենսդրական փաստաթղթերի հիման վրա ակադեմիան իր ՊԴԿ-ն կարողացել է համալրել տարբեր բնագավառի (ակադեմիական, պրակտիկ, ծառայող և քաղաքացիական կազմ) մասնագետներով: Հատկանշական է ԱԻՆ-ի որակյալ փրկարար ծառայողների ներգրավումը դասախոսական կազմում, ինչը հնարավորություն է տվել նրանց պրակտիկ գիտելիքներն ու

փորձը փոխանցել ուսանողներին: Միևնույն ժամանակ համատեղությամբ և ժամավճարային հիմունքներով այլ բուհերի առաջատար մասնագետների ներգրավումը հնարավորություն է տալիս ձևավորել ՊԴ բազմապրոֆիլ կազմ: ՈՒՀ կազմի ձևավորումը դեռ բավարար հստակեցված չէ:

Ըստ կրթական ծրագրերի՝ դասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հաստատված պահանջների բացակայությունը կարող է խոչընդոտել ծրագրերի նպատակների հստակ իրականացմանը: Սակայն, գիտակցելով դրանց կարևորությունը ՄԿԾ-ների արդյունավետ իրականացման տեսանկյունից, ակադեմիան նախատեսում է մշակել դրանք:

ՊԴԿ-ի գնահատման նպատակով ակադեմիան կիրառում է ինչպես անհատական, այնպես էլ կոլեկտիվ գնահատման մեխանիզմներ, որոնք սակայն փոխկապակցված չեն: Գնահատման մեխանիզմներից որոշները ակադեմիայում նոր են ներդրվել և բավարար արդյունավետությամբ դեռ չեն գործարկվում:

Փորձագիտական խումբը դրական է գնահատում, որ ակադեմիան բավական ակտիվ իրականացնում է ՊԴԿ-ի շարունակական վերապատրաստումներ արտերկրում և ՀՀ-ում: Դրան են նպաստում գործող համագործակցության պայմանագրերը: Արդյունքում դասախոսների ձեռք բերած հմտությունները նպաստում են ժամանակակից փորձի ներդրմանը ուսուցման մեջ: Սակայն հարկ է նշել, որ այդ վերապատրաստումները վերաբերում են հիմնականում փրկարարներին և հիմնված չեն ՊԴԿ-ի ներքին և արտաքին գնահատման արդյունքների վրա: Հստակեցված չէ նաև դրանց նպատակայնությունը կրթական ծրագրի առաջնահերթ կարիքներին համապատասխան:

Չնայած որոշ ոլորտներում առկա մասնագետների սակավության՝ ակադեմիան փորձում է ապահովել դասախոսական կազմի կայունությունը՝ պաշտոնային առաջընթացի միջոցով աշխատավարձի բարձրացման, մենթորության քաղաքականության և դասախոսներին անհրաժեշտ աշխատանքային միջավայր ապահովելու միջոցով: Ակադեմիան քայլ է ձեռնարկում ՊԴԿ-ի սերնդափոխության ուղղությամբ՝ ուղղորդելով իր լավագույն սաներին հայցորդության այլ բուհեր:

ՊԴԿ-ի մասնագիտական առաջընթացը ակադեմիան կարողանում է ապահովել համապատասխան պաշտոններում նրանց առաջադրմամբ, ըստ այդմ կոչումների բարձրացմամբ և արդյունավետ աշխատանքի դեպքում կիրառվող խրախուսման քաղաքականությամբ: Բացի այդ, գիտահետազոտական աշխատանքներում առաջընթացի արդյունավետ մեխանիզմ է գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուում անվճար տպագրելու հնարավորությունը:

Իր վարչական և ՈՒՀ կազմի աշխատանքները ակադեմիան փորձում է նպատակաուղղվել ՌԾ-ի իրականացմանը՝ ՌԾ-ում առանձնացնելով, թե ստորաբաժանումներից յուրաքանչյուրը ինչ խնդիրների համար է պատասխանատու: Չնայած դրան, դեռ մշակված չեն վարչական և ուսումնաօժանդակ կազմի ատեստավորման մասնագիտական չափանիշներ, կատարելագործման մեխանիզմներ, ինչը խոչընդոտում է ռազմավարական նպատակների իրականացման տեսանկյունից վարչական և ՈՒՀ կազմի գնահատմանը և համապատասխանեցմանը: Բուհի փոքր լինելով պայմանավորված՝ առկա է վարչական և ՈՒՀ կազմի շրջանում պաշտոնների համատեղում, ինչը կարող է խոչընդոտել աշխատանքների արդյունավետ իրականացմանը: Այնուամենայնիվ, ակադեմիայի ներքին շահակիցները բարձր են գնահատում վարչական և ՈՒՀ կազմի աշխատանքի որակը:

Եզրահանգում: Հաշվի առնելով ակադեմիայի կրթական ծրագրերի նպատակներին համապատասխան ՊԴ և ՈՒՀ կազմով ապահովվածությունը, տարածաշրջանում ոլորտի առաջատար մասնագետների ներգրավումը կրթական գործընթացում, ՊԴԿ-ի գնահատման, խրախուսման սահմանված մեխանիզմների, առաջընթացին ուղղված քաղաքականության և ընթացակարգերի առկայությունը, փրկարար ծառայության դասախոսների արտերկրում հաճախակի վերապատրաստումները, իր լավագույն շրջանավարտներով ՊԴԿ-ի կայունության ապահովումը և խրախուսումը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհն ապահովված է իր առաքելության և ՄԿԾ համապատասխան անհրաժեշտ մասնագիտական որակներ ունեցող ՊԴ և ՈՒՀ կազմով:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VI. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտական գործունեության իրականացումը և կապն ուսումնառության հետ:

Փաստեր

6.1 ՄՈՒՀ-ում առկա է հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարություն:

Ակադեմիան ՌԾ-ում ամրագրել է. «Ակադեմիայի գիտական ներուժի կայուն զարգացման և հետազոտությունների արդյունավետության բարձրացման ապահովում», որպես խնդիրներ սահմանելով. «ստեղծել հիմքեր ՈԱՇ-ի պահանջներին համահունչ ակադեմիայում որպես բարձրագույն կրթության 3-րդ աստիճան՝ ասպիրանտուրա հիմնելու ուղղությամբ, ներգրավել գիտական հետազոտություններում դասախոսական կազմին, ձգտել ակադեմիայի միջազգային գիտական համագործակցությանը և ինտեգրմանը Եվրոպական հետազոտական տարածքին»:

2016թ. ակադեմիան հաստատել է 2017-22թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգ, որտեղ գիտական գործունեության գերակա ուղղություններ են սահմանվել. «ճգնաժամային կառավարման, քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, տարածաշրջանային, տեխնոլոգիական զարգացումը, տնտեսական և անվտանգությանը, մշակույթի ձևավորման հիմնախնդիրները»:

6.2 ՄՈՒՀ-ն ունի երկարաժամկետ ռազմավարություն և միջնաժամկետ ու կարճաժամկետ ծրագրեր, որոնք արտահայտում են հետազոտության ոլորտում ՄՈՒՀ-ի հետաքրքրությունները և հավակնությունները:

Ակադեմիան իր ՌԾ-ում սահմանել է հետազոտության ոլորտում երկարաժամկետ ռազմավարության հիմնական ուղղությունները: Միջնաժամկետ ծրագրեր բուհում չկան: Հետազոտական ոլորտում կարճաժամկետ ծրագրերն արտահայտվում են ամբիոնների տարեկան աշխատանքային պլաններում: Այդ պլանների իրականացումը չի կապվում ակադեմիայի երկարաժամկետ ռազմավարության հետ: Ամբիոնները կատարում են

հետազոտություններ՝ յուրաքանչյուրն իր ուղղվածությամբ: Դիտարկումների արդյունքում պարզվեց, որ ակադեմիայում ամբիոնների գիտահետազոտական թեմաները փոխկապակցված չեն և այս ոլորտում ամբիոնների միջև փոխգործակցությունը բացակայում է: Ակադեմիան ընդունում է, որ առայժմ դասախոսների փոքր մասն է ներգրավված հետազոտություններում, առկա է գիտական ներուժի լուրջ խնդիր:

2016թ.-ին ակադեմիան հաստատել է «Ուսումնական և գիտահետազոտական գործունեության մշտադիտարկում» փաստաթուղթը, որտեղ առկա են մշտադիտարկման ձևաչափեր, սակայն դեռ հետազոտական ծրագրերի իրականացման արդյունավետության և դրանց արդիականության հետ կապված վերլուծություններ չկան:

6.3 ՄՈՒՀ-ն ապահովում է հետազոտությունների իրականացումը և իր զարգացումը՝ հստակ քաղաքականության և ընթացակարգերի միջոցով:

Ակադեմիայում հետազոտական աշխատանքները համակարգում են ուսումնական գծով պրոռեկտորը (գիտական գծով պրոռեկտոր ակադեմիան չունի) և ուսումնական բաժնի վարիչը, ով համատեղում է նաև գիտ. քարտուղարի գործառույթները:

Իր հետազոտությունների իրականացման և զարգացման քաղաքականությունը Ակադեմիան տեսնում է հետազոտության համար անհրաժեշտ տարածքային և նյութատեխնիկական պայմանների բարելավմամբ, անհրաժեշտ գիտակրթական ռեսուրսների տրամադրմամբ: Այս ուղղությամբ կարևոր ձեռքբերումներից է 2010թ. հիմնված «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուն, որն ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի «Ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական հրատարակությունների ցուցակ»-ում: Ժողովածուում տպագրվում են ակադեմիայի, *ՀՀ այլ բուհերի, Լեհաստանի Հանրապետության, ՌԴ-ի (Սանկտ Պետերբուրգ), Ճապոնիայի, Կորեայի ՊԴԿ-ի գիտական ու գիտամեթոդական աշխատանքներ: Հրատարակման ծախսերը հոգում է ակադեմիան: Ներկայացվող գրախոսված և չգրախոսված հոդվածները քննարկվում են համապատասխան ամբիոններում և չգրախոսված հոդվածները գրախոսվում խմբագրական 3 (ըստ մասնագիտությունների) խորհուրդների կողմից: Ներքին չգրախոսված հոդվածների արտաքին գրախոսում չի իրականացվում:*[10]

«Պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության վարկանիշային գնահատման կարգ»-ի համաձայն՝ հրատարակությունների, դոկտորական կամ թեկնածուական ատենախոսության պաշտպանության, թեկնածուական մինիմումների հանձնման համար դասախոսները ստանում են սահմանված միավորներ (առավելագույնը 20):

2017թ. ակադեմիան կազմակերպել է միջազգային գիտաժողով, որտեղ զեկույցների գերակշռող մասը նվիրված է եղել տարածաշրջանի հիմնախնդիրներին, ինչպես նաև քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների բնազավառում բնակչության պաշտպանությանն ու ուսուցմանը: Մյուս կողմից, վերջին 3 տարիների կտրվածքով «Ճգնաժամային կառավարման» և «Փրկարարական գործ» ամբիոնների դասախոսների կողմից ղեկավարված 95 մագիստրոսական թեզերից 92-ը նվիրված են եղել տարածաշրջանի վերոհիշյալ հիմնախնդիրներին: Ակադեմիայի հիշյալ ամբիոնների 3

[10] Տեքստը վերաշարադրվել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

հայցորդ դասախոսների կողմից հետազոտվող թեզերի թեմաները նույնպես վերաբերում են տարածաշրջանի հիմնախնդիրներին:

Բյուջեում գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման համար հատուկ հոդված սահմանված չէ, տրամադրվող ֆինանսների ուղղվածությունը զուտ գիտական հետազոտություններին չի վերաբերում: Ակադեմիան հատկացնում է որոշակի գումար գիտաժողովների և տպագրությունների համար: Հետազոտությունների ապրանքայնացման դեպքերը բացակայում են:

6.4 ՄՈՒՀ-ը կարևորում է հետազոտական գործունեության միջազգայնացումը:

«Հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացների խթանումը և եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրումը» ակադեմիայի ռազմավարական խնդիրներից է: Հետազոտությունների միջազգայնացումը, որպես հիմնախնդիր, սահմանված է նաև 2017-22թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգում:

Ակադեմիան դեռևս չունի համատեղ միջազգային հետազոտական գործող ծրագրեր: ՊԴԿ-ի հրատարակած գիտական աշխատանքներն արտասահմանյան գիտական ամսագրերում սակավաթիվ են և հիմնականում հումանիտար ուղղվածության: Այս ուղղությամբ կատարված աշխատանքները սահմանափակվում են «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» ժողովածուում օտարերկրյա հեղինակների գիտական աշխատությունների տպագրումով և միջազգային գիտաժողովներին ու աշխատաժովներին ակադեմիայի աշխատակիցների մասնակցությամբ: Ակադեմիան փորձում է օժանդակել հետազոտության միջազգայնացմանը՝ ՊԴԿ-ի համար օտար լեզվի ուսուցման անվճար դասընթացներ կազմակերպելով:

6.5 ՄՈՒՀ-ում գործում են հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի փոխկապակցման մեխանիզմներ:

Ուսանողներին գիտահետազոտական աշխատանքների կատարման սկզբունքներին ծանոթացնելու նպատակով ակադեմիան տրամադրում է մեթոդական ձեռնարկներ, որտեղ ներկայացված են ռեֆերատներ, կուրսային աշխատանքներ և մագիստրոսական թեզեր գրելու համար անհրաժեշտ հիմնական տեղեկատվությունը: Դասավանդողներն ուսանողներին իրենց հետազոտությունների արդյունքներին հաղորդակից են դարձնում առարկայի շրջանակներում կազմակերպվող թեմատիկ դասախոսությունների, տրամադրվող գրականության միջոցով: Ուսանողները մասնակցում են ուսանողական գիտաժողովների և սեմինարների: 2014-16թթ. ակադեմիայի ուսանողները ներկայացրել են 34 ուսումնագիտական զեկույցներ:

Ուսանողները հետազոտական որևէ ծրագրում ընդգրկված չեն: Առանձին դեպքերում ուսանողներից կամավորական սկզբունքով ներառվում են միջազգային համագործակցության շրջանակներում իրականացվող հետազոտական ծրագրերում՝ հիմնականում տվյալների հավաքագրմանը օժանդակելու նպատակով: Մագիստրատուրայի ուսանողներն հետազոտական աշխատանքները ներկայացնում են թեզերի միջոցով, սակայն, հետազոտության պահանջը թեզերում հետևողականորեն չի կիրառվում: Ուսումնասիրված թեզերի մեծ մասում հետազոտության նորարարական բաղադրիչը բացակայում էր: Փորձագիտական այցի ընթացքում պարզվեց, որ մագիստրատուրայի ուսանողները իրենց թեզի թեմաների ընտրությունը կարող են երկարաձգել մինչև ուսման առաջին տարվա վերջը:

Առկա են մագիստրոսական թեզերի թեմաների կրկնություններ վերջին 3 տարիների կտրվածքով, իսկ առանձին դեպքերում աշխատանքները ամբողջությամբ են կրկնվում:

2016թ. ստեղծված ՈՒԳԸ-ն անցկացնում է գիտական հոդվածների քննարկումներ և օժանդակում ուսանողական գիտաժողովների կազմակերպմանը: Փորձագիտական այցի հանդիպումների մասնակից ուսանողների ճնշող մեծամասնությունը տեղյակ չէր ՈՒԳԸ-ի գործունեության մասին:

Դատողություններ: Ակադեմիան հետազոտական ոլորտում իր ռազմավարությունը ամրագրել է ՌԾ-ում, որպես առանձին նպատակ՝ կարևորելով ոչ միայն դասախոսական կազմի ներգրավվածությունը, այլ նաև միջազգային գիտական համագործակցությունը և ինտեգրումը Եվրոպական հետազոտական տարածքին: Հետազոտական աշխատանքներում Ակադեմիան իր հիմնական հետաքրքրությունները կապում է իր առաքելության հետ՝ կենտրոնանալով քաղաքացիական պաշտպանության ու արտակարգ իրավիճակների բնագավառում բնակչության պաշտպանության ու ուսուցման հիմնախնդիրների հետազոտման թեմաների վրա: Այդ բնագավառում ՀՀ այլ ուսումնական և գիտահետազոտական հաստատությունների բացակայությունը հանգեցնում է հետազոտական աշխատանքների առաջընթացի դանդաղ աճին, համատեղ հետազոտությունների բացակայությանը:

Հետազոտական ոլորտում միջնաժամկետ պլանավորման բացակայությունը, կարճաժամկետ ծրագրերի՝ երկարաժամկետ ռազմավարության հետ կապի բացակայությունը, ծրագրերի իրականացման արդյունավետության և դրանց արդիականության հետ կապված վերլուծությունների բացակայությունը վտանգում են ռազմավարական նպատակի իրագործումը: Այս իմաստով դրական դեր կարող էր խաղալ նաև ամբիոնների կողմից հետազոտական ոլորտում համագործակցության ձևավորումը և հետազոտական ծրագրերի փոխկապակցումը՝ հնարավորություն ստեղծելով գիտական խնդրների բազմակողմանի և խորը ուսումնասիրության համար:

Հետազոտությունների իրականացման և այս ուղղությամբ իր զարգացումն ապահովելու տեսակետից ոլորտը դեռ հստակ կանոնակարգված չէ: Ակադեմիան իր հետազոտությունների իրականացման և զարգացման քաղաքականությունն իրականացնում է ՊԴԿ-ի հետազոտության արդյունքները իր գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուում սեփական ֆինանսավորմամբ հրատարակման միջոցով: Հրապարակման նյութերի արտաքին գրախոսման բացակայությունը կարող է նվազեցնել գնահատման օբյեկտիվությունը և բերել արդյունքների մեկուսացման:

Բյուջեում գիտահետազոտական աշխատանքների իրականացման ֆինանսավորման համար հատուկ հոդված սահմանված չէ, ինչը խիստ ռիսկային է դարձնում Ակադեմիայի հետազոտության ոլորտում ռազմավարական նպատակի իրագործումը: Ակադեմիան դեռևս չունի հետազոտությունների ապրանքայնացման փորձ, որը կարող էր եկամտի լրացուցիչ աղբյուր ծառայել:

Չնայած հետազոտական աշխատանքների միջազգայնացման և Եվրոպական հետազոտական տարածքին ինտեգրման ռազմավարական խնդրի սահմանմանը, ակադեմիան այս ուղղությամբ դեռ հաջողություններ չունի: Այդ են վկայում հետազոտական միջազգային ծրագրերի բացակայությունը և արտասահմանյան գիտական ամսագրերում ՊԴԿ-ի հրատարակումների փոքր թիվը:

Ուսանողների ներգրավվածությունն ակադեմիայի կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներում ցածր է: Հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցվածության հստակ մեխանիզմների բացակայության, ինչպես նաև ՊԴԿ-ի հետազոտական աշխատանքներում ուսանողների թույլ ներգրավվածության (բակալավրի դեպքում դրա բացակայության) արդյունքում գիտական հետազոտությունների և ուսումնական գործընթացի միջև կապն ակադեմիայում թույլ է, իսկ ուսումնական գործընթացում հետազոտական բաղադրիչի ներդրումը մնում է զուտ դասախոսի հայեցողությանը: 2016թ. հիմնված ՈՒԳԸ-ի գործունեությունը դեռ բավարար համարել չի կարելի:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ակադեմիան չունի հետազոտական ոլորտում երկարաժամկետ ռազմավարությանը համահունչ միջնաժամկետ և կարճաժամկետ հստակ պլանավորում, հետազոտության - բյուջե կապի բացակայությունը, հատկացվող ֆինանսական սուղ միջոցները նախատեսված չեն հետազոտական աշխատանքների իրականացման համար, չկան միջազգային հետազոտական ծրագրեր, ցածր է դասախոսների և ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում, սակավաթիվ են արտասահմանյան ամսագրերում տպագրված հոդվածները, հետազոտական և ուսումնական գործընթացների միջև փոխկապակցվածության հստակ մեխանիզմերը բացակայում են, կարելի է փաստել, որ ակադեմիան դեռևս չի ապահովում հետազոտական գործունեության բավարար իրականացում և կապը ուսումնառության հետ:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

VII. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար:

Փաստեր

7.1.ՄՈՒՀ-ում առկա է մասնագիտությունների կրթական ծրագրերի իրականացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր:

Ակադեմիան ձգտում է «ապահովել տեխնոլոգիապես հագեցած, ժամանակակից ուսումնական և աշխատանքային միջավայր՝ բոլոր սովորողների և աշխատողների արդյունավետ գործունեությունը խթանելու համար»: Առկա է լիցենզավորման պահանջներին համապատասխան ուսումնական տարածք, գործնական պարապմունքների բազա՝ Լուսակերտի վարժահրապարակը: Բուհում ուսուցումն իրականացվում է 2 հերթափոխով: Ակադեմիայում առկա են կահավորված լսարաններ, ցուցադրությունների կազմակերպման համար պրոյեկտորներ, ուսումնական կաբինետներ, համակարգչային 3 լսարաններ: Կաբինետները ստեղծվել են միջազգային համագործակցության ծրագրերի շրջանակներում. այդ թվում՝ ճգնաժամային կառավարման մինի կենտրոն-կաբինետը, կենսաբանաքիմիական ու փրկարարական, առաջին բուժօգնության կաբինետները՝ հագեցած անհրաժեշտ արդի սարքավորումներով: Ակադեմիան ունի նաև հրշեջփրկարարական սարք-սարքավորումների

և հրշեջփրկարարական, ալպինիստական հանդերձանքի պահեստարան: Ջրափրկարարական առանձին կաբինետ չկա, առկա է 1 ջրասուզակի հանդերձանք: Բացի այդ առկա են մարզադահլիճ, դահլիճներ (հագեցված տեխնիկական միջոցներով), բուֆետ, բուժկետ, գրադարան: Տարածքում հասանելի է անվճար WiFi: Գրադարանում առկա են ուսումնական պլանին համապատասխան դասընթացների համար նախատեսված հիմնարար դասագրքեր, ամսագրեր, քարտեզներ, ուսումնական ձեռնարկներ: Գրականության 80%-ը հայալեզու է՝ գրված Ակադեմիայի ՊԴԿ-ի կողմից: Գրադարանի 5 համակարգիչներում առկա էլեկտրոնային նյութերի մի մասը հնարավոր է ներբեռնել և տեղափոխել կրիչով: Ընթերցասրահ չկա: ՊԴ և ՈՒՕ կազմի, ուսանողության հետ անցկացված հարցումները վկայում են ակադեմիայի ռեսուրսներից նրանց բավարարվածության մասին:

7.2.ՄՈՒՀ-ը, իր առաքելությունն ու նպատակներն իրականացնելու համար, հատկացնում է համապատասխան ֆինանսական ռեսուրսներ՝ անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Բուհը ձգտում է ֆինանսական կայունության և ռեսուրսների արդյունավետ կառավարման՝ իր ռազմավարական խնդիր համարելով ֆինանսական պլանավորման ներդաշնակեցումը ՌԾ-ի նպատակներին և խնդիրներին: ՌԾ-ում ռազմավարական նպատակներին և խնդիրներին համապատասխան բյուջեի բաշխման քաղաքականությունը բացակայում է: Սահմանված չեն ֆինանսական բաշխման առաջնահերթություններ: Ակադեմիան ֆինանսավորվում է ՀՀ պետբյուջեից, ձեռնարկատիրական գործունեությունից ստացված միջոցներից և ՀՀ օրենսդրությանը չհակասող այլ աղբյուրներից: Ակադեմիայում կազմվում է բյուջետային մուտքերի և ելքերի տարեկան նախահաշիվ, իսկ ֆինանսական տարվա ավարտից հետո ներկայացվում է տարեկան բյուջեի կատարողականը:

Վերջին 5 տարիներին ակադեմիայի եկամուտները վճարովի ուսուցման համակարգից աճել է 1%-ով, պետ. բյուջեից՝ մոտ 80%-ով, այլ եկամուտներից՝ 5%-ով: Աճել են նաև ծախսերը՝ պայմանավորված ձեռք բերվող ռեսուրսներով և ուսումնական միջավայրի բարելավմամբ: Բյուջեի ծախսերի բաշխվածության մեծ մասը (65-70%) կազմում են աշխատավարձերը: Նոր ֆինանսական ռեսուրսների հատկացման կարիքը գնահատում է ակադեմիան և հայտ ներկայացնում ԱԻՆ-ին:

7.3.ՄՈՒՀ-ում գործում է մասնագիտությունների կրթական ծրագրերի նպատակների իրականացումն ու շարունակականությունն ապահովող և երաշխավորող ֆինանսական միջոցների բաշխման քաղաքականություն:

Ակադեմիայում բյուջեի նախագիծը կազմվում է ռեկտորի, պրոռեկտորների և գլխավոր հաշվապահի կողմից՝ հիմքում ունենալով հաշվապահության կողմից հաշվարկված եկամուտները, կատարվելիք ընդհանուր ծախսերը և ստորաբաժանումների կարիքներից բխող հայտերը: Բյուջեի նախագիծը քննարկվում է ԳԽ-ի նիստում, այնուհետև ակադեմիայի խորհրդի նիստում և ներկայացվում ՀՀ ԱԻՆ՝ հաստատման: Հաշվետու տարվա սկզբին ԱԻՆ է ներկայացվում գնումների պլանը, որի համաձայն կատարվում են գնումները՝ ակադեմիայի շենքերի շահագործման և գնումների կարգավորման 2016թ-ին ստեղծված բաժնի կողմից: Ակադեմիան հետևում է բյուջեի կատարմանը և յուրաքանչյուր տարեվերջին ԳԽ-ի նիստում քննարկվում է բյուջեի կատարողականը, որոշվում կատարվելիք անհրաժեշտ փոփոխությունները, պլանավորվում հաջորդ տարվա եկամուտները և ծախսերը: Ռեկտորը ֆինանսական պարտադիր հաշվետվություններ է ներկայացնում ԱԻՆ:

Ֆինանսական կայունության ապահովման համար ակադեմիան ձգտում է ապահովել արտաբյուջետային միջոցների կայունությունը, արդյունավետ կառավարել առկա ռեսուրսները և վարել ռեսուրսախնայողական քաղաքականություն: Ակադեմիայի տարեկան ֆինանսական աուդիտ իրականացնում է ՀՀ ԱԻՆ-ը:

7.4.ՄՈՒՀ-ի ռեսուրսային բազան հնարավորություն է ընձեռում մասնագիտությունների կրթական ծրագրերի և ռազմավարական պլանի իրականացման համար, ինչը նպաստում է որակի շարունակական բարելավմանը և կայունությանը:

Ակադեմիայի ՄԿԾ-ներում և ՌԾ-ում կա անդրադարձ պահանջվող ռեսուրսներին: ՌԾ-ում առանձին սյունակով նշվում է յուրաքանչյուր խնդրի համար տրամադրվող ռեսուրսը (ֆինանսական, նյութական, մարդկային, տեղեկատվական), ՄԿԾ-ներում առանձնացված է «Ուսումնառության օժանդակության ռեսուրսներ և ձևեր» բաժինը:

Ռեսուրսների պլանավորման և ձեռքբերման տեսանկյունից ակադեմիան կարևորագույն գործոններ է դիտարկում աշխատաշուկայի պահանջներից ելնելով ՄԿԾ-ների փոփոխությունները և ուսանողների թվաքանակը: Քանի որ ընդունելությունը կազմակերպվում է ըստ պլանավորված տեղերի թվերի, ուստի ռեսուրսների կարիքների կտրուկ ավելացումներ կամ նվազեցումներ տեղի չեն ունենում: Ինչը հանգեցնում է ռեսուրսներով ապահովվածության կայունության: Որակի շարունակական բարելավման տեսանկյունից ակադեմիան կարևորում է ուսումնական գործընթացում նորագույն տեխնոլոգիաների ներդրումն ու օգտագործումը: Այդ նպատակով 2014-16թթ. ձեռք են բերվել սարքավորումներ, այդ թվում՝ համակարգիչներ, դյուրակիր համակարգիչներ, տպիչ սարքեր, պատճենահանող սարքեր, պրոյեկտորներ, կենսաբանական, փրկարարական, առաջին բուժօգնության միջոցներ: Ակադեմիան ինքն է գնահատում ռեսուրսային բազայի կարիքները և հայտ ներկայացնում ԱԻՆ: Ներկայումս պլանավորվել է Լուսակերտի բազայի համալրումը: Ակադեմիայում կա քիմիական լաբորատորիայի կարիք, այն լրացվում է ՀԱՊՀ-ի հետ կնքած պայմանագրով:

ՄԿԾ-ների ռեսուրսային ապահովվածության գնահատման մեխանիզմ է հանդիսանում կրթական ծրագրերի ընթացիկ մոնիթորինգը: Դրա համար մշակվել է կարգ («Ակադեմիայի կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և վերանայման» կարգ), որը դեռ չի կիրառվել: Ռեսուրսային բազայով ապահովվածության խնդիրները ներքին շահակիցների շրջանում ակադեմիան վեր է հանում հարցումների միջոցով:

7.5. ՄՈՒՀ-ում առկա է տեղեկատվությունը և փաստաթղթավորման գործընթացները կառավարելու հստակ քաղաքականություն և ընթացակարգ:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավումը ակադեմիայի ռազմավարական խնդիրներից է: Չկա հաստատված գործավարության, փաստաթղթաշրջանառության կարգ: Ակադեմիայում 2011թ. ներդրվել է փաստաթղթերի էլեկտրոնային Mulberry համակարգը, որն ապահովում է փաստաթղթաշրջանառության և 2016թ.՝ կադրային գործերի վարման ու տվյալների բազայի մշակման միասնական ծրագրերը: Համակարգն օգտագործում են ռեկտորը, ուս. գծով պրոռեկտորը, փրկարարական ծառայության ֆակուլտետի դեկանը, շահագործման բաժնի պետը և հաշվապահը: 2013թ. ներքին տվյալների փոխանակման ցանցային կապ է ապահովված ակադեմիայի ստորաբաժանումների միջև: 2014թ. ներդրվել է կառավարման SuperVision YSU տեղեկատվական համակարգը և Հոսթինգ (տեղակայման) Space 2 ծառայությունը, որոնք

միասնական կենտրոնացված տեղեկատվական համակարգ են տվյալների մեկ ընդհանուր բազայով: Ակադեմիայի բոլոր ստորաբաժանումները, ամբիոնները, ուսումնական բաժինը համալրված են համակարգիչներով, և նրանց մեծ մասը միացված է ցանցին: Հասանելի է ինտերնետ կապ: Ակադեմիան ամրագրում է, որ դեռևս չունի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ:

7.6. ՄՈՒՀ-ն ստեղծում է ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով՝ հաշվի առնելով հատուկ կարիքներ ունեցող ուսանողներին:

Ակադեմիայի մասնաշենքերն ապահովված են անվտանգության և հակահրդեհային ազդանշանային համակարգով, ներքին ու հարակից տարածքը հսկվում են տեսախցիկների համակարգով: Գործում է շուրջօրյա պարետային ծառայություն: Արտակարգ իրավիճակներում ուսանողների և աշխատակիցների քաղաքացիական պաշտպանությունն իրականացնում է ակադեմիայի Քաղաքացիական պաշտպանության ամբիոնը՝ մասնաշենքերում գործող քաղպաշտպանության տարհանման հանձնաժողովների, պարետների և ֆակուլտետի դեկանի միջոցով: Առկա են տարհանման պլաններ և անհրաժեշտ սարքավորումներ:

Ակադեմիայում գլխավոր մասնաշենքում առկա է բուժկետ, աշխատում է ամեն օր՝ 9^{00}-17^{15} և ապահովված է առաջին բուժօգնության համար անհրաժեշտ դեղորայքով ու որոշ սարքավորումներով: Աշխատում է մեկ բուժաշխատող: Ակադեմիան նշում է, որ բուժկետը դեռևս վերազինման կարիք ունի: Անհրաժեշտության դեպքում կազմակերպվում է տուժածի տեղափոխումը պոլիկլինիկա կամ հիվանդանոց: Ակադեմիայի ուսանողների և աշխատակիցների առողջության պահպանման, մարմնակրթության գործում զգալի ներդրում ունի «Փրկարարական» ամբիոնը:

ՀՀ ԱԻՆ-ի արհեստակցական կազմակերպությունը գործում է նաև Ակադեմիայում, որը կազմակերպում է իր փրկարարական ծառայության անձնակազմի հանգստի, առողջարանային բուժման, երեխաների հանգստի և այլ միջոցառումներ, իսկ առողջական խնդիրներ ունեցող աշխատակիցներին և սոցիալապես անապահով աշխատողներին ցուցաբերվում է դրամական օգնություն:

Ակադեմիայի գլխավոր մասնաշենքի միայն հինգերորդ հարկն է հարմարեցված հատուկ կարիք ունեցող ունկնդիրների համար (հարմարեցված է մուտքը թեքահարթակի միջոցով, լսարանների դռները, լիֆտը և սան. հանգույցը): Գործում է սննդի ապահովման ծառայություն (բուֆետ):

Իրականացվող հարցումները ցույց են տալիս, որ ուսանողները բավարարված են հիշյալ ծառայություններից:

7.7. ՄՈՒՀ-ում գործում են ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներ:

Ակադեմիայում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների կիրառելիության, հասանելիության և արդյունավետության գնահատման մեխանիզմներն են դասավանդողների, շրջանավարտների և ուսանողների ռեսուրսներից բավարարվածության վերաբերյալ անցկացվող հարցումները, վարչակազմի հետ կազմակերպվող քննարկումներն ու հանդիպումները: Ուսանողները հնարավորություն ունեն տրամադրվող ռեսուրսների

վերաբերյալ իրենց հուզող հարցերը բարձրացնել և ստանալ պատասխաններ նաև դեկանատի նիստերի ժամանակ: Ֆակուլտետում առկա է արագ արձագանքման արկղ:

Դատողություններ: Կրթական ծրագրերի պահանջներին համապատասխան ակադեմիան փորձում է ապահովել ուսումնական միջավայր: Այդ նպատակով ակադեմիայի բյուջեից տարեկան հատկացվող գումարները հնարավորություն են տալիս բարելավել միջավայրը: Բուհում արտերկրի կազմակերպությունների հետ համագործակցության շրջանակներում մասնագիտական ուսումնական կաբինետների ստեղծումը էապես բարելավել է ուսումնական միջավայրի որակը: Մյուս կողմից, կենսաբանաքիմիական ու փրկարարական կաբինետների առանձնացումը կնպաստեր ուսուցման արդյունավետությանը: Ջրափրկարարական կաբինետի բացակայությունը, ջրասուզակի միայն 1 հանդերձանքի առկայությունը բացասաբար է անդրադառնում ջրափրկարարական առարկայի հմտությունների ձևավորման վրա:

Ֆինանսական գործունեության կայունության ապահովման նպատակով բուհը ձգտում է մի կողմից ավելացնել ֆինանսական հոսքերը և դրանց աղբյուրները դարձնել ավելի բազմազան, մյուս կողմից վարել ռեսուրսախնայողական քաղաքականություն: Չնայած նրան, որ բուհում բյուջեի բաշխումը ՌԾ-ի նպատակներին և խնդիրներին համապատասխանեցված չէ, սակայն վարած ֆինանսական քաղաքականության շնորհիվ վերջին տարիներին ունեցել է եկամտի աճ՝ հիմնականում պայմանավորված պետ. բյուջեից հատկացվող ֆինանսավորման ավելացմամբ: Արդյունքում ՄԿԾ-ների նպատակներին համապատասխան ավելացվել են հատկացվող ֆինանսական ռեսուրսները՝ ակադեմիան անհրաժեշտ միջոցներով և սարքավորումներով ապահովելու ու գործարկելու համար:

Ֆինանսական քաղաքականության վերահսկումը ԱԻՆ-ի կողմից բերում է ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականության հստակ և համակարգված իրականացման: Մյուս կողմից, սահմանված չեն ռեսուրսների բաշխման առաջնահերթությունները կամ դրանց որոշման սկզբունքները, որոնք կբխեին կրթական ծրագրերի նպատակների իրականացումից և կտանեին շարունակական զարգացման ճանապարհով:

Ակադեմիայի ռեսուրսային բազան ընդհանուր առմամբ հնարավորություն ընձեռում է ՄԿԾ-ների և ՌԾ-ի իրականացման համար: Ակադեմիան ունի արդիական սարքավորումներ, սակայն դրանց զուգահեռաբար հնարավոր օգտագործումը ԱԻՆ-ի կողմից կարող է խոչընդոտել դրանց կիրառմամբ ուսուցման կայուն իրականացմանը: Որակի շարունակական բարելավման և կայունության համար դեռևս անհրաժեշտություն կա վերազինելու ակադեմիայի լաբորատոր բազան, Լուսակերտի վարժահրապարակը և ընդլայնելու SS կիրառումը ուսուցման գործընթացում: Լուսակերտի վարժասարքերի համապատասխանեցումը միջազգային ստանդարտներին կնպաստեր ուսուցման որակի բարելավմանը և միջազգայնացմանը: Ակադեմիան կրթական ծառայությունների մատուցման համար ունի անհրաժեշտ գրադարանային ֆոնդ և էլեկտրոնային գրականություն: Չնայած մասնագիտական հայալեզու գրականությունը դեռ բավարար չէ, բայց ՊԴԿ-ի մշակած ձեռնարկները որոշ չափով լուծում են այդ խնդիրը: Նախատեսված ՄԿԾ-ների մոնիթորինգի իրականացումը կնպաստեր ռեսուրսների բաշխման արդյունավետության բարձրացմանը:

Տեղեկատվության և փաստաթղթաշրջանառության կառավարման բարելավման ոլորտում ակադեմիան որոշակի ձեռքբերումներ ունի: Դրան են նպաստում ներդրված

փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման համակարգերը, որոնք բավականին հստակեցրել և դյուրինացրել են այդ գործընթացները՝ տեղեկատվական համակարգի տարրեր ստեղծելով: Դրանք ապահովում են կարճ ժամանակում տվյալների փոխանցման և ստացման ուղիղ կապ ՀՀ ԱԻՆ-ի հետ: Չնայած այդ ամենին բուհը դեռևս գտնում է, որ չունի կառավարման միասնական տեղեկատվական համակարգ:

Ակադեմիան ընդհանուր առմամբ ստեղծել է բավականին ապահով և անվտանգ միջավայր առողջապահական և անվտանգության պահպանմանն ուղղված ծառայությունների միջոցով: Դրան է նպաստում մասնաշենքերի ապահովվածությունը անհրաժեշտ սարքավորումներով և համակարգերով: Բուժկետն առաջին բուժօգնության համար առկա դեղորայքով և սարքավորումներով կարող է ապահովել առողջապահական ծառայության պատշաճ որակ: Այդ ծառայություններին են նպաստում նաև ակադեմիայի համապատասխան ամբիոնները: Հատուկ կարիք ունեցող ուսանողների համար հարմարեցված է միայն ակադեմիայի գլխավոր մասնաշենքի 5-րդ հարկը, ինչը դեռևս դժվարություններ կարող է ստեղծել այդ ուսանողների ուսումնառության նորմալ կազմակերպման համար:

Ակադեմիայում ուսանողներին տրամադրվող ռեսուրսների և ծառայությունների գնահատման հիմնական մեխանիզմ հանդիսացող հարցումները դեռևս ամբողջ ծավալով չեն իրականացնում, դրանց արդյունավետության գնահատումն իրականացված չէ:

Եզրահանգում: Հաշվի առնելով լսարանային և կաբինետային ֆոնդով, նյութատեխնիկական, մասնագիտական սարքավորումներով հագեցված և գրադարանային ֆոնդով ապահովված կրթական միջավայրը, ֆինանսական հստակ քաղաքականությունը մշակումը և դրա հաշվետու իրականացումը, ուսումնական գործընթացի կազմակերպման, հաղորդակցման և փաստաթղթաշրջանառության էլեկտրոնային համակարգերի ներդրումը, անվտանգության և առողջապահական ծառայությունների արդյունավետ իրականացումը, ռեսուրսներին առնչվող կարիքների բացահայտմանն ուղղված հարցումների անցկացումը՝ կարելի է եզրակացնել, որ ակադեմիան ունի անհրաժեշտ ռեսուրսներ ուսումնական միջավայրի ապահովման և ռազմավարական նպատակների իրականացման համար:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

VIII. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն իր տրամադրած կրթության, իրականացրած հետազոտության և օգտագործած ռեսուրսների համար հաշվետու է պետությանը և հասարակությանը:

Փաստեր

8.1 ՄՈՒՀ-ն ունի հաշվետվողականության սահմանված կարգ:

Ակադեմիայի հաշվետվողականության քաղաքականության նպատակն է. «Կրթական գործընթացի անընդհատության, թափանցիկության և հրապարակայնության ապահովումը»: Ակադեմիայում օրենսդրության համաձայն գործում է աստիճանակարգային (ներքևից վերև)

հաշվետվողականության սկզբունքը, որը սահմանված է ըստ ստորաբաժանումների գործունեության կանոնակարգերի: Հաշվետվողականությունն իրականացվում է ՊԴԿ-ամբիոնի վարիչ – դեկան – ռեկտոր – ԱԻՆ շղթայով՝ յուրաքանչյուրն իր տարեկան աշխատանքային պլանի համաձայն: Ռեկտորը ստորաբաժանումների հաշվետվությունների հիման վրա կազմում է ակադեմիայի տարեկան գործունեության վերաբերյալ ամբողջական հաշվետվություն, ներկայացնում ենթակա անձնակազմին ԳԽ-ի նիստում՝ ապահովելով վերևից ներքև հաշվետվողականություն: Հաշվետվության սեղմ տարբերակը ներկայացվում է ՀՀ ԱԻՆ-ի հաշվետու նիստին: Ակադեմիայի խորհրդի տարեկան նիստին քննարկվող հարցերը հիմնականում ներառում են ակադեմիայի բյուջեի նախահաշիվն ու կատարողականը:

Այցի ընթացքում պարզ դարձավ, որ հետադարձ կապ ապահովելու համար ռեկտորը ակադեմիայի ընթացիկ գործունեության վերաբերյալ ԱԻՆ-ի փոխնախարարին է ներկայացնում շաբաթական և եռամսյակային հաշվետվություններ:

8.2 ՄՈՒՀ-ն ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը հասարակությանը:

Ակադեմիայի որպես ռազմավարական խնդիր դիտարկում է. «հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային ծրագրերում ակադեմիայի առավելագույնս ներգրավումը»: Իր գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը, կանոնակարգերն ու ընթացակարգերը հասարակությանը հասցնելու նպատակով ակադեմիան օգտագործում է պաշտոնական կայքը, որը ներառված է ՀՀ ԱԻՆ-ի պաշտոնական կայքում որպես բաժին, ֆեյսբուքյան էջը, «911, Արտակարգ թերթ» շաբաթաթերթը, այլ տպագիր նյութեր և ԶԼՄ-ներ: Շաբաթաթերթը տպագրվում է ակադեմիայում. լուսաբանվում է ակադեմիայի, նրա կադրերի գործունեությունը, ինչպես նաև հոդվածներ տպելու հարթակ է ՊԴԿ-ի համար:

Ակադեմիան գործունեության մասին տեղեկատվություն լուսաբանում են նաև ՀՀ ԱԻՆ «Լրատվության» և «Լրատվամիջոցների մոնիթորինգի և վերլուծության» բաժինները:

Հանդիպումների ընթացքում ուսանողները, ՊԴ և ՈՒՀ կազմը, շրջանավարտները նշեցին, որ բավարարված են կայքի կառուցվածքից, նրա միջոցով տեղեկատվության ստացումից, նորությունների լուսաբանումից: Ակադեմիան ներկայացրեց նաև իր նոր ստեղծված առանձին պաշտոնական էջը (www.cmsa.am), որը գործարկման փուլում է:

8.3 ՄՈՒՀ-ում գործում են հասարակության հետ կապերի ձևավորմանը նպաստող հետադարձ կապի կայուն մեխանիզմներ:

Ակադեմիան հասարակության հետ հետադարձ կապի հաստատված քաղաքականություն և ընթացակարգեր չունի: Այդ գործընթացների համակարգումը ներկայումս իրականացնում է «Լրատվամիջոցների մոնիթորինգի և վերլուծության» բաժինը: Վերջինս եռամսյակը մեկ իրականացնում է հասարակության հետ հետադարձ կապի, լրատվական (այդ թվում ակադեմիայի վերաբերյալ) հրապարակումների վերլուծություններ, որոնք հասանելի չեն փորձագիտական խմբի համար: Հասարակայնության հետ հետադարձ կապի ապահովման միջոց է դիտարկվում համացանցը. ԱԻՆ-ի կայքում առկա «Հաճախակի տրվող հարցեր» բաժին, Facebook սոց. ցանցում գործող խումբը և շրջանավարտների վերաբերյալ կարծիքի ուսումնասիրության հարցումները: Հետադարձ կապի անուղղակի արձագանքներ են ստացվում նաև ակադեմիայի տարատեսակ միջոցառումների կազմակերպման կամ

մասնակցության շնորհիվ, մշտական այցելություններից տարածաշրջանի մարզեր, համայնքներ, ուսումնական կազմակերպություններ:

8.4 ՄՈՒՀ-ում գործում են հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման մեխանիզմներ:

Հասարակության շրջանում քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում կրթական, գիտական, մեթոդական, անվտանգության մշակույթի ձևավորման մակարդակի բարձրացումը ամրագրված է ակադեմիայի կանոնադրության մեջ՝ որպես հիմնական խնդիրներից մեկը:

Այդ ուղղությամբ ակադեմիան հասարակությանը մատուցում է փորձագիտական, մշակութատեղեկատվական, կրթական, գիտական, մեթոդական տարաբնույթ ծառայություններ: Ակադեմիան պարբերաբար աշխատանքներ է իրականացնում հանրակրթական դպրոցների աշակերտների և դիմորդների հետ՝ մատուցելով խորհրդատվական ծառայություններ, ինչպես նրանց մասնագիտական կողմնորոշման բնագավառում, այնպես էլ քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում հարցերի ու անվտանգության մշակույթի ձևավորման ուղղությամբ: Կազմակերպվում են ուսանողների մասնակցությամբ արշավներ, միջոցառումներ, ներկայացումներ, տպագրում տեղեկատվական ձեռնարկներ, ուղեցույցներ:

Ակադեմիան մեծ ծավալի աշխատանքներ է իրականացնում ՀՀ ԱԻՆ-ի համակարգի, պետական կառավարման, ՏԻՄ-ի և բնակչության լայն շերտերի համար պարբերական վերապատրաստման և որակավորման բարձրացման գործընթացներում՝ մշակելով և իրականացնելով վերապատրաստման և լրացուցիչ կրթական ծրագրեր:

Դատողություններ: Ակադեմիան, լինելով ՀՀ ԱԻՆ-ի ուժային կառույցի մի մաս, ստանձնում է պարտականություն գործող օրենսդրության հիման վրա իր գործունեության մասին ամենամյա հաշվետվության հրապարակման և մատչելիության ապահովման համար: Այդ նպատակին հասնում է՝ կիրառելով աստիճանակարգային հաշվետվողականության սկզբունքը, ինչը նպաստում է հաշվետվողականության ամբողջական և փոխկապակցված իրականացմանը:

Ռեկտորի պարտադիր տարեկան, ընթացիկ շաբաթական և եռամսյակային հաշվետվությունները ՀՀ ԱԻՆ-ին, հնարավորություն են տալիս ԱԻՆ-ին, որպես հիմնական պատվիրատու, գնահատել ակադեմիայի գործունեությունը և տալ անհրաժեշտ ուղղորդումներ: Մյուս կողմից, ռեկտորի հաշվետվությունների ընտրված ձևաչափը կապված չէ ՌԾ-ի հետ և թույլ չի տալիս դիտարկել որպես ՌԾ-ի նպատակների կատարողական՝ վտանգելով դրանց իրականացմանը:

Ակադեմիայի գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը էլ. կայքի և ֆեյսբուքյան էջի, «911, Արտակարգ թերթ» շաբաթաթերթի և այլ զանգվածային լրատվական միջոցների կիրառմամբ, նաև ՀՀ ԱԻՆ-ի «Լրատվության» բաժնի միջոցով ընդհանուր առմամբ հնարավորություն տալիս է ապահովել բավարար թափանցիկություն և հրապարակայնություն հասարակության շրջանում: Ակադեմիայի կայքը հասանելի չէ օտար լեզվով, և չնայած ակադեմիան պնդում է, որ իր էլ. կայքում զետեղել է մեծ ծավալի փաստաթղթեր, սակայն փաստացի առկա ինֆորմացիան բավականին սուղ է, ինչը հնարավորություն չի տալիս

մեխանիզմին արդյունավետ գործել: Այս խնդիրը բուհն արդեն լուծում է՝ ստեղծելով նոր առանձին կայք:

Հասարակության հետ հետադարձ կապի հաստատված քաղաքականության և ընթացակարգերի բացակայությունը խոչընդոտում են այդ աշխատանքների արդյունավետ իրականացմանը: Միևնույն ժամանակ, գործընթացների համակարգումն իրականացնող ԱԻՆ-ի «Լրատվամիջոցների մոնիթորինգի և վերլուծության» բաժնի վերլուծությունները հասանելի չեն, ինչը փորձագիտական խմբին հնարավորություն չի տալիս գնահատել դրանց հետազդեցությունը ակադեմիայի գործունեության վրա:

Ակադեմիան մեծ ավանդ ունի հասարակությանը գիտելիքի և արժեքների փոխանցման գործում: Հասարակությանը իր մասնագիտական ոլորտներում մատուցելով կրթական, փորձագիտական, գիտական, մեթոդական, մշակութահեն ծառայություններ՝ ակադեմիան նպաստում է անվտանգության մշակույթի ձևավորմանը: Միևնույն ժամանակ ստանձնում է առանձնահատուկ դեր ՀՀ ԱԻՆ-ի համակարգի, պետական կառավարման, ՏԻՄ և բնակչության լայն շերտերի համար լրացուցիչ կրթական ծրագրերի իրականացմամբ: Բուհի կողմից իրականացվում են լայնածավալ մշակութահեն աշխատանքներ՝ որդեգրած առաքելությանը համապատասխան:

Եզրահանգում: Հաշվի առնելով ակադեմիայում գործող հաշվետվողականության հստակ գործող համակարգը ներքին և արտաքին շահակիցների համար, իրականացվող ընթացակարգերի, գործընթացների թափանցիկության ու հասանելիության համար կիրառվող մեխանիզմները, ԱԻՆ-ի համապատասխան բաժինների օժանդակությունները, հասարակությանը գիտելիքների (արժեքների) փոխանցման բնագավառում ունեցած մեծ ավանդը՝ փորձագիտական խումբը գտնում է, որ բուհը համապատասխանում է չափանիշի պահանջներին:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **բավարար:**

IX. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄԸ

ՉԱՓԱՆԻՇ: Արտաքին կապերի միջոցով ՄՈՒՀ-ը խրախուսում է փորձի փոխանակումը և զարգացումը՝ նպաստելով հաստատության միջազգայնացմանը:

Փաստեր

9.1 Փորձի փոխանակմանը, զարգացմանը և միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու նպատակով ՄՈՒՀ-ում գործում է արտաքին կապերի հաստատումը խրախուսող քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ակադեմիան իր ՌԾ-ի նպատակներում ամրագրել է՝ «Ակադեմիայի արտաքին կապերի ընդլայնում և միջազգայնացման գործընթացների զարգացում»: Դրա իրականացման համար առանձնացրել է խնդիրներ. ընդլայնել և բազմազանեցնել ակադեմիայի միջազգային կապերը կրթական և գիտական ոլորտներում, խթանել ակադեմիայի հետազոտական աշխատանքների միջազգայնացման գործընթացները, ապահովել ակադեմիայի արտաքին կապերի համակողմանի զարգացումը:

Վերոնշյալ խնդիրների և դրանցից բխող միջոցառումների իրականացման ընթացակարգն ակադեմիան սահմանել է ՌԾ-ի պլան-ժամանակացույցով, որը, սակայն, չի համապատասխանում ՌԾ-ի խնդիրների պլանավորմանը: Ներկայացված պլան-ժամանակացույցում ՌԾ-ի խնդիրներով նախատեսվող ոչ բոլոր միջոցառումների համար են սահմանված կատարողականի ժամկետներ, պատասխանատուներ, անհրաժեշտ ռեսուրսներ: Մյուս կողմից որպես պատասխանատու նշված միջազգային կապերի գծով պրոռեկտորի հաստիք ակադեմիան չունի: *ՀՀ ԱԻՆ-ի կողմից, որպես ուժային կառույց, միջազգային կապերի կենտրոնացված համակարգումը, ինչպես նաև սահմանափակ հաստիքները թույլ չեն տալիս ունենալ միջազգային կապերի գծով պրոռեկտորի հաստիք և հիշյալ գործառույթները փաստացի իրականացնում է փրկարարական ամբիոնի վարիչը:*[11]

9.2 ՄՈՒՀ-ի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման ենթակառուցվածքը երաշխավորում է կանոնակարգված գործընթաց:

Ակադեմիան չունի արտաքին կապերի և միջազգայնացման առանձին ենթակառուցվածք: Միջազգային ընթացակարգերի կառավարման համակարգը կենտրոնացված է և վերապահված ՀՀ ԱԻՆ-ի արտաքին կապերի վարչությանը: Վերջինս զբաղվում է նաև ակադեմիայի արտաքին կապերի ու միջազգայնացման հարցերով, օտարերկրյա մասնագետների, պատվիրակությունների հրավերների անհրաժեշտ փաստաթղթերի ու վիզաների ձևակերպմամբ, նրանց ընդունելության կազմակերպմամբ, ակադեմիայի համապատասխան ստորաբաժանումների երաշխավորմամբ, միջազգային պաշտոնական փատաթղթերի փոխանակմամբ ու նամակագրության վարմամբ: Բուհից միջազգային հարցերով պատասխանատուներն են փրկարարական ամբիոնի վարիչը և ռեկտորը: Արտերկրյա կառույցների հետ համագործակցության նպատակով բանակցությունների վարումը և պայմանագրերի ստորագրումը վերապահված են ակադեմիայի ռեկտորին: Միջազգային համաձայնագրերի մեծ մասը ձեռք է բերվել ԱԻՆ-ի կողմից, իսկ ակադեմիան իրականացնում է դրանք:

9.3 ՄՈՒՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ:

Ակադեմիան միջազգային համագործակցության պայմանագրեր և համաձայնագրեր ունի աշխարհի շուրջ 10 երկրների հաստատությունների ու միջազգային կազմակերպությունների հետ: Արտաքին կապերի խրախուսման գործընթացները դեռևս չեն իրականացվում ուսանողների և գիտամանկավարժական կադրերի փոխանակման տեսանկյունից, խիստ ցածր է մասնագիտական և բացակայում է ուսանողական շարժունությունը, ինչը կարևորեցին նաև շրջանավարտները: Քիչ են հրապարակումները միջազգային ամսագրերում: Ներկայումս Ակադեմիան չունի օտարերկրյա ուսանողներ: Համատեղ իրականացվող հետազոտական ծրագրեր ակադեմիան դեռևս չունի, ուսանողների մասնակցությունը միջազգային կառույցների կողմից իրականացվող հետազոտական աշխատանքներին սահմանափակվում է հիմնականում անհրաժեշտ տվյալների հավաքագրման գործընթացներում որպես օժանդակ ուժ ներգրավումով:

---

[11] Տեքստը վերաշարադրավել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

Միջազգային համագործակցության շրջանակներում ակադեմիայում ստեղծվել և վերազինվել են 4 մասնագիտական կաբինետներ: Համագործակցության շրջանակներում պարբերաբար կազմակերպվել են վերապատրաստման դասընթացներ և սեմինարներ: Ակադեմիայի վարչական և փրկարարական ծառայության ՊԴԿ-ի մեծ մասը, որպես ոլորտի գործող մասնագետներ, դասընթացներ է անցել արտերկրի համապատասխան կառույցներում, զեկույցներով հանդես եկել միջազգային սեմինարներին ու գիտաժողովներին, մասնակցել միջազգային ուսումնավարժանքների՝ որպես գործնական միջոցառումների ղեկավարներ, անվտանգության պատասխանատուներ և արդյունքների հետազոտողներ: *Վարչական և ՊԴ կազմի գործուղումների վերաբերյալ, չնայած նշումներ են արվում ՊԴԿ-ի պլաններում, սակայն ամբողջական հաշվետվություններ չեն ներկայացվում ակադեմիային: Փոխարենը այդ հաշվետվությունները ներկայացվում են ՀՀ ԱԻՆ արտաքին կապերի վարչություն՝ հաստատված օրինակելի ձևին համապատասխան:*[12]

Տեղական ուսումնական հաստատություններից ակադեմիան պայմանագրեր ունի ՀԱՊՀ, ՀՀ ռազմական համալսարանների և Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի հետ:

9.4 ՄՈՒՀ-ն ապահովում է ներքին շահակիցների օտար լեզվի իմացության անհրաժեշտ մակարդակ՝ միջազգայնացման արդյունավետությունը բարձրացնելու համար:

2014թ.-ից սկսած օտար լեզուների իմացության մակարդակն ակադեմիայի ՊԴ ու վարչական կազմի համար վերլուծվել է ըստ անձնական թերթիկներում նշված տվյալների: [13]Վերլուծության արդյունքում պարզվել է, որ անձնակազմի մոտ անգլերենի մակարդակը խիստ ցածր է: Ներկայումս ակադեմիայում վարչակազմի, ՊԴԿ-ի և ուսանողների համար անվճար հիմունքներով անցկացվում են անգլերենի դասընթացներ: Սակայն, փորձագիտական այցերի ընթացքում պարզ դարձավ, որ ՊԴԿ-ի և ուսանողների մասնակցությունը նշյալ դասընթացներին բավականին ցածր է: Անգլերենի դասընթացին մասնակցում է ՊԴ կազմից մոտ 15-20 հոգի, 3 տարիների ընթացքում գրեթե նույն կազմով: Օտար լեզվի գիտելիքի ստուգման քննական մեխանիզմ չկա, իսկ դասընթացների արդյունավետությունը գնահատված չէ:

Ակադեմիան չի գնահատում իր անձնակազմի օտար լեզվի իմացությունը միջազգայնացման արդյունավետության տեսանկյունից: ՌԾ-ում չկան սահմանված տոկոսային շեմի ցուցանիշներ միջազգայնացման նպատակի ԱԳԿՑ-ներում: Կայքէջում միջազգային ծրագրերի և համագործակցության վերաբերյալ տեղեկատվությունը բացակայում է, առկա տեղեկատվությունը հասանելի է միայն հայերենով:

Դատողություններ: Չնայած նրան, որ ակադեմիան իր ՌԾ-ի առանձին նպատակով և խնդիրներով պլանավորում է ընդլայնել արտաքին կապերը և զարգացնել միջազգայնացման գործընթացները, սակայն ՌԾ պլան-ժամանակացույցում միջոցառումների պլանավորումը չի համապատասխանեցրել նախանշված խնդիրներին: Պլանավորման գործընթացների և ըստ

[12] Տեքստը վերաշարադրավել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

[13] Տեքստը վերաշարադրավել է հատատության դիտողությունների և առաջարկությունների քննարկման արդյունքում:

էության միջազգայնացմանը նպաստող միջավայր ստեղծելու համար ներկայացված ծրագրի անհամապատասխանությունը վտանգի տակ է դնում որդեգրած քաղաքականության իրականացումը:

Քանի որ ակադեմիայի արտաքին կապերի և միջազգայնացման ապահովման գործընթացների կենտրոնացված կառավարումն իրականացնում է ՀՀ ԱԻՆ-ը, ակադեմիան իր միջազգայնացման կարիքներն ու հավակնությունները ռեկտորի միջոցով հասցնում է ԱԻՆ: Սակայն ակադեմիայում դեռևս առանձին ենթակառուցվածքի կամ հաստիքային պատասխանատու աշխատակցի բացակայությունը նվազեցնում են միջազգայնացման գործընթացների արդյունավետությունը և վտանգում ՌԾ նպատակների իրականացմանը:

Ակադեմիան միջազգային համագործակցության պայմանագրերը նպաստում են միջազգային ասպարեզում բուհի ճանաչմանը: Սակայն միջազգային պայմանագրերի **հիմնական մասը պատկանում են ԱԻՆ-ին, իսկ ակադեմիան իր կադրային ներուժով հանդես է գալիս դրանց իրականացնողի դերում: Միջազգային համագործակցության շրջանակներում ակադեմիային հաջողվել է բարելավել իր նյութական ռեսուրսները, ՊԴ և վարչական կազմի վերապատրաստման դասընթացները և գործուղումները նպաստում են կադրային ներուժի որպես ոլորտում գործող մասնագետների կատարելագործմանը: Ծրագրերը մեծամասամբ վերաբերում են գործող փրկարարների մասնագիտական վերապատրաստմանը և քաղաքացիական պաշտպանության նպատակով հասարակության տարբեր խմբերի հետ** իրազեկման աշխատանքների և վարժանքների իրականացմանը, և ոչ՝ բուն ակադեմիական կրթությանը: Միջազգային համագործակցության ազդեցությունը ՄԿԾ-ների և կրթական գործընթացի վրա առայժմ զգալի չէ, ուսանողների ու դասախոսների փոխանակային ծրագրերը դեռևս հեռանկարային են, չնայած դրա հնարավորությունը ընձեռող համաձայնագրեր կան: Համագործակցության շրջանակներում չկան հետազոտական ծրագրեր, որոնցում ներգրավված կլինեին ՊԴ կազմը և ուսանողները:

Տեղական ուսումնական հաստատությունների հետ համագործակցությունը դեռ զգալի արդյունքների չի հանգեցրել: Ըստ այդմ, փորձագիտական խումբը գտնում է, որ ակադեմիան լիարժեքորեն չի օգտագործում ստեղծված արտաքին՝ տեղական և միջազգային կապերն իր ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման, կրթական ծրագրերի զարգացման համար: ՌԾ-ում ամրագրված միջազգային հավակնությունները համակարգված ձևով չեն իրականացվում: Ընդհանուր առմամբ, ակադեմիան աշխատանքներ տանում է միջազգային համագործակցության ընդլայնման ուղղությամբ, սակայն կնքված հուշագրերը և պայմանագրերն ամբողջությամբ կյանքի կոչված չեն և, ինչպես նշում է բուհը ինքնավերլուծությունում. «այս ուղղությամբ դեռ շատ անելիքներ կան»:

Աշխատակազմի և ուսանողների շրջանում օտար լեզվի (անգլերենի) իմացության աստիճանը բարձրացնելու նպատակով ակադեմիայի կազմակերպած անվճար դասընթացները էական ազդեցություն չեն ունեցել խնդրի լուծման համար: Օտար լեզուների տիրապետման ցուցանիշները դեռևս ցածր են և շարունակում են մնալ միջազգայնացման գործընթացներին խոչընդոտող հիմնական խնդիրներից մեկը: Մյուս կողմից ակադեմիայի վարած քաղաքականությունն այս ուղղությամբ նպատակաուղղված չի իրականացվում: Կայքէջում միջազգային ծրագրերի և համագործակցության վերաբերյալ տեղեկատվության բացակայությունը, առավել ևս ռուսերեն և անգլերեն լեզուներով տեղեկատվության անհասանելիությունը խոչընդոտում են միջազգայնացմանը և նվազեցնում ակադեմիայի

ճանաչելիությունը արտերկրի պոտենցիալ գործընկեր հանդիսացող ուսումնական, գիտական հաստատությունների և կազմակերպությունների կողմից:

Եզրահանգում: Հաշվի առնելով այն, որ ակադեմիան իր բուն ուսումնական գործընթացում և կրթական ծրագրերում դեռևս չունի արտաքին կապերի հաստատմանը նպաստող քաղաքականության համապատասխան ընթացակարգեր, միջազգայնացման գործընթացների կառավարման ենթակառուցվածք, միջազգային կրթական և հետազոտական փոխանակման ծրագրեր, ուսանողների շարժունություն, բուն ակադեմիական կրթության վրա միջազգային համագործակցության ծրագրերի ազդեցությունը բացակայում է, ՌԾ-ում ամրագրված միջազգային հավակնությունները համակարգված ձևով չեն իրականացվում, իսկ անգլերեն լեզվի իմացությունը դեռևս լուրջ խնդիր է միջազգայնացման գործընթացների զարգացման տեսանկյունից, կարելի է եզրակացնել, որ բուհը դեռևս բավարար մակարդակով չի խրախուսում իր գործունեության միջազգայնացումը և արտաքին կապերի հաստատումը:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

X. ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՉԱՓԱՆԻՇ: ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման ներքին համակարգ, որը նպաստում է հաստատության բոլոր գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Փաստեր

10.1 ՄՈՒՀ-ն ունի որակի ապահովման քաղաքականություն ու ընթացակարգեր:

Ակադեմիան իր որակի ապահովման քաղաքականությունն ու ընթացակարգերը սահմանել է 2014թ. հաստատված Որակի ներքին ապահովման հայեցակարգի և Որակի ապահովման քաղաքականության միջոցով: Ակադեմիայի որակի ապահովման քաղաքականության նպատակն է «ներդնել գործունեության արդյունքների և կիրառվող գործընթացների ներքին և արտաքին գնահատման վրա հիմնված որակի ապահովման պաշտոնական, թափանցիկ և վստահելի համակարգ՝ առաջնորդվելով որակի ապահովման Եվրոպական չափորոշիչներով և ուղենիշներով և ISO 9000-2000 չափորոշիչներով»: Քաղաքականությամբ սահմանված ակադեմիայի որակի ապահովման հիմնական ոլորտներն են. Կրթական ծրագրեր և դասընթացներ, ՊԴ կազմ, դասավանդում և ուսումնառություն, սովորողների գնահատում, օժանդակ ծառայություններ, ռեսուրսներ և ենթակառուցվածքներ, գիտահետազոտական գործունեություն, լրացուցիչ և շարունակական կրթության ընդլայնում, հանրային ներգրավում:

Որակի ներքին համակարգը ակադեմիայում ներդրվել է 2014թ.: Այժմ ակադեմիայում ստեղծվել են ՈԱ նոր փաստաթղթեր, օրինակ. կրթական ծրագրերի արտոնումը, ներքին փորձաքննությունը և պաշտոնական հաստատումը, կրթական ծրագրերի տարեկան մշտադիտարկումը և պարբերական վերանայումը, ՊԴԿ-ի որակավորման բարձրացման ծրագրերը և այլն, որոնք դեռ գործարկման փուլ չեն մտել: Որակի ապահովման մեխանիզմներն ու ընթացակարգերը հաստատված են ակադեմիայի ԳԽ-ի կողմից:

Ներկայումս գործում են հարցումների և դասալման մեխանիզմները՝ հաստատված ընթացակարգերով: Հարցումների որակական վերլուծություններ չկան: Գնահատված չէ մեխանիզմների արդյունավետությունը:

10.2 Որակի ներքին ապահովման գործընթացների կառավարման նպատակով ՄՈՒՀ-ը տրամադրում է մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսներ:

2013թ.-ից ակադեմիայում հիմնվել է որակի ապահովման կենտրոն (ՈԱԿ) ՀԲ-ի դրամաշնորհային ծրագրի շրջանակներում: Այն գործում է հաստատված կանոնադրության համապատասխան: Կենտրոնն ունի 4 աշխատակից: ՈԱԿ-ն ինքնակառավարվող մարմին է, որը հաշվետու է ակադեմիայի կառավարման մարմիններին ու ռեկտորին: Հաշվետվությունները ներկայացվում են ԳԽ-ին բանավոր կերպով:

Որակի ներքին ապահովման հայեցակարգի հետ կապված կան հակասություններ: Ըստ հայեցակարգում ներկայացված որակի ապահովման համակարգի կազմակերպական կառուցվածքի, ՈԱԿ-ը հիերարխիկ կապով կապված է պրոռեկտորի հետ, ոչ թե ռեկտորի: Կամ ներկայացված են Որակի ապահովման ֆակուլտետային հանձնաժողովներ, որոնք դիտարկումների արդյունքում պարզվեց, որ բացակայում են:

ՈԱԿ-ը նշում է, որ դեռ մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք է զգում: Նյութական և ֆինանսական ռեսուրսների տրամադրումը ՈԱԿ-ին իրականացվում է կենտրոնացված ձևով՝ ըստ անհրաժեշտության: Անհրաժեշտ նյութատեխնիկական ռեսուրսներով ՈԱԿ-ը համալրվել է ՀԲ-ի դրամաշնորհային ծրագրով:

10.3 Ներքին և արտաքին շահակիցները ներգրավված են որակի ապահովման գործընթացներում:

Ակադեմիան իր որակի ապահովման քաղաքականության հիմնական սկզբունքներից է համարում. «սովորողների, շրջանավարտների, ՀՀ ԱԻՆ-ի և այլ գործատուների լիարժեք մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում»:

Որակի ապահովման գործընթացներում ներքին շահակիցների ներգրավվածությունը ակադեմիան փորձում է ապահովել՝ հանձնաժողովներում և աշխատանքային խմբերում նրանց ներկայացուցիչների ներգրավելով: Նմանատիպ օրինակները դեռ սակավաթիվ են՝ ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողով, ԻՎ խումբ:

Արտաքին շահակիցների փաստացի ներգրավման օրինակներ չկան՝ բացառությամբ պրակտիկա անցկացնող ԱԻՆ-ի ստորաբաժանումների մասնակցությանը ակադեմիայի անցկացրած հարցումներին:

10.4 Որակի ներքին ապահովման համակարգը պարբերաբար վերանայվում է:

Ակադեմիան իր որակի ապահովման քաղաքականության խնդիրներում սահմանում է «շարունակաբար բարելավել որակի ապահովման համակարգը պարբերական վերանայումների միջոցով, կատարելագործել և արդիականացնել որակի ապահովման գործառույթները, ընթացակարգերը, չափանիշները և դրանց հետ առնչվող պաշտոնական փաստաթղթերը»:

Վերանայման հստակ մեխանիզմներ ՈԱԿ-ը դեռ նախատեսում է մշակել: Որակի ապահովման համակարգի ներդրման ժամանակ գործընթացների քաղաքականության և ընթացակարգերի մշակման համար օրինակ են հանդիսացել ՀՀ պետական կառավարման

ակադեմիա, ՀԱՊՀ, ԵՊՀ, ԵՊՏՀ, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ բուհերի համապատասխան փաստաթղթերը:

10.5 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է բավարար հիմքեր որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար:

Ակադեմիայի ՌԾ-ի խնդիրներում ամրագրված է. «նախապատրաստվել կրթական ծրագրերի որակի արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին՝ բարձրագույն կրթության որակի արտաքին արժևորման պետական միասնական չափանիշների պահանջներին համապատասխան»:

Ակադեմիան որակի ապահովման արտաքին գնահատման գործընթացների համար հիմնական հիմք է դիտարկում ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, որն իրականացնելու նպատակով օգտվել է ԳԽ-ի հաստատած փաստաթղթային փաթեթից, որակի ապահովման մեխանիզմներով ստացված տվյալներից: ԻՎ ձևաչափի պահանջներին համապատասխան՝ աշխատանքային խմբերի կողմից կատարվել է անհրաժեշտ փաստաթղթերի ու տվյալների հավաքագրում: Փաստացի տվյալները հավաքագրվել են ստորաբաժանումների (ուսումնական բաժին, կադրեր, դեկանատներ և այլն) հաշվետվությունների, հարցումների, հանդիպումների հիման վրա: Արդյունքում կատարվել է ակադեմիայի գործունեության ոլորտների ուսումնասիրություն, վերլուծություն և գնահատում:

Չնայած դրան, որոշ գործընթացներ, ինչպես օրինակ, ՈԱԿ-ի գործունեության գնահատում և հաշվետվություններ, հարցումների արդյունքների որակական, բովանդակային վերլուծություններ, որակի ապահովման և այլ մեխանիզմների արդյունավետության վերլուծություններ, վարչակազմի հետ հանդիպում-քննարկումների արձանագրություններ, անհրաժեշտ փաստաթղթային հիմքեր բացակայում են:

10.6 Որակի ապահովման ներքին համակարգն ապահովում է ՄՈՒՀ-ի գործունեության թափանցիկությունը՝ տրամադրելով ՄՈՒՀ-ի գործընթացների որակի մասին տեղեկատվություն՝ ներքին և արտաքին շահակիցների համար:

Ակադեմիան ՌԾ-ում սահմանում է՝ «Ապահովել որակի ներքին գնահատման չափանիշների և ինքնագնահատման գործընթացի ու համապատասխան զեկույցի թափանցիկությունը և հրապարակայնությունը ակադեմիայի ներքին և արտաքին շահակիցների համար, ուսանողների մասնակցությունը և հետադարձ կապը որակի գնահատման գործընթացներում»:

Որակի ապահովման քաղաքականությամբ սահմանված ոլորտներում ակադեմիայի գործունեության վերլուծություններ չեն արվում: Ներքին և արտաքին շահակիցների համար ընդհանուր գործունեության արդյունքները ցուցադրելու համար կիրառվում են ռեկտորի հաշվետվությունները: ՈԱԿ-ի հաշվետվությունները բանավոր են ներկայացվում ԳԽ-ում և չեն հրապարակվում: Հարցումների արդյունքում բովանդակային վերլուծություններ չկան, իսկ քանակական արդյունքները հասանելի են միայն ՊԴԿ-ին: ԻՎ-ն հրապարակված չէ կայքէջում:

Դատողություններ: Ակադեմիան իր որակի ապահովման համակարգը հիմնել է 2014թ-ին՝ հիմքում դնելով հաստատված Որակի ներքին ապահովման հայեցակարգը և Որակի ապահովման քաղաքականությունը: Այդ նպատակով ակադեմիայում ստեղծվել են որակի

ապահովման նոր մեխանիզմներ, որոնց կիրառման արդյունքները դեռևս ազդեցություն չունեն գործընթացների վրա: Վերլուծված չէ դրանց արդյունավետությունը: Մյուս կողմից ստեղծված չեն հիմքեր, որոնք հնարավորություն կտան դատելու քաղաքականության ամբողջական իրականացման մասին: Ինչը հիմք է տալիս եզրակացնել, որ ՈԱ փաստացի **իրականացվող գործընթացները դեռևս չեն ապահովում սահմանված քաղաքականության պլանավորված հստակ իրականացումը:**

Ակադեմիայում 2013թ. ստեղծված ՈԱԿ-ը՝ ներկայումս 4 աշխատակիցներով, **կարող է ապահովել բուհում որակի ներքին ապահովման գործընթացների կառավարումը: Սակայն ՈԱԿ-ը գործունակ թիմ ստեղծելու համար դեռ հետագա մասնագիտական վերապատրաստումների խիստ կարիք է տեսնում: ՈԱԿ-ին տրամադրված նյութական և ֆինանսական ռեսուրսները, նաև շնորհիվ ՀԲ դրամաշնորհի, բավարար են գործունեության** իրականացման համար:

Ակադեմիայի որակի ապահովման գործընթացներում ներքին և մանավանդ արտաքին շահակիցների ներգրավվածությունը դեռևս պասիվ է: Ներքին շահակիցների առանձին ներկայացուցիչների համար եզակի դեպքերում հանձնաժողովի կամ աշխատանքային խմբի կազմում ներգրավելը ամբողջական կազմի ներգրավվածություն չի ապահովում: Դա խոչընդոտում է որակի ապահովման գործընթացների հանդեպ շահակիցների վստահության ձևավորմանը:

Փորձագիտական խումբը գտնում է, որ որակի ապահովման համակարգի ամբողջականացման համար ակադեմիայի նախատեսած մեխանիզմների կիրառումը կնպաստեր թերությունների վերհանմանը և ակադեմիայի կարիքներին համապատասխան համակարգի ձևավորմանը:

Իրականացված ԻՎ-ն հնարավորություն է տվել ակադեմիային կատարել անհրաժեշտ փաստաթղթերի ու տվյալների հավաքագրում, պահանջվող փաստաթղթային հիմքերի ստեղծում արտաքին գնահատման համար: Չնայած դրան, որոշ կարևոր գործընթացներ դեռևս ուշադրությունից դուրս են մնացել:

Ներքին և արտաքին շահակիցների համար գործունեության թափանցիկության ապահովման գործող ռեկտորի հաշվետվության մեխանիզմը չի ապահովում գործընթացների որակի մասին տեղեկատվություն: ԻՎ-ն և գործընթացների որակական վերլուծություններ չեն հրապարակվում շահակիցների համար, ինչը հանգեցնում է ՈԱԿ-ի աշխատանքների մեկուսացման:

Եզրահանգում: Հաշվի առնելով, որ ՈԱ գործող մեխանիզմները դեռ չեն ապահովում ՈԱ հայեցակարգի և քաղաքականության լիարժեք իրականացումը, ՈԱԿ անձնակազմի մասնագիտական գործիմացության ոչ բավարար մակարդակը, որակի ապահովման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների պասիվ ներգրավվածությունը, գործընթացների արդյունավետության որակական գնահատման և դրանց արդյունքում վերանայման աշխատանքների բացակայությունը, ՈԱԿ նախատեսած ամբողջական տեղեկատվության հավաքագրման և գործունեության որակական արդյունքների հրապարակման խիստ անհրաժեշտությունը՝ կարելի է փաստել, որ որակի ապահովման համակարգը դեռ բավարար չափով չի նպաստում գործընթացների շարունակական բարելավմանը և որակի մշակույթի ձևավորմանը:

Եզրակացություն: Ակադեմիայի ինստիտուցիոնալ կարողությունների համապատասխանությունը չափանիշի պահանջներին գնահատվում է **անբավարար**:

ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԻ

ՉԱՓԱՆԻՇ	ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
1. Առաքելությունը և նպատակները	**Բավարար է**
2. Կառավարումն ու վարչարարությունը	**Բավարար է**
3.Մասնագիտության կրթական ծրագրերը	**Բավարար է**
4. Ուսանողները	**Բավարար է**
5.Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմը	**Բավարար է**
6. Հետազոտությունը և զարգացումը	**Անբավարար է**
7. Ենթակառուցվածքը և ռեսուրսները	**Բավարար է**
8.Հասարակական պատասխանատվությունը	**Բավարար է**
9. Արտաքին կապերը և միջազգայնացումը	**Անբավարար է**
10. Որակի ներքին ապահովման համակարգը	**Անբավարար է**

Փորձագիտական խմբի ղեկավարի ստորագրությունը

25.07.2017թ.

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐԱԿԱՆՆԵՐԸ

Գագիկ Քթրյան – 2007թ-ին ավարտել է ԵՊՀ-ն՝ ստանալով ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի մագիստրոսի աստիճան: 2010թ-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը «Բազմաչափ բազմանդամային միջարկման և Գասքա-Մաեզթուի վարկածի վերաբերյալ" թեմայով և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2008թ.-ից առ այսօր դասավանդում է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում: 2012-մինչ օրս համատեղությամբ դասավանդում է ԵՊՀ մագիստրատուրայում: 2011-2015թթ. եղել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի որակի ապահովման կենտրոնի ղեկավար և կրթական բարեփոխումների գծով պրոռեկտոր: 2015թ.-ից զբաղեցնում է ՀՀ ՊՆ մարշալ Ա.Խանփերյանցի անվան ռազմական ավիացիոն համալսարանի որակի ապահովման և վերլուծության բաժնի պետի պաշտոնը: 2013 և 2014թթ. ղեկավարել է Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանում ինքնավերլուծության գործընթացը: 2013 և 2014թթ. մասնակցել է Եվրասիա միջազգային համալսարանի հավատարմագրման և Հյուսիսային համալսարանի լրացուցիչ ուսումնասիրությունների գործընթացներին որպես փորձագետ, ինչպես նաև Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի հավատարմագրման գործընթացին որպես համակարգողի օգնական:

Յուլիա Դուբրովսկայա - ՌԴ Քաղաքացիական պաշտպանության, արտակարգ իրավիճակների և տարերային աղետների հետևանքների վերացման նախարարության «Սանկտ-Պետերբուրգի պետական հրշեջ ծառայության համալսարանի» ուսումնամեթոդական կենտրոնի պետի տեղակալ, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ: Ավարտել է Կրասնոյարսկի պետական մանկավարժական և Լենինգրադի Ա.Պուշկինի անվան պետական համալսարանները: 2015թ.-ից ՌԴ կրթության և գիտության նախարարության կրթության և գիտության ոլորտի վերահսկողության դաշնային ծառայության հավատարմագրված փորձագետ է: 2015-2016 թվականներին որպես փորձագետ մասնակցել է հավատարմագրման 15 գործընթացների:

Սուրեն Դանիելյան – 1997թ. ավարտել է Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը և ստացել «Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչ, փրկարարական գործ» որակավորումը: 2001թ.-ից մանկավարժական գիտությունների թեկնածու է, 2004-ից՝ ՖԿՀՊԻ կիրառական մարզաձևերի ամբիոնի դոցենտ, փրկարարական պատրաստության գլխավոր մասնագետ: Մասնակցել է որակավորման բարձրացման և վերապատրաստման մի շարք դասընթացների. ԱՄՆ-ից ժամանած ՃԿ մասնագետների կողմից անցկացված «Քաղաքացիական պաշտպանություն» թեմայով, Ճապոնիայի Տոկիո քաղաքում «Ռիսկերի կառավարում» թեմայով, «Բարձրագույն կրթության ժամանակակից հիմնախնդիրներ և որակի ապահովում» թեմայով, «TWINNING» կրթական բարեփոխումների ուսուցողական ծրագրով:

Սոնա Սարգսյան - 2004թ. ավարտել է Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանը (ԵՊԲՀ), շնորհվել է օրդինատորի աստիճան ԼՕՌ հիվանդություններ մասնագիտությամբ: Բժշկական գիտությունների թեկնածում է, դոցենտ: 2014թ.-ից դասավանդում է ԵՊԲՀ ԼՕՌ հիվանդությունների ամբիոնում: 2012թ.-ից առ այսօր աշխատում է «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոնում: Մասնակցել է տարաբնույթ վերապատրաստումների, փոխանակման ծրագրերի, գիտաժողովների ՀՀ-ում և

արտերկրում: Ուսումնական ձեռնարկների և դասագրքերի հեղինակ է: Եղել է Հայաստանի ֆիզկուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի հավատարմագրման փորձագիտական խմբի անդամ:

Միշա Թադևոսյան - Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող: 2015թ.-ից ՀՊՄՀ Կրթության, հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի Ուսանողական գիտական ընկերության (ՈՒԳԸ) նախագահ: Անցել է մի շարք վերապատրաստումներ. «Որակի ապահովում», «Շոտլանդիայում ուսանողների մասնակցությունը որակի ապահովման գործընթացներում» (sparqs), «Культурно-историческая психология и деятельностный подход в образовании» Մոսկվայի պետական հոգեբանկամանավարժական համալսարանում (МГППУ), Ուսանող-փորձագետների պատրաստման դասընթաց «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամում (ՈԱԱԿ): Եղել է Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի հավատարմագրման փորձագիտական խմբի անդամ:

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՅՑԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ԱԻՆ Ճգնաժամային կառավարման ակադեմիայի ինստիտուցիոնալ հավատարմագրման նպատակով փորձագիտական գնահատում իրականացնող խմբի այցի

15.05.2017թ.–18.05.2017թ.

	15.05.2017 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ակադեմիայի ռեկտորի հետ	9:15	9:45	30 րոպե
2	Հանդիպում ակադեմիայի գործունեությունը համակարգող ԱԻՆ ներկայացուցիչների հետ	10:00	10:45	45 րոպե
2	Հանդիպում պրոռեկտորների հետ	11:00	11:45	45 րոպե
3	Հանդիպում ինքնավերլուծությունն իրականացրած աշխատանքային խմբի հետ	12:00	13:00	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:15	14:00	45 րոպե
5	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում (գիտխորհուրդ, ուս.մաս)	14:15	15:00	45 րոպե
6	Հանդիպում շրջանավարտների ներկայացուցիչների հետ	15:15	16:00	45 րոպե
7	Հանդիպում գործատուների ներկայացուցիչների հետ	16:15	17:00	45 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:15	18:30	75 րոպե

	16.05.2017 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ուսումնական մասի ղեկավարի և ֆակուլտետների դեկանների հետ	9:30	10:15	45 րոպե
2	**Հանդիպում ստորաբաժանումների ղեկավարների (տեղեկատվական տեխնոլոգիաներ, արտաքին կապեր, շրջանավարտների հետ կապ և զբաղվածություն, գրադարան) և լաբորատորիաների վարիչներ հետ**	**10:30**	**11:15**	**45 րոպե**
3	**Հանդիպում ինքնավերլուծությունում ներկայացված երեք ՄԿԾ-ների պատասխանատուների, ՄԿԾ-ներն իրականացնող ամբիոնների վարիչների և ծրագրերը մշակող խմբի հետ (8-10 հոգի)**	**11:30**	**12:15**	**45 րոպե**
4	Փաստաթղթերի ուսումնասիրություն ամբիոններում, ռեսուրսների դիտարկում	12:30	13:30	60 րոպե
5	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:45	14:30	45 րոպե
6	Հանդիպում հիմնական պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	14:45	15:30	45 րոպե
7	Հանդիպում համատեղությամբ և ժամավճարային հիմունքով պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների հետ (8-10 հոգի)	15:45	16:15	30 րոպե

8	Հանդիպում ամբիոնների վարիչների և ցիկլերի ղեկավարների հետ	16:30	17:15	45 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե
	17.05.2017թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում ՈՒԽ և ՈՒԳԸ ներկայացուցիչների հետ (6-8 հոգի)	9:30	10:15	45 րոպե
2	Հանդիպում բակալավրիատի ուսանողների հետ (8-10 հոգի)	10:30	11:30	60 րոպե
3	Հանդիպում հեռակա բաժնի ուսանողների հետ (8-10 հոգի)	11:45	12:45	60 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:00	13:45	45 րոպե
5	Հանդիպում մագիստրատուրայի ուսանողների հետ (8-10 հոգի)	14:00	14:45	45 րոպե
6	Փաստաթղթերի ուսումնասիրություն, ռեսուրսների դիտարկում. այցելություն Լուսակերտի բազա	15:00	17:00	120 րոպե
7	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:00	18:30	90 րոպե

	18.05.2017 թ.	*Մեկնարկ*	*Ավարտ*	*Տևողություն*
1	Հանդիպում որակի ապահովման բաժնի աշխատակիցների հետ	9:30	10:30	60 րոպե
2	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	10:45	11:15	30 րոպե
3	Փաստաթղթերի ուսումնասիրություն (ՈԱ բաժին), ռեսուրսների դիտարկում	11:30	12:30	60 րոպե
3	Բաց հանդիպում փորձագիտական խմբի հետ	12:45	13:15	30 րոպե
4	Ընդմիջում, փորձագիտական խմբի քննարկումներ	13:30	14:15	45 րոպե
5	Հանդիպում փորձագիտական խմբի կողմից ընտրված կազմի հետ	14:30	15:00	30 րոպե
6	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	15:15	16:15	60 րոպե
7	Հանդիպում ակադեմիայի ռեկտորի հետ	16:30	17:15	45 րոպե
8	Փորձագիտական խմբի փակ հանդիպում	17:30	18:30	60 րոպե

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՑԱՆԿ

	ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԸ	ՁԱՓԱՆԻՇ
1.	ՌԾ մշակման աշխատանքային խմբի ստեղծման հրաման թիվ ՈԱ-7, 12.12.2013թ.	1ա
2.	ԱԽ, ԳԽ, ռեկտորատի և ֆակուլտետային խորհրդի կազմը	1բ, 2բ
3.	Ուսուցման գործատուների հաշվետվությունները, ֆակուլտետի կամ ինստիտուտի գիտ. խորհրդի արձանագրություններ, որտեղ քննարկված են գործատուների առաջարկությունները	1բ
4.	Հարցաթերթային հարցման արդյունքների վերլուծություն	1բ
5.	Սահմանված էթիկայի կանոններ+	2ա
6.	Մշակութային գործընթացը կարգավորող, համակարգող պրոռեկտորի գործունեության վերջին 3 տարիների հաշվետվություն	2ա
7.	ՈՒԽ, ՈՒԳԸ հաշվետվություններ	2ա
8.	Կարճաժամկետ, միջնաժամկետ պլանավորման պլանների մշտադիտարկման վերաբերյալ փաստաթղթային հիմքեր	2գ
9.	Միջավայրային գործոնների ուսումնասիրություններ	2գ
10.	Ներքին աուդիտի անցկացման արդյունքները	2ա, 2դ
11.	Հարցումների և հաշվետվությունների հիման վրա կատարված բարեփոխումների մասին վկայող հիմքեր	2զ
12.	ՄԿԾ մշտադիտարկման և ծրագրերի վերանայման կարգը	2զ
13.	Այլ առաջատար բուհերի փորձի ուսումնասիրություն ՄԿԾ մշակման հետ կապված	3ա
14.	ՄԿԾ-ի կազմման խմբի կազմ՝ հասկանալու համար, թե ովքեր են ընդգրկվել	3ա
15.	Մագիստրատուրայի ՄԿԾ-ի օրինակ	3ա
16.	Դասընթացի ծրագրի օրինակ	3ա
17.	Շրջանավարտների բավարարվածությունը վկայող հարցումների ուսումնասիրությունները և դրանց արդյունքները	3բ
18.	Այլ հարցումների, դասալսումների վերլուծություններ / ուղարկվել է մեկ վերլուծություն/	3բ
19.	Դասալսումների վերլուծություններ	3բ
20.	Ակադեմիական ազնվության կանոնակարգը	3գ
21.	Գրագողության դեմ պայքարի մեխանիզմները նկարագրող փաստաթուղթ	3գ
22.	Ամբիոնների և ֆակուլտետի խորհուրդների նիստերի արձանագրություններ ՄԿԾ մշտադիտարկման և ընթացիկ գնահատման վերաբերյալ	3ե
23.	Քոլեջի հետ պայմանագիրը	4ա
24.	Ակադեմիայի դիմորդի ուղեցույց	4բ
25.	Ակադեմիայում ուսումնական խորհրդատուի գործունեության կանոնակարգ	4գ
26.	Լրացուցիչ պարապմունքների և խորհրդատվության համար հաստատված ամբիոնների ժամանակացույցեր	4գ

27.	ՈԱԿ իրականացած ուսանողական հարցումների վերլուծություն խորհրդատվական ծառայությունների հետ կապված	4գ
28.	ՀՀ ԱԻ նախարարի 2012թ փետրվարի 2-ի «Ակադեմիայի շրջանավարտներին աշխատանքով ապահովելու մասին» հրաման	4ե
29.	Մագիստրոսական թեզի կատարման մեթոդական ցուցումներ	4զ
30.	Ուսանողական գիտաժողովների ձեռնարկ	4զ
31.	ՈւՕ կազմի հաստիքների ձևավորման նորմատիվային բազա	5ա
32	«Պրոֆեսորադասախոսական կազմի հավաքագրման, ընտրության և մասնագիտական զարգացման» քաղաքականություն ու ընթացակարգեր	5ա
33.	ՊԴԿ և ուսումնաօժանդակի պաշտոնի անձնագիր	5ա
34.	ՊԴ գիտամանկավարժական գործունեության վարկանիշային թերթիկ	5գ
35.	Փոխադարձ դասալսման թերթիկ	5գ
36.	ՊԴԿ վերապատրաստման կրթագիտական ծրագիրը	5դ
37.	ՊԴ կազմի ներհոսքի և արտահոսքի ցուցանիշներ վերջին 5 տարվա համար	5ե
38.	Հարցաթերթիկների վերլուծության ցուցանիշները՝ կապված բավարարվածության հետ	5է
39.	Վերապատրաստումների հիմքերը՝ վարչական և ուսումնաօժանդակ կազմի	5է
40.	Ամբիոնների հետազոտական թեմաներ	6ա
41.	2017-2022 թթ. գիտահետազոտական գործունեության զարգացման հայեցակարգը	6ա
42.	«Ուսումնական և գիտահետազոտական գործունեության մշտադիտարկում» փաստաթուղթ	6բ
43.	Ֆակուլտետների և ամբիոնների աշխատանքային պլաններ	7ա
44.	ՄԿԾ մոնիթորինգի կարգ	7դ
45.	Գործավարության կարգ	7ե
46.	Ֆակուլտետի և ԳԽ նիստերի արձանագրություններ	8ա
47.	ՊԴԿ և ամբիոնի վարիչների հաշվետվությունների օրինակներ	8ա
48.	Ֆինանսական աուդիտի իրականացման կանոնակարգ, Ֆինանսական աուդիտի եզրակացություն	8ա
49.	Բուկլետներ, Ճգնաժամ հաղթահարողները թերթի օրինակներ	8բ
50.	ԱԻՆ-ի համար լրացուցիչ կրթական ծրագրերի, վերապատրաստումների և որակավորման բարձրացման դասընթացների ծրագրերի փաթեթներ	
51.	Միջազգային կապերի պայմանագրեր	8գ
52.	Միջազգային գիտաժողովների և սեմինարների մասնակցած դասախոսների ցուցակ	8գ
53.	Վարչական և ՊԴԿ-ի գործուղումների հաշվետվություններ	8գ
54.	Անգլերենի դասընթացի ծրագրի փաթեթը և մասնակիցների ցանկը	8դ
55.	ՈԱ կենտրոնի փաստացի աշխատակիցների ցանկը	10բ
56.	ԳԽ որակի ապահովման մշտական հանձնաժողովի կազմը և գործունեության հիմքեր	10գ

57.	ՈԱ կենտրոնի աշխատանքային պլան-ժամանակացույց	10դ
58.	Ֆակուլտետների ուսումնական և գիտահետազոտական գործունեության գնահատման նպատակով պարբերաբար իրականացվող ներքին ստուգումների արդյունքները	10զ
59.	Մագիստրոսական թեզերի թեմաները վերջին 3 տարիների համար	
60.	Բակալավրական ավարտական աշխատանքներին ներկայացվող պահանջները	
61.	Մագիստրոսական թեզերին ներկայացվող պահանջները	
62.	Մագիստրոսական թեզերի գնահատման հաստատված չափանիշները	
63.	Մագիստրոսական թեզեր	
64.	Պրակտիկայի հաշվետվություններ	
65.	ՃԿ բակալավրատի խմբի ուսումնական պրակտիկայի ծրագիր	
66.	Անգլերեն լեզվի վերապատրաստման դասընթացի ծրագիր	
67.	ՈՒԽ տարեկան հաշվետվություն	

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԱԻՆ ՃԿՊԱ մասնաշենքում.

1) Ճգնաժամային կառավարման մինի-կենտրոն «911 ծառայության» դիսպետչերների ուսուցման համար
2) Լեռնափրկարարական և կենսաբանական պաշտպանության կաբինետ
3) Առաջին օգնության կաբինետ
4) Ջրասուզական սարքեր
5) Լսարանային ֆոնդ
6) Նիստերի դահլիճ
7) Բուժկետ
8) Բուֆետ
9) Փրկարարական ուսումնական գործիքների լրակազմեր հատուկ առանձնացված տարածքում
10) Փրկարարական ուսումնական մեքենա՝ հագեցած գույքով
11) Գրադարան
12) 2 համակարգչային սենյակ
13) Ամբիոններ
14) ՈՒԽ/ՈՒԳԸ սենյակ, համակարգիչ չկա

«Լուսակերտ» վարժահրապարակում.

1) Հյուրատուն
2) Պահեստներ շինանյութի և փրկարարական գործիքների համար
3) Առանձնացված տարածք գույքի խնամքի և մաքրման համար
4) Արգելառուղի ֆիզիկական պատրաստության համար
5) Ուսումնական ավտոմեքենաներ ճանապարհային պատահարների մոդելավորման համար
6) Գնացքի վագոններ երկաթուղային վթարների մոդելավորման համար
7) Ուղղաթիռի մակետ վարէջքներ կատարելու և բեռների բարձրացումը մոդելավորելու համար
8) Փլուզումների պայմաններում աշխատելու համար ուսումնական մարզահրապարակ
9) Ալպինիստական գործողություններ կատարելու համար նախատեսված աշտարակ
10) Հավասարակշռության, ճկունության և բարձրության վրա աշխատանքներ կատարելու մարզասարք
11) Ստորգետնյա անցումներ մթության մեջ գործողություններ, ծխապատ տարածքներում աշխատելու համար նախատեսված տարածք
12) Փրկարարների հանգստի և վերականգնողական կենտրոն

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՄՈՒՀ-Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԻՆ – Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱԳԿՑ - առաջընթացի գնահատման կողմնորոշիչ ցուցանիշներ
ԱՄՆ – Ամերիկայի Միացնյալ Նահանգներ
ԲՈՀ – Բարձրագույն որակավորման հանձնաժողով
ԲՈՒՀ -Բարձրագույն ուսումնական հաստատություն
ԲԿԵՏ – Բարձրագույն կրթության եվրոպական տարածք
ԳԱՑ - գնահատման առանցքային ցուցանիշներ
ԳԽ – Գիտական խորհուրդ
ԵՊՀ – Երևանի պետական համալսարան
ԿԳՆ - Կրթության և գիտության նախարարություն
ՀԲ – Համաշխարհային բանկ
ՀՀ - Հայաստանի Հանրապետություն
ՀԱՊՀ – Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան
ՀՊՄՀ – Հայկական պետական մանկավարժական համալսարան
ՀՊՏՀ – Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
ՃԿ - Ճգնաժամային կառավարում
ՃԿՊԱ - Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա
ՄԿԾ - Մասնագիտության կրթական ծրագիր
ՄՈՒՀ - Մասնագիտական ուսումնական հաստատություն
ՈԱ - Որակի ապահովում
ՈԱԱԿ - Որակի ապահովման ազգային կենտրոն
ՈԱԿ - Որակի ապահովման կենտրոն
ՈԱՇ - Որակավորումների ազգային շրջանակ
ՊԴԿ – Պրոֆեսորադասախոսական կազմ
ՊԴ – Պրոֆեսորադասախոսական
ՊԻԳԲ – Պլանավորում-իրականացում-գնահատում-բարելավում
ՌԴ – Ռուսատանի դաշնություն
ՌԾ - Ռազմավարական ծրագիր
ՏԻՄ – Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏՏ – Տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՈԻԳԸ - Ուսանողական գիտական ընկերություն
ՈԻԽ – Ուսանողական խորհուրդ
ՖԿՀՊԻ - Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտը